891.522-2
Z-96

XIII, 2.

Γ·x

891.542-2
Հ-26
2861
19 NOV. 2011

ՀԱՅԿՈՒՆԻ

ԿԱՑԻՆԸ ՔԱՐԻՆ ԿՊԱԻ

(Դրամատիկական պատկերներ չորս արարուածով եւ վեց պատկերով)

1001/2239

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. Մաշտոցի անվան Ձեռագրաց ինստիտուտ
Գրադարան
7/31. 1962

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ ,,ԱՐՕՐ''
1899

06 JUN 2013

37924

Дозволено Цензурою. Тифлисъ. 23 Августа 1899 г.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. *Սուքիաս աղա*, 40 *տարեկան*.
2. *Մարիամ խանում*, *նրա կինը*, 24 *տարեկան*.
3. *Գասպար*, *նրանց ծառան*.
4. *Աղախին*.
5. *Նարգիզ*, 70 *տարեկան*.
6. *Քերոբ*, *Նարգզի որդին*, 30 *տարեկան*.
7. *Շուշան*, *Քերոբի կինը*, 20 *տարեկան*.
8. *Հոռոմսիմ*, *հացթուխ*, 50 *տարին անց*.
9. *Բժիշկ*.
10. *Պրիստաւ*.

Դատաստանական եւ այլ հիմնարկութեանց ծառայողներ, քաղաքի այլ եւ այլ դասակարգերի ներկայացուցիչներ, պրիստաւներ, քաղաքապահ ոստիկաններ, զինուորական նուագածուների խումբը, ամբոխ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

(Բառակուսի մեծկակ սենեակ մի դռնով ձախ կողմից։ Յատակը գեղեցիկ։ Հանդիպակաց պատի առաջ տախտակեայ բարձրութիւն (սեղր) մեկ արշին դայնութեամբ։ Այդ տեղ փռած են փախաստներ եւ հին կապերտներ։ Պատի դէմ տուած են խոտով լեցուած բարձեր։ Մէջտեղում՝ մի բոլոր բարձ միայն։—Նոյն պատի վրայ՝ դարակ, պղնձեայ եւ ապակեայ անաններով։ Սենեակը շատ մաքուր է։ Առաստաղի մէջտեղում ապակեծածք երդիկ, որոյ տակ Շուշանը, քարգահի առաջ չոքած, աղեղնագործում է։ Գեղեցիկի վրայ՝ մի հաստ մինդարի վրայ նստած՝ Նարգիզ ճախարակ է մանում)։

ՏԵՍԻԼ Ա.

Նարգիզ եւ Շուշան.

Շուշան.

Խաթուն մայրիկ, Մարիամ խանումը քեզ ի՞նչպէս ընդունեց։

Նարգիզ.

Շատ սիրով, շատ կարեկցաբար։

Շուշան.

Ապրի մեր Հռոմխիմ աբլան։ Ինչ լաւ խորհուրդ տուեց մեզ։

Նարգիզ.

'Ի հարկէ։ Զուր չէ ասած՝ ընկնողի հալից ընկածը մենակ հասկանում է։ (Մտածում է եւ գըլուխը շարժելով) Զորս հատ կթան կով ունէի. 12 ոչխար. 4 այծ։ Մառանս ամեն տեսակ բարիքներով լիքն էր։ Իսկ այժմ՝ շաբաթական մի քանի շահի ձեռք բերելու համար՝ ստիպուած եմ ողջ օրը, շատ անգամ մինչեւ կէս գիշեր,—այս չոր տախտակի առաջ չոքել եւ մանել անվերջ մանել։ (Բազկատարած). Փառք Նրան։ (մանում է. միչ յետոյ թելը կտրվում եւ նա միացնելով)։ Անտէր մնայ. շարունակ կտրատվում է։ Մինչեւ մի քուլայ մանել պրծնելս՝ հոգիս դուրս է գալիս։

Շուշան.

Ախր ես քեզ քանի անգամ ասացի. բուրդը փթած է։ Եւ, 'ի հարկէ, շուտ շուտ պէտք է կըտրատուի։ Խաթուն մայրիկ ջան, արի դու ինձ լսիր։ Միւս անգամ այդ մարդուց էլ պատուէրներ մի՛ վերցնիլ։

Նարգիզ.

Ինչի չեմ լսում։ Բայց եթէ պատուէր տուող՝ ուրիշը չճարուեց, յետո՞յ։

Շուշան,

Աստուած ողորմած է, կը ճարուի։

Նարգիզ.

Հը՛մ. ողորմածի համար էլ նորից մարդիկ են հարկաւոր, որ դագաղը բարձրացնեն։

Շուշան.

(Մեկուսի) Անիրա՛ւ մարդ, խեղճ սկեսրոջս իրան ձեռքին կատարեալ գերի է չինել։ (Բարձր) Գոնէ տուած վարձն էլ՝ վարձ լինէր. ո՛վ էր այնքան հոգում։

Նարգիզ.

Զաւակս, ի՞նչ կարող ենք անել։ Ասած է՝ վեր ընկած եզան վրայ ամեն մարդ էլ իրան դանակն է բարձրացնում։ Հօ ամէն մարդ էլ Հոռոմսիմ չ'ի լինիլ, որ ուրիշի համար . . .

Շուշան.

Ճշմարիտ ես ասում. քա՛։ Ցիրաւ, եթէ Հոռոմսիմ աբլան չլինէր, մենք ցամաք հացի փող անգամ չպիտի կարողանայինք հասցնել մեր երեխաներին։

Նարգիզ.

Ամենաբարի Աստուածը Հոռոմսիմին շատ ու շատ արեւշատութիւն տայ։ (Հոռոմսիմը մտնում է)։

ՏԵՍԻԼ Բ.

Առաջինները եւ Հոռոմսիմ.

Նարգիզ.

Բարով հազար բարի, Հոռոմսիմ ջան։

Հոռոմսիմ.

Շնորհակալ եմ։ (Շուշանը ուզում է վեր կենալ)։ Նստիր, մի՛ վեր կենար։ (Շուշան նստած տեղից ձեռքը պարզում է 'ի նշան հաւքոյրի)։ Ապ-

րիս, շնորհակալ եմ։ Նարգիզ, Մարիամ խանումին տեսա՞ր։

Նարգիզ.

Հա. տեսայ։—Նստիր, ինչի՞ ես կանգնել։

Հռոմսիմ.

Ցնում եմ։ Նա ինձ կանչել է։

Շուշան.

Տեսնես ինչի՞ համար։

Նարգիզ.

Ազջի, երեւի Քերոբիս գործի համար կը լինի, ա՛յ։

Հռոմսիմ.

Ես էլ եմ այդպէս կարծում։ Դրա համար էլ եկայ, որ խմանամ թէ՝ ինչ՞ խօսեցիք, ինչ՞ չխօսեցիք։

Նարգիզ.

Ա՛յ, մի բոպէ նստիր, պատմեմ։

Հռոմսիմ.

(Նստում է) Դէհ մէկ պատմիր տեսնեմ։

Նարգիզ.

Ինչպէս որ դու ասել էիր, մեր գրութիւնը, տեղն ու տեղը, իրան պատմեցի։ Ուշադրութիւնով լսում էր։ Վերջն էլ խնդրեցի, որ Սուքիաս աղին միջնորդէ՝ Քերոբիս համար մի գործ՝ կա՛մ իրան գործերումը, կա՛մ ուրիշի մօտ։

Հռոմսիմ.

Խոստացա՞ւ միջնորդել։

Նարգիզ.

Ի՞նչպէս չէ։—Հռոմսիմ ջան, դեռ քեզանից էլ փոքր ինչ նեղացաւ կարծես։

Հռոմսիմ.

Ինչո՞ւ համար։

Նարգիզ.

Ա՛նչնորհք,—ասում է,—եթէ որ նա ձեր դրութեանը տեղեակ էր,—ինչո՞ւ,—ասում է,—աւելի վաղ ինձ իմաց չէր անում.

Հռոմսիմ.

Նարգիզ ջան, դրուսան ասեմ, ես էլ ուշ գալուխի ընկայ։

Շուշան.

Վնաս չունի։ Ուշ լինի՝ նուշ լինի։

Հռոմսիմ.

Ի հարկէ։ Ա՛յ, հիմի դու տեսնում ես, Նարգիզ ջան. ախր մինչեւ երեխան լաց չլինի, մայրը նրան ծիծ չի տալ։

Նարգիզ.

Ազջի, չո՛ւ, դէհ ես ամաչում էի։ Հաւատացնում եմ քեզ։ Ախր ես իմ օրումս Մարիամ խանումին չէի տեսել։

Հոռոմսիմ.

Ինչ արած, որ չէիր տեսել։ Նա շատ խոնարհ, բարեսիրտ եւ Աստուածավախ կնիկ է։

Նարգիզ.

Երեւում է, աղջի, պարզ երեւում է։ Բայց ես վախենում էի թէ՝ մարդն յանկարծ տանը լինի, էլ ամօթիցս չպիտի կարողանայի թէ բերանս բաց անեմ։ Հօ դու իմ բնութիւնը իմանում ես։

Հոռոմսիմ.

Ամաչելու ինչ կայ. ուզողին՝ մէկ ամօթ. չուզողին՝ երկու ամօթ։

Նարգիզ.

Ճշմարիտ է։ Բայց չորերս էլ այսպէս՝ պատառոտած, կարկատուած։

Շուշան.

Խաթուն մայրիկ ջան, մեծ մարդիկ հազիւ թէ այդպէս բաների վրայ ուշք դարձնեն։—Մի՞թէ նըբանք չեն իմանում, որ . . .

Հոռոմսիմ.

Ապրի Շուշանս։ Տեսնո՞ւմ ես, Նարգիզ, սա քեզանից խելօք է դատում։ Բայց խաթրդ չմնայ հա՞։

Նարգիզ.

Ընդհակառակը,—Մի՞թէ Շուշանիս խելօքութիւնը ես նո՞ր եմ իմանում։

Հոռոմսիմ.

Ինչ եւ իցէ։ Շուշան ջան, ձեռքիդ գործը ե՞րբ կը վերջացնես։

Շուշան.

Լուացքի պատճառաւ այսօր չկարողացայ։ Վաղը մինչեւ կէս օր կը վերջացնեմ։ Իսկ եթէ չտապեցնում ես, ուզո՛ւմ ես, գիշերս նստեմ...

Հոռոմսիմ.

Ո՛չ, ո՛չ, աւելորդ է։—Յոգնած, բէզարած մէկ էլ ի՞նչ հարկ կայ . . .

Շուշան.

Լաւ։—Ինչպէս որ ուզում ես։

Հոռոմսիմ.

Շուշան ջան, մի նոր, աւելի ձեռնտու պատուէր եմ ճարել քեզ համար, ա՛յ։

Շուշան.

Շատ շնորհակալ եմ։

Նարգիզ.

Աստուած էլ քեզ այդպէս շուտ շուտ օգնութեան հասնի, Հոռոմսիմ ջան։

Ամէն։ Դէհ ես գնացի։ Մնաք բարով։

Նարգիզ.

Գնաս բարով, դուրբան։

Շուշան.

(*Ուզում է վեր կենալ*):

Հառոմսիմ.

Նստիր։ Շնորհակալ եմ։ (Գնում է):

Շուշան.

Խաթուն մայրիկ, Մարիամ խանումը չասա՞ց թէ՝ ե՛րբ գնաս, որ մարդուն պատասխանը իմանաս։

Նարգիզ.

Աղջի, հա՛, իրա՛։ Ինչ լաւ միտս ձգեցիր։

Շուշան.

Ինչ՞ կայ։

Նարգիզ.

Սխր Մարիամ խանումն ինձ ասաց թէ՝ դու մէկ էլ նեղութիւն մի քաշիր։ Կարելի է,—ասաց,— ես ինքս գամ, քեզ իմաց անեմ։

Շուշան.

Յետոյ՝ դու նրան մեր տան տեղը ասե՞լ ես։

Նարգիզ.

Շիտակն ասած՝ ինքը որ չհարցրեց։ Ես էլ ամաչեցի։

Շուշան.

Քա՛, այստեղ ամաչելու ինչ՞ կայ։ Դուն էլ զարմանալի մարդ ես։ Կարծես նորահարս լինիս։

Նարգիզ.

Սխալուեցայ, որդի, ինչ՞ արած։ (Մեկուսի) Թիւ։ (Բարձր) Շուշան ջան, շատ կարելի է, որ եթէ Հառոմսիմին կանչել է... հը՞մ. խելքդ ինչ է կտրում։

Շուշան.

Անպատճառ, անպատճառ այդպէս կը լինի։ Հառոմսիմն կանչել է, որ միասին...

Նարգիզ.

Դէհ դու մէկ ձեռաց սենեակը կարգի բեր։ (Շտապ վեր է կենում)։ Ես էլ գնամ չորերս թափ տամ։ (Գնում է):

Շուշան.

Լաւ. լաւ։ Դէհ գնա՛։ (Շտապ շտապ սինդարներն ու բարձերը դրստում է եւ այլն։ Վերջումն էլ զլխի ծածկոցը (եսպուղ) ծածկելով դուրս է գնում։ Դռան մոտ հանդիպում է Նարգիզին)։ Հը՞մ. գա՞լիս են։

Նարգիզ.

Հա, հա։ Փողոցի ծայրումն են։ Գլխիս չալը ո՞բտեղ ես դրել։ (Մտնում է):

ՏԵՍԻԼ Գ.

Շուշան եւ Նարգիզ.

Շուշան.

Անկողինների ծալքի վրայ էր։ (Շտապով գըրում է):

Նարգիզ.

Քա, իմ օրումս այսպէս խանում կնիկ տեսած չէի։ Թեւքիցս բռնած՝ սանդուղքներով ինքը ինձ բարձրացրեց։ Տարաւ սենեակը՝ կողքին նստեցրեց։ Մի ժամի չափ էլ, անուշ անուշ, հետս խօսեց։ (Շուշանը շալը ձեռքին մտնում է)։

ՏԵՍԻԼ Դ.

Նարգիզ եւ Շուշան.

Շուշան.

(Շալը Նարգզի գլխին ձգելով)։ Մօտեցել են։

Նարգիզ.

(Շտապով դուրս է գնում)։

Շուշան.

(Ձեռքերը ծալած՝ դռան ետեւի կողմում սպասում է)։

Նարգիզ.

(Դռից) Հրամեցէք։ Շատ շնորհակալ եմ, որ արժան համարեցիք . . . (մտնում են նախ Մարիամը, յետոյ Նարգիզ եւ յետոյ Հոռոմսիմ)։

ՏԵՍԻԼ Ե.

Շուշան, Մարիամ, Նարգիզ եւ Հոռոմսիմ.

Մարիամ.

(Շուշանին) Բարով. (Ձեռքը պարզում է)։

Շուշան.

(Կռանում է ձեռքը համբուրելու)։

Մարիամ.

(Ձեռքը թողնում) Շատ ապրիս։ Շնորհակալ եմ։

Նարգիզ.

(Մարիամին) Հրամեցէք։ (Շուշանին, կամացուկ)։ Աղջի, բժբուլ բարձը . . .

Շուշան.

(Շուշանը բարձրանալ է ուզում)։

Մարիամ.

Հարկաւոր չէ։ Շնորհակալ եմ։ Ա՛յ, այսպէս լաւ է։ (Նստում է)։ Մայրիկ, դու էլ նստիր։—Նըստի՛ր, Հոռոմսիմ։ (Նարգիզ աջ կողմն է նստում, Հոռոմսիմ ձախ կողմը։—Շուշանը պատի առաջ կանգնած է)։ Անունդ Շուշան է։ Այնպէս չ՞է։

Շուշան.

(Գլխով դրական նշան է անում)։

Հոռոմսիմ.

(Մարիամին, կամացուկ)։ Գիւղական սովորութիւնով մեծերի հետ սրանք . . .

Մարիամ.

Իմանում եմ։ Ձեն խօսում։ Մայրիկ, հարսիդ իրաւունք տուր, թող գոնէ նստի։

Նարգիզ.

Ինչպէս կը հրամայէք։ Աղջի, նստի՛ր.

Շուշան.

(Սառաջ է գալիս եւ կռանում ձեռքն հարքուրելու):

Մարիամ.

(Ձէ թողնում). Շնորհակալ եմ, շնորհակալ։ Գնա, նստիր։ (Շուշանը անկիւնում նստում է): Մայրիկ, եկայ, որ թէ առնդ տեսնեմ եւ թէ, միեւ նոյն ժամանակ, ամուսնոյս պատասխանը քեզ հաղորդեմ։

Նարգիզ.

Շատ շնորհակալ եմ։ (Շուշան նշանացի գոհունակութիւն է յայտնում):

Մարիամ.

Որդեակդ մասին՝ ամուսնոյս հետ խօսեցայ...

Նարգիզ.

Հա, զուրբան. (հեռաֆրֆրվում է իկիր եւ Շուշանը):

Մարիամ.

Նա ասաց. որ այստեղ պատրաստակ գործ չունի։ (Նարգիզ եւ Շուշան տխրում են): Ուրիշների մօտ էլ,—ասաց,—հազիւ թէ ճարուի։ (Նարգիզ եւ Շուշան աւելի են տխրում): Բայց... (ուրախութեան նշաններ Նարգզի եւ Շուշանի կողմից) ա-

մուսինս ասաց, որ այստեղից 40 վերստ հեռու մի գիւղում՝ իրան վարպետ է հարկաւոր։—Եթէ որդիդ ուզում է...

Նարգիզ.

Ի հարկէ կուզենայ։ (Շուշան նշանացի հաճայնութեան նշան է անում):

Մարիամ.

Ասում էիր՝ որդիդ լաւ վարպետ է, չէ՞։

Նարգիզ.

Շատ լաւ վարպետ է։ (Շուշան նշանացի նոյնն է վկայում):

1001 / 9939

Հոռոմսիմ.

Մինչեւ այս ողոցող մաշինի լոյս ընկնելը, Քեռրոբը կարգին փող էր աշխատում։

Նարգիզ.

Հրամերէք, կարգին։ Բայց երբ այդ անտէր մաշինան...

Մարիամ.

Շատ լաւ, շատ լաւ։ Թող ուրեմն որդիդ գայ, անձամբ ամուսնոյս տեսնի...

Նարդիզ.

Շատ բարի։ Շատ շնորհակալ ենք։

Հոռոմսիմ.

Մալիամ խանում, աղան չասա՞ց թէ վարձը ո՛րքան է լինելու։

Հայ. Մասնաւոր Գրադարան Ս. Գրիգոր Լուսաւորչի Եկեղեցի Վանքի 7/12 1922

Նարգիզ.

Հոռոմսիմ ջան, դա արդէն աղայիս իրան դիտ-նալիքն է։

Մարիամ.

Ոչ, ոչ։ Վարձն էլ որոշուած է։ Զրի բնակարան, վառելիք, ճրագ. օրական մէկ ու կէս մանէթ էլ փող։

Նարգիզ.

Շատ լաւ.. շատ եւ շատ շնորհակալ ենք։

Շուշան.

(Բերկրութեան նշաններ):

Մարիամ.

Զարժէ, մայրիկ, չարժէ։ (Սկսում է տունը զնեել աչքերով)։

Նարգիզ.

Հրամանքդ էլ, աղան էլ, մէկ բարձի վրայ ծերանաք. Սիմոն ծերունին դառնաք, մեռնեմ ձեզի։

Մարիամ.

Շատ շնորհակալ եմ։

Հոռոմսիմ.

Սրանք էլ, ես էլ՝ մեղաւոր բերաններովս Աստծուց խնդրում ենք, որ ձեր հրամանոց մէկ զօչ զաւակ պարգեւէ։

Նարգիզ.

Ամէն։

Շուշան.

(Երկնքին է նայում):

Մարիամ.

(Մի խոր հառաչ է քաշում եւ վեր կենում: Միւսները՝ նոյնպէս): Ուրեմն ցտեսութիւն։ Շուշան, հապա՛ մէկ քո ձեռագործն էլ տեսնենք։ (Շուշանը թեքում է քարգանը)։ Հիանալի գործուածք է։ Ապրիս, զօրանաս։—Տեսնո՞ւմ ես, Հոռոմսիմ։

Հոռոմսիմ.

Ես շատ անգամ եմ տեսել։ Հրամանքդ տես։

Մարիամ.

Այս է՞լ քո ճարած պատուէրն է։

Հոռոմսիմ։

Հրամերէ՛ք։

Մարիամ.

Գործողչէ՞քը։

Հոռոմսիմ.

Երե՞ք թէ չորս։ Շուշան, քանի՞ մանէթ էր։

Շուշան.

(Չորս մատներն է ցոյց տալիս)։

Մարիամ.

Ոչինչ։ Պակաս վարձ չէ։ Հոռոմսիմ, շատ շնորհակալ եմ, որ,—ինչպէս մայրիկն ասում էր, դու սրանց միշտ օգնելիս ես եղել։

Հոռոմսիմ.

Ինչ՞ արած։ Սրանից, նրանից խնդրում, ճարում եմ...—Մարդը մարդով է, չէ՞։

Մարիամ.

Ի հարկէ. շատ ապրիս։

Նարգիզ.

Եթէ որ Հոռոմսիմիս ճարած այս պատուէրները չլինէին...

Հոռոմսիմ.

Դէ՛հ լաւ, լաւ։ Շնորհակալութիւնդ քեզ համար պահիր։

Մարիամ.

Մայրիկ, դու քո ճախարակիցը ո՞ւրքան ես սանում։

Նարգիզ.

Մեռնիմ քեզի, չարաթական հինգ չահի, վեց չահի...

Մարիամ.

Այդքան քի՞չ...

Նարգիզ.

Ինչ՞ արած...

Հոռոմսիմ.

(Մարիամին ծածուկ). Ծերութեան պատճառով չէ կարողանում...

Մարիամ.

Ի հարկէ։ (Մեկուսի). Խեղճ պառաւ։ (Բարձր)։ Մայրիկի համար է՞լ պատուէրները դու ես ճարում։

Հոռոմսիմ.

Ոչ։ Նարգիզը ինքը...

Նարգիզ.

Հրամերէք։ Ինքս եմ ճարում։

Մարիամ.

Գնանք, Հոռոմսիմ։

Հոռոմսիմ.

Հրամեցէք։

Մարիամ.

Մայրիկ, Շուշան, մնաք բարով։

Նարգիզ.

(Կռանում է ձեռքը համբուրելու)։

Մարիամ.

(Ձեռքը յետ քաշելով). Մայրիկ, հագիդ չապիկ չունի՞։

Նարգիզ.

(*Ամօթահար ձայնով*). *Հարսը լուացել է։ Դեռ չէ չորացել։*

Մարիամ.

Ուրեմն մի ձե՞ռք միայն։

Հռոմսիմ.

Հապա քանի՞ ձեռք։

Մարիամ.

(*Մեկուսի*) *Ատուած իմ։* (*Շուշանին ցոյց տալով*). *Սա է՞լ։*

Հռոմսիմ.

Ի հարկէ։ Բա չքաւորութիւնը դու հանաք բա՞ն էիր կարծում։

Մարիամ.

(*Մի ոսկի միտ անելուց յետոյ*). *Լսի՛ր, մայրիկ, քեզ ի՛նչ եմ ասում։*

Նարգիզ.

Հրամայիր, զուրբան։

Մարիամ.

Հիմի եւ եթ ծառայի հետ՝ ես քեզ մի թօփ սարփինքայ կուղարկեմ...

Նարգիզ.

Ինչ՞ նեղութիւն...

Մարիամ.

Լսիր։ Զեռաց ձեւեցէք եւ ձեզ համար չապիկներ կարեցէք։ – Շուշան, լսո՞ւմ ես։

Շուշան.

(*Մօտենում է ձեռքը համբուրելու*)։

Մարիամ.

(*Զէ՛ թողնում*)։ *Շնորհակալ եմ։ Հարկաւոր չէ։ Գնանք, Հռոմսիմ։* (*Շուշանը դուրս է գնում*)։

Հռոմսիմ.

Հրամեցէք։

Մարիամ.

(*Առաջից գնալով եւ մեկուսի*)։ *Անիրաւ աշխարհ։ Ոմանք հարստութեան մէջն են փթում,— միւսները՝ չքաւորութիւնում։* (*Դնում է*)։

Հռոմսիմ.

(*Մարիամի ետեւից գնալով՝ մեկուսի*) *Եա՛հ եօթն անուն սուրբ կարապետ։*

Մարիամ.

(*Նարգզին, որ Հռոմսիմի ետեւիցն է գընում*)։ *Մայրիկ ջան, նեղութիւն մի քաշիր։ Շնորհակալ եմ։*

Նարգիզ.

(*Ցեռ դառնալով*) *Փառք քեզ Ատուած, հազար բերան փառք քեզ, որ եթէ մի կողմից հա-*

բուածում ես, միւս կողմից բժշկում նորից։ (Շուշանը շատ ուրախ մնում է)։

ՏԵՍԻԼ Զ.

Շուշան.

Խաթուն մայրիկ Ջան, սա ինչ երեւելի բան եղաւ։

Նարգիզ.

Ողորմած Աստուածը՝ դրան իրան էլ, իրան մարդուն էլ...

Շուշան.

Շատ ափսո՛ս, որ դա երեխայ չունի։ Ես իմ ձեռքովս ոսկեթել մի լա՛ւ...

Նարգիզ.

Դէհ նստիր, նստիր գործերիս նայենք։ (Նըստում է ձախարակի առաջ)։

Շուշան.

(Բարգահի առաջ նստելով)։ Ափսո՛ս, հազար ափսոս։

Նարգիզ.

(Մեկուսի). Շատ լինի փառքդ, Աստուած Ջան։ Սրա նման պատուական, Ջահիլ կնիկարմատը՝ արդեօք ինչո՞վ է արժանացել Քո բարկութեանն ու անէծքին։—(Բարձր)։ Շուշան Ջան, օրական մէկ ու կէս մանէթը՝ ամսական քա՞նի մանէթ է անում։

Շուշան.

Քա, քառասուն հինգ, քառասուն հինգ։ Յիսունից հինգ մանէթ պակաս։

Նարգիզ.

(Երկնքին է նայում)։

Շուշան.

Խաթուն մայրիկ Ջան, հոգուոյս պարտքը լինի, հէնց որ որդիդ՝ առաջին ամսականը ստացաւ—քեզ համար գլխի մի նոր շալ առնել տամ։ Այդ արդէն շատ է մաշուել։

Նարգիզ.

Աղջի Ջան, շալ չէ. ես ասում եմ, առաջ սկեսրայրիդ հանգստի վրայ մի թեթեւ քար ձգել տանք։ Կուրանամ ես, այսքան ժամանակից ի վեր խեղճուկս մեռել է։ Եւ այս չորանալի ձեռքերը չկարողացան թէ..... (Զգացվում է եւ թեւերով արտասուքը սրբում աչքերից)։

Շուշան.

(Մեկուսի) Է՛լի հանգստի քարը...։ (Բարձր)։ Լաւ, Խաթուն մայրիկ Ջան, ինչպէս որ ուզում ես։

Նարգիզ.

Այսպէս լաւ չի լինի՞լ, Շուշան Ջան։

Շուշան.

Լաւ, լաւ.

Նարգիզ.

(Մեկուսի) Ճիշտ է ասած թէ՝ սիրտն ուրախ մարդուն, ախորժակն էլ շուտ է բացվում։ (Դարակին նայելով)։ Դեռ արեւը փոքր պղնձին չէ հասել, իսկ իմ փորը հիմիկուանից վեց վեց է անում։ Երեխաները ինչ են անում։

Շուշան.

Ա՛յ, բակումը խաղում են։

Նարգիզ.

Թանապուրը սոխայրածո՞վ ես չինել, թէ....

Շուշան.

Սոխայրածով, սոխայրածով։ Իմանում եմ, որ շատ ես սիրում։

Նարգիզ.

Ապրիս։ (Դարակին նայելով)։ Քերոբս ո՞ւր մնաց։—Խեղճն, աւտաս, գործի է մտն գալիս եւ նորից չէ գտնում։

Շուշան.

Էլ չէ իմանում թէ՝ ինքը՝ քուն, բաղդն՝ արթուն։ (Քերոբ մտախոհ կերպարանքով մտնում է)։

ՏԵՍԻԼ Է.

Առաջինները եւ Քերոբ.

Նարգիզ.

Ըհը՛։ Աղջի, ահա Քերոբս էլ եկաւ։

Շուշան.

(Տեղից վեր կենալով եւ դիմաւորելով)։ Ինձ ինչ աչքալոյս կուտաս։

Քերոբ.

Խէր լինի, ինչ կայ։

Նարգիզ.

Խէր է, Քերոբ ջան, խէր է։

Քերոբ.

Ինչ կայ, է՛հ,

Շուշան.

Քա՛, իմանո՞ւմ ես ինչ կա՞յ։

Քերոբ.

Չէ՛։—

Շուշան.

Խաթուն մայրիկս քեզ համար արդէն գործ ճարեց, պրծա՛։

Քերոբ.

Իրա՞։—Քա՛, հա՞։

Նարգիզ.

Հա, բալաս, հա։

Շուշան.

Դէհ իմ աչքալոյսը տուր։

Քերոբ.

Մայրիկ Ջան, ինչ գործ։

Շուշան.

Հէնց քո գործը,—գերան սղոցել։

Քերոբ.

Իրա՞ւ։ Մայրիկ Ջան, ո՞ւմ մօտ։

Շուշան.

Խաթուն մայրիկ, չասես։ (Քերոբին). Հապա՛ խմացիր։

Քերոբ.

Սարսախ, ես հօ սուրբ չեմ։ Դէհ, պրծի՛ր։

Նարգիզ.

(Շուշանին). Զա՛ բաճճի, դէհ հերիք չարչարես երեխիս, է՛հ։

Քերոբ.

Հը՛մ. Շուտ։

Շուշան.

Սուքիաս աղի մօտ։

Քերոբ.

Ո՞ր Սուքիաս աղի մօտ։

Նարգիզ.

Քերոբ, կարծես խելքդ կորցրել ես։—Այստեղ քանի՞ Սուքիաս աղա կայ։

Քերոբ.

Ես ինչ իմանամ։—Մէկը կայ՝ շատ հարո՛ւստ, յայտնի . . .

Շուշան.

Հը՛ը. հէնց նա է ու նա։ Կնիկն էլ Մարիամ խանումը։

Քերոբ.

Չեմ ճանաչում։

Նարգիզ.

Եթէ քիչ առաջ եկած լինէիր, ինքդ էլ կը տեսնէիր։

Քերոբ.

Մարիամ խանումն այստեղ, մեր տա՞ն էր

Շուշան.

Հա՛, Քերոբ Ջան։

Նարգիզ.

Հա՛, լալաս, հա։

Քերոբ.

Ինչո՞ւ համար, է՛հ։

Նարգիզ.

Եկաւ՝ մարդուն պատասխանը մեզ յայտնեց։

Քերոբ.

(Մեկուսի). Ձեմ հասկանում։ (Բարձր): Ախր ինչ պատասխան է՞հ։

Շուշան.

Քա, կարծես, դու այսօր ցնդած լինիս։

Նարգիզ.

Աղջի, անզգամ։

Շուշան.

Ներողութիւն, խաթուն մայրիկ, ուշս վրաս չէր։ (Քերոբին): Ա՛յ, նատիր պատմեմ։

Քերոբ.

Դէհ պատմիր, տեսնեմ։ (Նստում են):

Նարգիզ.

Աղջի, կարճ կապիր։—Ես քաղցած եմ։

Շուշան.

Կարճ կասեմ, խաթուն մայրիկ, կարճ։ (Քերոբին): Խաթուն մայրիկս Մարիամ խանումին խնդրել էր, որ մարդուն . . .

Քերոբ.

Այն հարուստ, անուանի Սուքիաս աղի՞ն։

Շուշան.

Հա, հա։ Որ մարդուն միջնորդէ, քեզ մի գործի դնել։

Քերոբ.

Հա՛։ Յետո՞յ։

Շուշան.

Յետոյ՝ նա էլ միջնորդել է։ Մարդն էլ նրա միջնորդութիւնը յարգել է։ Մարիամ խանումը ինքը իրան ոտքերովը եկաւ, յայտնեց։—Հապա՞։ Դէհ իմ աչքալոյսը տուր։

Քերոբ.

Գլխիս վրայ։ Կաց, գործի լինիմ։ Մայրիկ ջան, ինչպէս եղաւ, որ դու Սուքիաս աղունց դիմեցիր։ Ախր նա ո՛վ, մենք ո՛վ։ Նա որտե՛ղ, մենք որտե՛ղ,

Նարգիզ,

Հոռոմսիմը, որդի, Հոռոմսիմը բէյլինս բացեց։

Քերոբ.

Մեր Հոռոմսիմ աբլա՞ն։

Շուշան.

Բա՛, ուրիշ քանի՞ Հոռոմսիմ աբլա ունինք։

Քերոբ.

Լաւ. նա նրանց ո՞րտեղից է ճանաչում։

Նարգիզ.

Դուն էլ բան ես ասում։ Հոռոմսիմը այս քաղաքի ո՛ղջ հարուստների տների հացթուխն է։

Շուշան.

Նա ասում է, որ 15 տարի է, այդ գործովն է պարապում։

Նարգիզ.

Բա Շուշանիս համար այս պատուէրները նա շարունակ ո՞րտեղից է ճարում։

Քեռոբ.

Հա՛։ Մայրիկ ջան, ճշմարիտն եմ ասում, ես չեմ իմանում թէ՝ այդ կնիկայ այսքան ու այսքան երախտիքի տակիցը մենք ինչպէս պէտք է դուրս գանք։ (Մեկուսի)։ Ա՛յ քեզ կնիկ. ա՛յ քեզ հացթուխ։

Նարգիզ.

Ողորմած Աստուած, ինքը նրան . . .

Քեռոբ.

Հա, քա, հա. ճշմարիտ է։ Ողորմած Աստուածը . . .

Շուշան.

Յետոյ՝ իմանո՞ւմ ես վարձդ ո՛րքան է։

Քեռոբ,

Չէ՛։—Ո՞րքան։

Շուշան.

Ամսական քառասնհինգ մանէթ։

Քեռոբ.

(Զարմացմամբ). Եա՜հ։

Շուշան,

Հաւատա՛։

Քեռոբ.

Քա, հա՞։

Նարգիզ.

Հա, բալաս, հա։

Քեռոբ.

(Վեր ցատկելով)։ Օ՛յ, օ՛յ։ Քա՛, մէկ բեր ձեռքդ պագնեմ։ (Քարշում է մեր ձեռքը)։

Նարգիզ.

Չի ուզում, բալաս, չի ուզում։

Քեռոբ.

Քա՛, թո՛ղ։ (Համբուրոտում է). օխխա՛յ, օխխա՛յ։

Նարգիզ.

(Նրա գլուխը համբուրելով)։ Զօրանաս, բալաս, զօրանաս։

Քեռոբ.

(Շուշանին). Աղջի՛, արի դուն էլ համբուրիր։

Շուշան.

Գլխիս վրայ։

Նարգիզ.

Ամա՜ն Քերո՛բ. երեխայութիւն մի անիլ։

Շուշան.

Քա, ինչ՞ ես ասում. ինչ՛ երեխայութիւն. թո՛ղ։ (Համբուրում է):

Նարգիզ.

(Ձակատը համբուրելով), Շատ ապրիս։—Երկուքդ էլ զօրանաք։

Քերոբ.

Մայրիկ Ջան, Շուշան, Սուքիաս աղան ինձ այստե՞ղ գործ պէտք է տայ, թէ...

Շուշան.

Զէ, 40 վերստ հեռու՝ մի գիւղում։

Քերոբ.

(Մի ոտք միտ անելուց յետոյ) Հա՜. իմացայ, իմացայ։ Ասում էին, որ հէնց այդ Սուքիաս աղան՝ 40 վերստ հեռու մի գիւղում՝ թագաւորական սալդաթների համար մեծ մեծ կազարմաներ է շինում...

Շուշան.

Երեւի հէնց այդ գիւղն է էլի՛։

Քերոբ.

Լաւ. ճիշտը յետոյ կիմանանք։ Բայց որտեղ էլ որ լինի, ինձ համար մէկ է։

Շուշան.

Ի հարկէ։ Դու ասա, օրհնեալ է Աստուած, որ դու գործի եղար։

Նարգիզ.

(Երկնիին է նայում):

Քերոբ.

Հա՜։ Փառք Նրան։

Նարգիզ.

Քերոբ Ջան, այդ մաշինա՞յ էք ասում, թէ ինչ զահրուզուխում, յանկարծ այդ գիւղումն էլ լոյս չընկնի՞։

Քերոբ.

Զէ՜, մայրիկ Ջան, դուն էլ արդէն շատ հեռու ես գնում։ Այն գիւղը բարձր, բարձր լեռների մէջ է։ Այնտեղ մաշինան ինչ՞ բան ունի. (Սկսում է Շուշանի հետ յուր խօսել):

Նարգիզ.

Ո՞վ է իմանում։ (Մեկուսի): Մեր մեղքից Նեռն աշխարհք եկել է, պրծել։ Այս տեսակ անաստուածութիւն կը լինի՞։ Մաշինայ հնարել, հարիւրաւոր վարպետների բերանների պատառը խլել։ Տեսնես դրանք Եղբրի՞ են թէ Մըլթանի։ Թէ չէ հայ քրիստոնեան այդպէս բան կանի՞։

Քերոբ.

Մայրիկ Ջան, այդ մասին միամիտ եղիր, միամիտ։

Նարգիզ.

Տայ Աստուած։

Քերոբ.

(Ուրախ ձայնով). Է՜հ, Շուշան ջա՛ն...

Շուշան.

Հա ջան, բաղդերս լաւ բանեց, չէ՞։

Քերոբ.

Էլ ասում է՞ս։ (Երկիրին են նայում իրիր եւ Շուշան):

Նարգիզ.

Դէհ գնանք, գնանք. հաց ուտենք, պրծնենք, որ շուտով գնաս Սուքիաս աղի մօտ...
(Գասպար մտնում է, ձեռքին մի կապոց բռնած):

ՏԵՍԻԼ Ը.

Առաջինները եւ Գասպար.

Գասպար.

Այս չորերը խանումս ձեզ համար ուղարկեց։ (Պատկեր):

Նարգիզ.

Երկնուց մինչեւ գետինք...

Շուշան.

(Կապոցը բաց է անում Քերոբի հետ). Խաթուն մայրիկ ջան, տե՛ս. սարփինքան ահագին թոփ է։

Նարգիզ.

Ողորմած Աստուածը...

Գասպար.

Խանումս ասաց՝ այս մահուդից թող իրանց համար մի մի ջուբբայ չինեն։ Այս գլանելից էլ՝ երեխաներին տաք շոր կարեն...

Քերոբ.

(Մեկուսի եւ հրճուալից). Եա՜հ։

Շուշան.

(Հրճուալից). Քա, Խաթուն մայրիկ ջան...

Նարգիզ.

Ողորմած Աստուածը...

Գասպար.

Նանի՛, այս գլխի չալն էլ խանումս քեզ համար ուղարկեց։ Դէհ մնաք բարով (գնում է):

Նարգիզ.

Քերոբ ջան, այդ աղային...

Քերոբ.

(Գրպանները որոնելով). Քա, ոչ մի կոպէկ չունեմ։

Շուշան.

Գնաց, նա արդէն գնաց։ (Ուրախութիւնից

շշված, միմեանց երեսներին են նայում). Խաթուն մայրիկ ջան...

Քերոբ.

Մայրիկ, Սուքիաս աղի կնիկը սրանք ընծա՞յ է ուղարկել։

Շուշան.

(Հեգնիորեն) Չէ՛, փողով։ (Ծիծաղ) Հա՛, հա՛, հա՛։

Նարգիզ.

Հա, որդի, հա. ընծայ է ուղարկել։

Քերոբ.

Եա՜հ։

Շուշան.

Հաւատա։ Խոստացաւ մենակ մէկ թօփ սարփինքայ ուղարկել...

Նարգիզ.

Միւսներն էլ աւել է ուղարկել։ Ողորմած Աստուածը...

Քերոբ.

Հա, ես ու իմ հոգին։ Ողորմած Աստուածը դրան, իրան էլ, իրան մարդուն էլ... (մեկուսի) Ա՛յ ձեզ բաղդ։

Շուշան.

Խաթուն մայրիկ, կաց մէկ այս չալը գլխիդ չափենք...

Նարգիզ.

Ցետոյ, յետոյ։ Դեռ գնանք, հաց ուտենք, որ Քերոբս գնայ...

Քերոբ.

Հա, հա, աղջի, չուտ արա։ (Ուզում են գնալ. Հոռոմսիմն մտնում է)։

ՏԵՍԻԼ Թ.

Առաջինները եւ Հոռոմսիմ.

Քերոբ.

Հոռոմսիմ աբլա ջան, ամեն բանից առաջ, թող քո ձեռքն էլ մէկ ես պագնեմ։ (Ձեռքը քաշում է)։

Հոռոմսիմ.

(Ձէ թողնում) Երեխայութիւն մի՛ անիլ։ Ձեռքս ինչի՞ ես պագնում։

Քերոբ.

Քեզ ասում եմ, թո՛ղ։

Հոռոմսիմ.

Անկարելի բան է։ Փառք Աստուծոյ, ես հս այս տան օտարը չե՞մ։

Նարգիզ եւ Շուշան.

Ի հարկէ։

Քերոբ.

Հարազատը հարազատին չէ անում, ինչ որ դու մեզ համար ես անում։

Հոռոմսիմ.

Դատարկ դատարկ մի խօսիլ։ Ես միայն իմ պարտքն եմ կատարում։

Նարգիզ.

Ողորմած Աստուածը...

Հոռոմսիմ.

Փիէ՛հ. հիմի էլ սա սկսեց։—Աւտաս, հացի էիք գնում, ա՛յ։ Դէհ գնացէք, գնացէք. հաց կերէք։

Նարգիզ.

Աղջի՛։ կաց միասին...

Հոռոմսիմ.

Շնորհակալ եմ, ես գործ ունեմ։

Քերոբ.

Գնանք, Հոռոմսիմ արլա ջան, ես էլ եմ խնդրում։

Շուշան.

Ջա՛ն, Հոռոմսիմ արլա ջան, գնանք։

Հոռոմսիմ.

Ի՞նչ ունիք ուտելու։

Շուշան.

Սոխայրածով լա՛ւ թանապուր։

Հոռոմսիմ.

Մեռանք ձեր թանապրի ձեռքիցը։

Նարգիզ.

Աղջի, չո՛ռ, հապա ուրիշ ի՞նչ կարող ենք...

Քերոբ.

Ա՛յ, սրանից յետոյ...

Շուշան.

Ինչ որ քէֆդ կուզենայ։

Հոռոմսիմ.

Բարի, կուզամ մի քանի գդալ կուտեմ։ Շուշա՛ն, տեսնեմ մէկ գործուածքդ ի՞նչ արիր։ (Քարգահի կողմն է գնում):

Շուշան.

(Հեսեւում է Հոռոմսիմին). Կը պրծնեմ, չուտ կը պրծնեմ։ Ա՛յ... (Նայում են):

Նարգիզ.

Քերոբ ջան, երեխաներին ասա գան։ (Գնում է):

Քերոբ.

Այս բոպէին։ (Գնում է):

Հոռոմսիմ.

(Լրջորեն) Աղջի, մարդուդ գնալու մասին ամենեւին չարտամեա։

Շուշան.

Ինչի՞ եմ տրտմում։ Փառք Աստուծոյ, ի՞նչ կայ որ. թող նա ողջ առողջ լինի...

Հոռոմսիմ.

Ես դրա համար չեմ ասում։ Գնանք։

Շուշան.

Հրամեցէք։ Ես գնամ, հացը ձգեմ։ (Գնում է):

Հոռոմսիմ.

(Մի ոտկէ կանգ առնէիր։ յետոյ). Երբ ես սրանց այսպէս եմ տեսնում, բացի մենակ Նարգզից, չեմ կարծում թէ՝ կացինը քարին կպցնենք։—Եա՛հ եօթնանուն սուրբ Կարապետ։ (Գնում է): (Տեսարանը փոխւում է՝ Սուրիասի տան կաբինետը, Եւրոպական ճաշակով, ճոխապէս կահաւորուած: Սուրիաս մեան է գալիս):

ՏԵՍԻԼ Ժ.

Սուրիաս մեծակ.

Սուրիաս.

Կնիկ ասածդ պէտք է որ կենդանի լինի, աշխո՛յժ, վառվռո՛ւն. ո՛չ թէ Մարիամի նման մեռա՛ծ, անսի՛րտ, չափից դուրս ամօթխա՛ծ։ Խնդրեմ ասէք, այս տեսակ կնկանից ինչ՞ լաւագոյն։ Իրան ուշ ու միտքը փոխանակ իրան մարդուն վրայ՝ այսինքն ինձ վրայ դարձնելու, ախմախը ողջ օրը մտածում է միմիայն աղքատների մասին, այս ու այս չքաւորի եւ անգործի մասին։ Եւ ուրիշ հազար ու մի տեսակ այսպիսի յիմարութիւններ։—Խնդրում ես, չէ լինում. յորդորում համոզում ես, չէ լինում. չարանում, սպառնում ես, չէ լինում։ — Իմ վարժապետներս,

մանաւանդ իմ ազգական վարժապետս,—ասում է, —ինձ այսպէս են սովորեցրել։ Ինձ չես հաւանում՝ գնա՛,—ասում է,—քեզ համար ուրիշ կնիկ ճարէ։— Ես առանց տղամարդու էլ կարող եմ ապրել. եւ աւելի լաւ։ Եթէ տղամարդ ասածդ,—ասում է,— այս է եղել, աւելի լաւ կանեն աղջկերքը, որ եթէ ամենեւին մարդու չգնան։ (ծիծաղում է). Հա՛, հա՛ հա։ Հապա՞. այստեսակ հաստագլուխ, ծալպակասի մէկն է։ Ես էլ միտք եմ անում, միտք եմ անում, իմ դիրքն ու անունը աչքիս առաջ բերում, առ ու աբուռիցս գետինը մտնում։ Աստուա՛ծ է վկայ։ Ուստի ձայնս սուս ու փուս կտրում եմ եւ գող կատուի նման քաշւում անկիւնը, ինձ ու ինձ պըպզում։ Ահա՛, ահա սա էլ ձեզ ուսում ու կրթութիւն։ Կորցրու, իրան էլ ու իրան ուսում տուողին էլ։ Ծնողներն էլ մի մարդ լինէին. փոքր 'ի չատէ անուն, համբաւ ունենային, գոնէ իմ կիսի չափ, իմ քառորդի չափ, այն էլ մի բան էր։ Ոչինչ. հասարակ արհեստաւոր. օրէ մալէզ, օրէ խլէզ. օրից վաստակող, օրից ուտող։ Ինչ ասեմ ես իմ ծնողներին, նմանապէս իմ էլ՝ այս դդում գլխին։—Գեղեցկութիւնից, միմիայն գեղեցկութիւնից խաբուեցանք ես էլ, ողորմած հոգի ծնողներս էլ։ Ուրիշ ոչինչ։ Բայց ասէք խնդրեմ. խաս մարմար քարից չինած գեղեցիկ արձաններ քիչ կա՞ն։—Ինչ՞է չահ, ինչ՞է լաւագոյն։ Այն որ չեն ասում թէ՝ երիտասարդութեան հասակում մարդ իրան գործած մեղքերը վերջերում պիտի քաւէ, ճշմարիտ է, բոլորովին ճշմարիտ։ Ես ու իմ հոգին։ Ախր այսպէս բան կը լինի՞, այսպէս պատիժ կըլինի՞։ Գաթան ծոցումդ՝ գրեթէ ողջ տա-

ին ծում ու պաս պահե՞ս։—Ձեզ եմ հարցնում, դէհ սա ինչ կեանք է։ Դժբաղդաբար թուրք էլ չեմ, որ... էհ, վերջապէս։ Շուշանի նման գիւղացի անուսումները հազար անգամ լաւ չե՞ն։—Հոռոմսիսը, ժամը տանելիս, մէկ երկու անգամ հեռուից ցոյց տուեց։ Ա՛յ կնիկ, ա՛յ գեղեցկութիւն։—Ցոնքե՛րը, աչքե՛րը, թշե՛րը,—անտիքայ, կատարեալ անտիքայ։ Իսկ բոյը հո, ահա՛,—մի կատարեալ չինարի։ Ասում եմ էլի՛։ Ես պէտք է թուրք լինէի. վեր կենայի եւ մէկ, երկու, երեք, չորս,—որքան քէփս ուզում էր,—այսպէս չարէի եւ այնուհետեւ, դէհ Մարիամ խանում,—ուզում ես, բարի ճանապարհ. չես ուզում, ա՛յ, գնա՛ այնտեղ, խոհանոցում վեր ընկիր եւ հօրս խէրին մի կտոր հաց կերր—Բայց մեր այս սեւագլուխները այն տեսակ կանոն են դրրել, որ... էհ. վերջապէս։ (Մարիամ մտնում է)։

ՏԵՍԻԼ ԺԱ.

Սուբիաս եւ Մարիամ.

Սուբիաս.

Հը՞մ, Մարիամ ջան, ի՞նչ արիր։ Սարփինքան ուղարկեցի՞ր

Մարիամ.

Ուղարկեցի։ Շնորհակալ եմ։

Սուբիաս.

Զարժէ։ Շնորհակալ ես պէտք է լինիմ, որ...

Մարիամ.

Բացի սարփինքայից մի քանի արշին էլ մահուդ, մի թօփ ֆլանել...

Սուբիաս.

Հա՞...

Մարիամ.

Եւ գլխի մի տաք շալ էլ...

Սուբիաս.

Եւ այդ ամենը նրա՞նց համար։

Մարիամ.

Այո՛։ Ցոյս ունիմ, չես նեղանալ։

Սուբիաս.

Էլ ինչ նեղանամ, երբ ուղարկել ես, պրծել։

Մարիամ.

Փոյթ չէ։ Ես ու դու ողջ լինինք։

Սուբիաս.

Շնորհակալ եմ։

Մարիամ.

(Մեկուսի) Փոխանակ չուն ու դայլերն ուտելու...

Սուբիաս.

Պառաւի որդին գիւղ գնալու համաձայն է՞։

Մարիամ.

Ես նրան չտեսայ։ Տանը չէր։ Մօրը ասացի։ Ի հարկէ կը համաձայնի։

Սուֆիաս.

Յետոյ՝ իմացա՞ր, լաւ վարպետ է՞։

Մարիամ.

Մայրն էլ, Հոռոմսիմն էլ ասում էին . . .

Սուֆիաս,

Հոռոմսիմն ո՞վ է։ Հարսը՞։

Մարիամ.

Ոչ։ Մեր հացթուխը։

Սուֆիաս.

Մի՞թէ նա էլ այնտեղ էր։

Մարիամ.

Ես ինձ հետ էի վերցրել։

Սուֆիաս.

Ինչո՞ւ համար։

Մարիամ.

Որ ինձ առաջնորդէ։

Սուֆիաս.

(Մեկուսի) Լաւ առաջնորդ ես գտել, ա՜յ։ (Բարձր) Ուրեմն մեր հացթուխը նրանց ճանաչում է՞։

Մարիամ.

Ոչ միայն ճանաչում է . . .

Սուֆիաս,

Հապա՞։ Նստիր, ինչի՞ ես կանգնել (նստում է)։

Մարիամ.

Գործ կունենաս։ Չեմ ուզում խանգարել։

Սուֆիաս.

Ոչինչ. մի լոպէ նստիր։

Մարիամ.

Ո՛չ, ո՛չ։

Սուֆիաս.

Բարի։ (Մեկուսի) Տեսնում էք էլի՞ (Բարձր) Հա՜. հացթուխի մասին կարծեմ բան էիր ուզում ասել։

Մարիամ.

Այն էի ուզում ասել, որ հացթուխը ոչ միայն նրանց ճանաչելիս է եղել, այլ եւ շարունակ օգնելիս է եղել։

Սուֆիաս.

Ինչո՞վ։

Մարիամ.

Հարսի համար շարունակ ձեռագործի պատուէրներ ճարելով։

Սուֆիաս.

Մարիամ, դու ինձ ասա. ճանճն ինչ է, որ իրան ճենճն ինչ լինի։ (ծիծաղ) Հա՛, հա՛, հա՛։

Մարիամ.

Ի զուր ես ծիծաղում։

Սուֆիաս.

Ինչպէս։

Մարիամ.

Ա՜յ, տեսնո՞ւմ ես։ Հասարակ ժողովրդի, իրանց դառն քրտինքով իրանց մի կտոր հացը ճարողների մէ՛ջ անգամ...

Սուֆիաս.

(Մեկուսի) Դու միայն կաս յերուսաղէմ։

Մարիամ.

Կան մարդիկ, որոնք անձայն եւ անծպտուն, ձեռքերիցը եկած օգնութիւնը չեն խնայում խեղճերից։ Իսկ մենո՞ք՝ հարուստնե՞րս...

Սուֆիաս.

Աղջի՛, զարմանալի մարդ ես, ես ու իմ հոգին։

Մարիամ.

Ինչո՞ւմն է իմ զարմանալիութիւնը։

Սուֆիաս.

Ա՜ կնի՛կ, համ այսքա՜ն ու այսքա՜ն փողեր ես ծախսում, համ էլ...

Մարիամ.

Փառք Աստուծոյ, դու ինքդ շատ լաւ իմանում ես, որ ես իմ մասին մի կոպէկ անգամ աւելորդ չեմ ծախսում։

Սուֆիաս.

Երանի չէ՞ր, եթէ այդպէս լինէր։—Եթէ որ ինքդ զուգուէիր, զարդարուէիր, հանդէսներին յաճախէիր, որ գոնէ տեսնողին...

Մարիամ.

Ինձ այսպէս են կրթել։ Եւ ես շատ գոհ եմ, որ այսպէս եմ։

Սուֆիաս.

Է՛հ։ Ի՛նչ ասեմ ես քեզ կրթողին։

Մարիամ.

Չհամարձակուես խնդրեմ։ Եթէ մեր հոգեւոր դպրոցները չլինէին...

Սուֆիաս.

Շատ բան կը կորցնէինք ա՛յ։ Մէկ ձեր այդ հոգեւոր դպրոցները, մէկ էլ այն քո ազգական ուսուցիչը, որ քանի տարի քեզ հետ տանը պարապում էր։ Ինչ՞ էր այն սարսաղի անունը։

Մարիամ.

(Խոժոռ հայեացք է ձգում)։

Սուֆիաս.

Ներողութիւն։ Ես միայն ուզում էի նրա անունը իմանալ։

Մարիամ.

Երանի չէ՞ր, եթէ նրա նման մի քանի տասնեակ հայ քրիստոնեաներ լինէին մեր մէջ։

Սուֆիաս.

Դէ՛հ հիմի եթէ նա չկայ, փառք Աստուծոյ, նրա աշակերտուհիները հօ կա՛ն։

Մարիամ.

Ուրեմն դու ինձ չե՞ս հաւանում։

Սուֆիաս.

Եթէ չհաւանէի, չէի ուզիլ։

Մարիամ.

(Մեկուսի). Ո՛րքան լաւ բան կանէիր։

Սուֆիաս.

Հիմի ասում ես թէ՝ պառաւի որդին . . .

Մարիամ.

Ա՛յ ինքը կը գայ։ Խօսի՛ր, վերջացրո՛։ Միայն, Սուֆիաս, խնդրում եմ, որ վարձը չպակասեցնես։

Սուֆիաս.

(Ժպտաձայն) Աղջի՛, անիրա՛ւ. փող ծախսելու

դէպքերում մանաւանդ՝ ես քո խաթրը երբ եւ իցէ կոտրել ե՞մ։

Մարիամ.

Շնորհակալ եմ։

Սուֆիաս.

Անկե՞ղծ. շնորհակա՞լ ես։

Մարիամ.

Այո՛, անկեղծ։

Սուֆիաս.

Դէ՛հ կաց, ես էլ իմ շնորհակալութիւնը անեմ։ (Ուզում է համբուրել)։

Մարիամ.

Չե՞ս ամաչում։ (Ցեռ է քաշում)։

Սուֆիաս.

Անշնո՛րհք, այստեղ ամօթի ինչ կայ է՛հ։ Մարդ ու կնիկ չե՞նք միթէ։

Մարիամ.

Շատ բան։ Այնտեղ, մեր աչքի առաջ, մի ահագին ընտանիք գրեթէ սովամահ եւ ցրտահար է լինում. իսկ դու այստեղ դեռ սիրտ էլ ունես...

Սուֆիաս.

Աղջի՛, շատ ու շատ զարմանալի ես, ես ու իմ Աստուածը, կարծես թէ մենակ մենք՝ հարուստներս ենք պարտական . . .

Մարիամ.

Ի հարկէ պարտական ենք։

Սուֆիաս.

Ինչո՞ւ համար, է՞հ։ Միթէ քաղաքի ժողովուրդը ողջ ողջ կոտորուեցա՞։

Մարիամ.

Ամեն մի հարուստ էլ հէնց միշտ այդպէս է ասում։

Սուֆիաս.

Խնդրե՛մ. նորից խելքիդ զօռ մի՛ տալ։ Ամեն մարդու համար իրան շապիկը իրան մօտիկ է։ Մեծունանք ինչի՞ են ասել՝ լաւ է մորթուոյս՝ քան թէ որդւոյս։

Մարիամ.

(Ծիծաղում է) Հա՛, հա՛, հա՛։ Արժանաւոր մեծերի արժանաւոր փոքրիկներ։ Է՞հ... (Ձեռքը թաի տալով ուզում է գնալ)։

Սուֆիաս.

(Բռնում է). Դէհ լաւ. ներողութիւն։ Ես հանաք արի։

Մարիամ.

Այո՛։ Իմանում եմ։ Ձեր մեծունանքը մի ուրիշ, աւելի խելօք խօսք էլ են ասել։ Դու այն էլ իմանո՞ւմ ես արդեօք։

Սուֆիաս.

Ձէ՛։ Ո՞րն է։

Մարիամ.

Հանաք, հանաք,—դագանակ։ (Արտասուալից աչքերով գնում է)։

Սուֆիաս.

(Մեկուսի) Դէհ համեցէք։ (Բարձր) Մարիամ ջան, գոնէ մի բոպէ կաց...

Մարիամ.

(Երեսը դարձնելով) Ինչ՞ էք կամենում։

Սուֆիաս.

Գոնէ քաղաքավարութեան համար մէկ պատմիր տեսնենք թէ՝ այդ ընտանիքը, որոյ վրայ դու կարծես սիրահարուեցար յանկարծ...

Մարիամ.

Խնդրեմ, կարճ կապես։

Սուֆիաս.

Քանի՞ հոգի են, ո՞վ են, ինչ՞ ունեն, ինչ՞ չունեն։

Մարիամ.

Նրանց պատմութիւնը կարճ է։ Պատուական եւ առաքինի գիւղացիներ են։ Մի քանի ժամանակ առաջ գաղթել են այստեղ, կարծելով թէ բաղդի կը հանդիպեն...

Սուբիաս.

Այդ երազը, ասենք, մեր գիւղացիներից շատերն են տեսնում։

Մարիամ.

Այո՛։ Համաձայն եմ քեզ հետ։ Մինչեւ սղոցող մեքենայի լոյս ընկնելը, որդին մի կերպ կառավարելիս է եղել։ Բայց այժմ, մի տարուց աւելի է, անգործ է։ Ողջ ընտանիքին կերակրողը, հագցնողը, տան վարձ վճարողը, միմիայն պառաւի ճախարակը եւ հարսի քարգահն են։ Ահա բոլորը։ Բարեբաղդաբար ասեմ, թէ դժբաղդաբար, ծերունի հայրը շուտ է մեռել, այսինքն շուտ է հանգստացել։ Կարճ պատմութիւն է. այնպէս չէ՞։

Սուբիաս.

Այո՛ կարճ է։ Բայց շատ ցաւալի։ Ափսո՜ս, հազար ափսոս։ Ես էլ ասում եմ թէ՝ իմ խեղճ Մարիամի հետ՝ այսօր մանաւանդ ինչ՞ է պատահել։

Մարիամ.

Եւ դու ցանկանում ես, որ ես դեռ հանաքնե՞ր էլ անեմ քեզ հետ։

Սուբիաս.

Ներողութիւն, հոգիս, հազար ներողութիւն։ (Իբրեւ թէ մեկուսի) Ո՜ւհ, սարսափելի բան է։ (Բարձր) Մարիամ ջան, ասա խնդրեմ, պառաւի որդին քանի՞ երեխայ ունի։

Մարիամ.

Զորս։

Սուբիաս.

Աստծու բանին մտիկ. հարուստների փողն է շատացնում, աղքատների երեխաները։

Մարիամ.

Երեւի նրանց էլ Աստուած երեխաներով է մխիթարում։

Սուբիաս.

Հապա ես ու դո՞։ Մենք ինչո՞վ ենք մեղաւոր...

Մարիամ.

Էլի՞։

Սուբիաս.

Խնդրում եմ, չնեղանաս...

Մարիամ.

Է՜հ։ (Զեռքը թափ է տալիս եւ չարացած գընում)։

Սուբիաս.

Կացինը քարին կպցրինք, ա՜յ։ Բայց խօսքը մեր մէջ մնայ, այդ կողմից, ասենք, մեղաւորը ես եմ։ Խեղճ կնիկս ոչինչ մեղք չունի։ Ղազանում ինձ բժշկելուց յետոյ լուսահոգի պրոֆէսորս ասաց. պառկուել կարող ես, բայց ժառանգ ունենալ բոլորովին

մոքիցդ հանիր,—ասում էր։ Լուսահոգին երեւելի պրոֆէսոր էր։ Անպիտանը ի՛նչպէս էլ լաւ իմացաւ։ Այ, դուք էլ տեսնում էք էՀ՝ լի։ Պսակուելս ուղիղ ութ տարի կը լինի. բայց Մշեցու ասածի նման, զէլի էն կիկօն, զէլի էն կիկօն։ Ես, ի հարկէ, թէպէտ միշտ աշխատում եմ մեղքը Մարիամի վրայ ձգել։ Բայց մի օր Աստծուն ես էլ հոգի եմ տալացու, (սիրտը թակելով) այստե՛ղ, մի ինչ որ բան ինձ ասում է միշտ. յանցաւոր ես, Սուքիաս, կնկանդ առաջ, յանցաւոր։ Աստուծոյ ողորմութիւնն է, որ կնիկս այնպիսի ընտանիքի մէջ է մեծացած, որ այս բաները մոքովն անգամ չէ կարող անցկացնել,—եթէ ոչ,—պրծաւ . . . ։

(Այս ու այն կողմը նայելով մտնում է Հոռոմսիմն)։

ՏԵՍԻԼ ԺԲ.

Սուքիաս եւ Հոռոսիմ.

Սուքիաս.

Հը՛մ, Հոռոմսիմ. աղա՞յ ես, թէ աղջիկ։

Հոռոմսիմ.

Դեռ երկունքի մէջ եմ. բայց կարծեմ, որ տղայ պէտք է ծնիմ . . .

Սուքիաս.

Տայ Աստուած։

Հոռոմսիմ.

Ամէն։

Սուքիաս.

Հը՛մ, ինչ՞ չուտ չուտ այս ու այն կողմն ես նայում։ Մարիամը գնաց։

Հոռոմսիմ.

Իմանում եմ։ (Դրող է յափում իբրեւ թէ Մարիամի ետեւից)։ Շատ անգամ պատերն էլ ականջ են ունենում։

Սուքիաս.

Ճշմարիտ է։ Զգուշութիւնը լաւ բան է։ Քերոբը գիւղ գնո՞ւմ է։

Հոռոմսիմ.

Քեզ համար դեռ մի մատաղ էլ կանէ։

Սուքիաս.

Մատա՞ղը իրան լինի։ Միայն թէ . . .

Հոռոմսիմ.

Ի հարկէ։

Սուքիաս.

Հոռոմսիմ, ասա ինդրեմ, Քերոբը ինչ՞պէս տղայ է։

Հոռոմսիմ.

Գիւղացի տղան ինչ՞պէս կը լինի։

Սուքիաս.

Ուրեմն . . . մի . . . մի . . .

Հռոմսիմ.

Ասա՛, մի՛ վախենալ, մի կատարեալ էշ։

Սուֆիաս.

Իսկ պառա՞ւը՝ Նարգի՞զը։

Հռոմսիմ.

Ա՜յ, իմ մէջքը կոտրողը հէնց Նարգիզն է։

Սուֆիաս.

Ինչպէս։

Հռոմսիմ.

Ոչխարների փարախը պահող մեծ մեծ շներ տեսա՞ծ ես։

Սուֆիաս.

Շա՜տ։

Հռոմսիմ.

Ա՜յ, հէնց նրանցից ամենից ազնիւնը, կատաղին։

Սուֆիաս.

Մի՞թէ։ Աղջի, չեմ կարծում։

Հռոմսիմ.

Ես քեզ բան եմ ասում։ Գիւղական այդ մեծ ու փոքր շներին ես լաւ եմ ճանաչում։ Դու դեռ մօրդ փորից դուրս չէիր եկել, երբ ես վազուց Նարգիզներին ճանաչում էի։

Սուֆիաս.

Ուրեմն, Հռոմսիմ, գործն այնպէս պէտք է առաջ տարած, որ յանկարծ . . .

Հռոմսիմ.

Յոյս Աստուած։

Սուֆիաս.

Ամէն. Ամէն։ Ասա՛, խնդրեմ. հարսը բնութեան կողմից ի՞նչպէս է։

Հռոմսիմ.

Իսկ եւ իսկ քո ուզածը. գլորեցաւ խուփը, գտաւ պուտուկը։ Աչխո՛յժ, վառվռո՛ւն, կենդանի՛։

Սուֆիաս.

(*Մեկուսի*) Օհո՜։ (*Բարձր*). Հռոմսիմ, դոշաբ էլինք պտտում, հիմի յանկարծ խաս մե՞ղր ենք գտնում։

Հռոմսիմ.

Բայց մեղր եմ ասում, հա՜։ (*Շրջունքները փակած*) Ը՜մ, ը՜մ, ը՜մ. հարիւր տարի ուտես, չես կշտանալ։

Սուֆիաս.

Դէ՛հ, աշխատի՛ր, սիրելի՛ս, աշխատի՛ր։ Աղջի, չի՞ լինիլ, որ մէկ անգամ էլ ցոյց տաս։

Հռոմսիմ.

Բաւական է. յետոյ չատ երես կառնես։ Դէ՛հ,

ցնծա՛։ (Ձեռքը պարզելով եւ երգելով) «Ցնծա՛, ցնծա՛, Դաւիթ արքայ, աւետիս»։

Սուրիաս.

Ո՞ւրքան ես ուզում։ (Դրասեղանի զզրոցը բաց է անում)։

Հռոմսիմ.

Տո՛ւր էլի մէկ 50 մանէթ։

Սուրիաս.

Ահա՛։ (Տալիս է եւ պատուհանից դուրս նայում)։ Այն ո՞վ է փողոցի ծայրում. Քերոբը չէ՞։

Հռոմսիմ.

Քամակդ շուռ տո՛ւր։ (Սուրիաս քամակը շուռ է տալիս, Հռոմսիմը կողից նայում է)։ Հէնց նա ինքն է։ Քեզ մօտ է գալիս։

Սուրիաս.

(Դուրս նայելով)։ Իրաւ որ յիմարի մէկն է երեւում, ա՛յ։

Հռոմսիմ.

Մի կողմից յիմարութիւն, միւս կողմից չքաւորութիւն . . .

Սուրիաս.

Հիմի դուն էլ բան ես ասում։ Կարծես ամեն չքաւոր էլ . . .

Հռոմսիմ.

Հը՛մ։ Կուչտը սովածին մանր է բրդում։ Չքաւորութիւն ասածդ այնպիսի՛ բան է, որ թէ մարդու խելքն է առնում, եւ թէ ամենից ազնիւ զգացմունքները խեղդում, սպանում։ Դէ՛հ ես գնացի։ (գնում է)։

Սուրիաս.

(Նայում է դուրս)։ Եւ Շուշանի նման կնիկը մի այսպիսի իշի ձեռքին։ Թի՛։
(Դրասեղանի առաջ նստում է բազկաթոռի վրայ եւ իբրեւ թէ նամակ է կարդում։ Քաշուելով եւ ամաչելով մտնում է Քերոբ եւ ձեռքերը կրծքին դրած, խորը գլուխ տալիս)։

ՏԵՍԻԼ ԺԳ.

Սուրիաս եւ Քերոբ.

Քերոբ.

Բարի երեկոյ, աղա։

Սուրիաս.

(Գլուխը բարձրացնելով)։ Ո՞վ ես։

Քերոբ.

Աղա Ջան, ես Նարգզի որդին եմ։

Սուրիաս.

Նարգիզն ո՞վ է։

Քերոբ.

Նա, որ ձեր հրամանոց խաթունին իմ մասին խնդրած էր...

Սուֆիաս.

Հա՛։ Ցիշեցի. անունդ ինչ է, ա՛յ տղայ։

Քերոբ.

Ձեր հրամանոց ծառայ՝ Քերոբ։

Սուֆիաս.

Ա՛յ տղայ, դու լա՞ւ վարպետ ես։

Քերոբ.

Յոյս Աստուած, ձեր հրամանոց մօտ սեւերես չեմ մնալ, աղա։

Սուֆիաս.

Տեսնենք։ Յետոյ՝ պայմանները արդէն յայտնի՞ են քեզ։

Քերոբ.

Հրամերէք։ Շատ հնորհակալ եմ։

Սուֆիաս.

Դու պէտք է իմանաս, որ այդ պայմաններով ես միայն քեզ եմ վարձում, որովհետեւ կնիկս շատ թախանձեց։

Քերոբ.

Ողորմած Աստուածը ձեր երկուսին էլ...

Սուֆիաս.

Բարի։ Քիչ այնտեղ դրսում սպասիր։ Ես յանձնարարական նամակ գրեմ։

Քերոբ.

(Խոր գլուխ տալով դուրս է գնում):

Սուֆիաս.

(Գրում է եւ երբեմն երբեմն խօսում): Շատ դրուստն է ասած թէ՝ անտառի լաւ լաւ պտուղները արջերն են ուտում։—(Գրում է): Մարիամը այսպիսիներից մէկի ճանկն ընկած պէտք է լինէր, որ իմ յարգն իմանար։ (Գրածը կարդում է. դնում է ծրարի մէջ եւ տանում դէպի դուրս):

Մարիամ.

(Դրսից) Մտի՛ր, եղբա՛յր, մտի՛ր։ (Մտնում է Քերոբի հետ):

ՏԵՍԻԼ ԺԴ.

Սուֆիաս, Մարիամ եւ Քերոբ.

Մարիամ.

(Սուֆիասին ծածուկ) Սա էլ նո՞ր քաղաքավարութիւն է։ (Քերոբին) Նստի՛ր, է՛ղբայր։

Քերոբ.

(Չէ նստում. այլ խոր գլուխ է տալիս):

Սուֆիաս.

Յանձնարարականդ պատրաստ է։ (Մարիամին

ծածուկ) Քո արածն ինչ է։ (Քերոբին) Ստացիր։ Գիւղում կառավարչիս կը յանձնես։

Քերոբ.

(Ստանում է եւ խոր գլուխ տալով ուզում է հեռանալ)։

Մարիամ.

Սպասիր, եղբա՛յր։ (Սուֆիասին) Իսկ վարձի հաշուից մի բան վճարե՞լ ես։

Սուֆիաս.

Դեռ թող ծառայէ, է՜հ։

Մարիամ.

Մի ամսականը վճարիր։ (Քերոբին) Սպասիր, եղբայր։

Քերոբ.

Այստեղ եմ, իանում ջան։

Մարիամ.

(Սուֆիասին) Հը՛մ։

Սուֆիաս.

(Մեկուսի) Խաթա՛բալա։ (Գնում է եւ գրասեղանի զզրոցից փող հանում)։

Մարիամ.

(Քերոբին) Հարկաւորութիւն կունենաս. մի ամսականդ ստացիր։

Քերոբ.

(Խոր գլուխ է տալիս)։

Սուֆիաս.

(Քերոբին) Ահա քեզ առաջին ամսականդ 45 մանէթ։

Քերոբ.

(Խոր գլուխ տալով) Անչափ շնորհակալ եմ։

Մարիամ.

Զարժէ, եղբայր։

Սուֆիաս.

(Մեկուսի) Կարծես իրան փողը լինի, ա՛յ։

Մարիամ.

Քո վարձն ես ստանում։

Սուֆիաս.

(Քերոբին) Ազատ ես։ Կարող ես գնալ։

Մարիամ.

Դո՛ւ, եղբա՛յր, միամիտ սրտով գնա՛, աշխատիր։ Իմ աչքը քո ընտանիքի վրայ կը լինի այսուհետեւ։

Քերոբ.

Աստուծոյ աչքն էլ Ձեր երկուսի վրայ լինի։ Աղա ջան, մի խնդիրք ունիմ։

Սուֆիաս.

Ինչ խնդիրք։

Մարիամ.

Ասա՛։

Սուֆիաս.

(Մեկուսի) Էլի կոտրած գդալի նման...

Մարիամ.

Հը՛մ, ասա տեսնեմ։

Գեորք.

Աղա ջան, խանում ջան. ես կարդալ գրել չեմ իմանում...

Մարիամ.

Ուզում ես ստորագրութիւն տա՞ս։

Գեորք.

Հա, խանում ջան...

Մարիամ.

Աւելորդ է...

Գեորք.

Աղա ջան, հրամանքդ նեղութիւն քաշիր, պարթը գրիր...

Մարիամ.

(Սուֆիասին ծածուկ) Տեսնո՞ւմ ես։

Գեորք.

Ես մատս կը ճիտեմ։

Սուֆիաս.

Աւելորդ է։ Ես քեզ հաւատում եմ։ Գնա՛։

Գեորք.

(Խոր գլուխ է տալիս եւ ուզում է գնալ)։

Մարիամ.

Բարի ճանապարհ քեզ եւ յաջողութիւն։

Գեորք.

(Գնում է)։

Սուֆիաս.

(Կնոջ երեսին է նայում)։

Մարիամ.

Կարծեմ մի յանցանք չգործեցի։

Սուֆիաս,

Բարի։ (Մեկուսի) Մի օր մեր հաւն էլ՝ մի ձու կածէ։

Մարիամ.

Հը՛մ. քեզ ու քեզ ինչ՞ ես վնթվնթում։

Սուֆիաս.

Ոչինչ։

Մարիամ.

Կարծում եմ, որ ոչինչ։

Սուբիաս.

Է՜հ։ (Ձեռքը թափ է տալիս եւ չարացած գնում)։

Մարիամ.

(Ծիծաղ) Հա՛, հա՛, հա՛։ Կացինը քարին կպցրինք, ա՜յ, հա՛, հա՛, հա՛։ (Բիչ մանի է գալիս եւ ապա խոր հառաչելով) Ա՜խ, իմ ծնողներ, ծնողներ։ Ա՜յ Աստծու կրակի տէրն է։ Ա՜յ ծնողների մէկ ու ճար զաւակն է։ Ոչ մի ազգական չունէ։ Բոլոր հարստութիւնը քո ժառանգներին կը մնայ։ Ժառանգնե՛ր, գոնէ մի հատի՛կ։ Ո՞ւր են նրանք։ Ո՞ւր է նա։ Հը՛, հը՛, հը՛ (լալիս է)։ Ինքն էլ առողջ, գեղեցիկ երիտասարդ է։ Ես էլ 14—15 տարեկան մի երեխայ... համաձայնեցայ... յիմարացայ եւ ահա ծընողներիս երեւակայական երջանկութեան պտուղը...։ Աստուած իմ, ա՜հ, ո՜րքան դառն է... լեղի է....

Վարագոյր

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Նարգզի տունը ըստ առաջին արարուածի։ Շուշան նոր ջուրքայ հագած, աղնեգործում է եւ երգում։

ՏԵՍԻԼ Ա.

Շուշան.

Աղջկերք, պար բռնեցէք։ (կրկ.)

Արմիկի երես գովեցէք։
Ա՜յ, երես, շարմաղ երես, (կրկ.)
Մեղի չթողնես սեւերես։
(Մի քերթ ձեռքին մտնում է Հոռոմսիմ).

ՏԵՍԻԼ Գ.

Շուշան եւ Հոռոմսիմ.

Հոռոմսիմ.

(Մեկուսի) Եա՜հ եօթնանուն սուրբ Կարապետ։ (Բարձր) Շուշան ջան, բարով։ Նստի՛ր, մի՛ վեր կենալ։

Շուշան.

(Առանց վեր կենալու ձեռքի նշանով հաւքոյր է ուղարկում)։

Հոռոմսիմ.

Շնորհակալ եմ։

Շուշան.

Ձեռքինդ ի՞նչ է։

Հոռոմսիմ.

Ա՜յ, այն որ ասում էի թէ նոր պատուէր եմ ճարել։

Շուշան.

Հա. շնորհակալ եմ. տեսնեմ։

Հոռոմսիմ.

Ահա՛։ (Տալիս է)։

Շուշան.

Քերոբից ինչ խաբար։ Սաղ սալամաթ գիւղ հասե՞լ է։

Հոռոմսիմ.

(Սրհամարհական ձեւով) Հա, հա։ Միամիտ եղիր։ Սուքիաս աղան արդէն նամակ է ստացել։ (Իբրեւ թէ մեկուսի) Քերոբդ գեաղինը մտնի։

Շուշան.

(Զարմացական հայեացք)։

Հոռոմսիմ.

Տես դրան. կարո՞ղ ես գործել։ (Նստում է)։

Շուշան.

(Անուշադրութեամբ նայում է թերթին) Կարող, ասենք, կարող եմ։ Բայց...

Հոռոմսիմ.

Աղջի՛, եթէ կարողանաս, 20 մանէթ վարձ կը ստանաս։ Տասը հիմի, տասն էլ երբ պրծնես։ Բայց, ա՛յ, լաւ մտիկ արա։ Բաւականին դժար գործ է։

Շուշան.

(Անուշադիր նայում է) Ճշմարիտ է։ Բայց՝ ոչինչ...

Հոռոմսիմ.

Կարծես քարգահդ էլ դրա համար փոքր է։ Ա՛յ, տե՛ս։

Շուշան.

Ճշմարիտ է։ Բայց Հոռոմս...

Հոռոմսիմ.

Մեր տան քարգահներից մէկն ու մէկը կը վերցնես։

Շուշան.

Դա հեշտ է։ Հոռոմսիմ աղա...

Հոռոմսիմ.

Ինչ՞ կայ։

Շուշան.

Քերոբի մասին ինչ՞ էիր ասում։

Հոռոմսիմ.

Ոչինչ։

Շուշան.

Ի՛նչպէս թէ ոչինչ։ Ես արդէն լսեցի։

Հոռոմսիմ.

Լաւ. դա ի՞նչ քաղաքավարութիւն է։

Շուշան.

Ներողութիւն։ Բայց թէ...։ Հը՞մ, ասա՛ տեսնեմ. ի՞նչ էիր ասում։

Հոռոմսիմ.

Աղջի՛, ի՛նչ հետաքրքիր բնութիւն ես ունեցել։

Շուշան.

Քա, հետաքրքրութիւնս ո՞րն է, է՞հ։

Հոռոմսիմ.

Դու ինձ ասա՛. վատ բանը լսելուց ի՞նչ օգուտ, ի՞նչ շահ։

Շուշան.

(Մեկուսի). Սա ինչ՞ է ասում։ (Բարձր) Ա՜ կնիկ, ի՞նչպէս թէ վատ բան։

Հոռոմսիմ.

Վատ բան. մի՞թէ չես հասկանում։

Շուշան.

Հասկանում եմ։ Բայց . . .

Հոռոմսիմ.

(Իբրեւ թէ մեկուսի). Անպիտան, դարչելին։

Շուշան.

(Վեր է կենում) Քա, ի սէր Աստծոյ, ինձ լեզաճաք մի՛ անիլ։

Հոռոմսիմ.

(Նոյնպէս վեր է կենում). Աղջի՛, ինչի՞ լեզաճաք ես լինում։ Ինչ՞. լուի համար ուզում ես կարպե՞տ այրել։ Նստի՛ր, գործդ նայիր։ (Շուշան չէ նստում): Քեզ ասում եմ, նստի՛ր։ (Շուշան չէ նստում): Եթէ չես նստում, ինձնից ոչինչ չես լսիլ։

Շուշան,

(Նստում է): Նստեցի դէհ ասա՛։

Հոռոմսիմ.

(Նստում է կողքին). Հանդարտուիր։

Շուշան.

Հանդարտ եմ։ Դու ասա։ Դէ՜հ, պրծի՛ր։

Հոռոմսիմ.

Բայց խոստովանք պահես հա՛։ Եթէ ոչ. տե՞ս կացինը քարին կը կպցնես։

Շուշան.

Ուզո՞ւմ ես, երդում էլ ուտեմ։

Հոռոմսիմ.

Երդում ուտե՞ս։

Շուշան.

Հա՛. կուտեմ։

Հոռոմսիմ.

Շուշան ջա՛ն, ախր մեծ մեղք է։

Շուշան.

Ինչ՞ արած։

Հոռոմսիմ,

Դու ես իմանում։ Արիւն քո, գլուխ քո։

Շուշան.

Հա, հա. թող այդպէս լինի։

Հոռոմսիմ.

Հապա երդուիր։

Շուշան.

Երկինք, գետինք, խաչ, կարմիր աւետարան. վերջապէս կանանչ մեռնը...

Հոռոմսիմ.

(Շուշանի բերանը բռնելով) Սո՛ւս։ Աման աղջի՛։ Գետինը չըմտնես։ Երկինք գետինք իրար խառնեցիր։ Վո՛ւյ։

Շուշան.

Վնաս չունի։ Բոլոր մեղքն իմ շինքին։ (Մեկուսի) օ՛ֆ, մայրիկ ջան։

Հոռոմսիմ.

(Մեկուսի) Ինչպէս տեսնում եմ, բանս դժար պէտք է լինի։

Շուշան.

Հը՛մ. չուտ։

Հոռոմսիմ.

Աղջի...

Շուշան.

Քա, հօ երդումը քո առաջին կերայ։

Հոռոմսիմ.

Բարի։ Աղջի...

Շուշան.

Քա, դէհ պրծիր։

Հոռոմսիմ.

(Զորս կողմ նայելով) Այստեղ արի։ (Բեմի առաջ գալով). Եա՜հ եօթնանուն սուրբ Կարապե՛տ։

Շուշան.

(Վեր է կենում եւ իսկոյն մօտենում): Հը՞մ։

Հոռոմսիմ.

Վերի բլանում Անթառամ անունով մի ջահիլ, այրի հարս կայ։ Ճանաչո՞ւմ ես։

Շուշան.

(Մի ոտք միտ անելուց յետոյ): Զէ՛։ Ո՞վ է։

Հոռոմսիմ.

Ես ճանաչում եմ։ Իմանում էի, որ այդ կնիկը «ի նոցանէ» է։

Շուշան.

(Մեկուսի) Աստուած իմ։

Հոռոմսիմ.

Բայց թէ... այն անիծածը... Քերոբին ո՞ր-տեղից եւ ի՞նչպէս ճանկեց...

Շուշան.

Ինչ՞, ինչ։ Ինչ՞ ես ասո՛ւմ։

Հոռոմսիմ.

Սո՛ւս։ Կամա՛ց։

Շուշան.

(Լալիս է) Հը՛, հը՛. հը՛։

Հոռոմսիմ.

Քեզ ասում եմ, ձա՛յնդ։ Սկեսրայրդ յանկարծ կարող է մտնել։ Զաւակս, այնպէս անենք, որ խեղճ պառաւը չլսէ։

Շուշան.

Այդ բանը դու ե՞րբ լսեցիր։

Հոռոմսիմ.

Քերոբի գնալուց մի քանի օր առաջ։ Յիշո՞ւմ ես, որ քեզ ասացի թէ...

Շուշան.

Հա՛, հա՛. այն որ ասացիր թէ՝ մարդուդ գընալու համար մի տրամի՛լ։

Հոռոմսիմ.

Հը՛մ. հէնց այդ է ու այդ։

Շուշան.

Ես էլ կարծում էի թէ...

Հոռոմսիմ.

Ինչ՞ էիր կարծում։ Ո՞ր կնիկարմատի տղամարդը իրան կնկայ կողքին միչտ նստած է լինում։

Շուշան.

Ամա՛ն, դուն էլ։ Կնիկարմատն էլ սատկի, տղամարդն էլ։ Դու ինձ այս ասա...

Հոռոմսիմ.

Ինչ՞ ասեմ։

Շուշան.

Այդ բանը քեզ ո՞վ ասաց.

Հոռոմսիմ.

Լսեցի։

Շուշան.

Ո՞ւմից։

Հոռոմսիմ.

(Իրրեւ թէ միտք է անում) Մոռացել եմ։ Բաւական ժամանակ է անցել։

Շուշան.

Կարո՞ղ ես ստուգել։

Հոռոմսիմ.

Տեսնենք։

Շուշան.

Ջան, Հոռոմսիմ աբլա ջան,

Հոռոմսիմ.

Կաչխատեմ։

Շուշան.

Միայն, 'ի սէր Աստծոյ, այնպէս արա, որ ձայնը լոյս չընկնի։

Հռոմսիմ.

Դուն էլ այնպէս արա՛, որ սկեսոյրդ չիմանայ մինչեւ տեսնենք տակից ինչ դուրս կուգայ։ Լսո՞ւմ ես, ինչ եմ ասում։

Շուշան.

Հա, հա։—Դու էլ իմ կողմից միամիտ եղիր։

Հռոմսիմ.

Մանաւանդ որ երդում էլ կերար։

Շուշան.

Քա, քեզ բան եմ ասում։ Ես հօ երեխայ չե՞մ։

Հռոմսիմ.

Դէ՛հ արի քարգահիդ չափը նայենք։ (Քարգահին մօտ է գնում):

Շուշան.

(Նոյնպէս) Քարգահն էլ ու չափն էլ...

Հռոմսիմ.

(Թերթը քարգահի վրայ չափելով) Ա՛յ, տե՛ս, չափսը չէ գալիս։ (Նարգիզը ձեռքին մի նամակ բռնած՝ ուրախ, զուարթ մտնում է հապճեպով):

ՏԵՍԻԼ Գ.

Առաջինները եւ Նարգիզ.

Նարգիզ.

Շուշան ջան, քերթիցս նամակ կայ։ Ընդ՞. Հռոմսիմ ջան, ինչ լաւ, որ դուն էլ այստեղ ես։ Շուշան ջան, ա՛ռ կարդա։ (Տալիս է եւ Շուշան ակամայից վերցնում է):

Հռոմսիմ.

Նարգի՛զ, Սուքիաս աղան էլ ստացել է իրան կառավարչիցը։

Նարգիզ.

Նամակ բերողը ինձ էլ այդպէս ասաց։ Դեռ մեր տան տեղը նրան Սուքիաս աղայենց ծառան է ցոյց տուել (Շուշանին). Աղջի, դէհ կարդա՛։ Հռոմսիմ ջան, դու էլ լսիր։

Հռոմսիմ.

Լսում եմ։ Նարգիզ, քերթը կարդալ, գրել իմանում է, հա՞։

Նարգիզ.

Չէ՛։ Ուրիշի գրել տուած կը լինի։ Շուշան ջան, դէհ կարդա, բա՛լաս։

Շուշան.

(Հեգելով կարդում է): Մայ...րիկ... Ջան... Ա....ա...ա...ստ...ծու, Աստծոյ ո...ղ...որ ...թիւ...նով,—ողորմութիւնով...

Նարգիզ.

(*Երկիւղ է նայում*):

Շուշան.

(*Կարդում է*). *Նա . . . մա . . . կիցս,—նամակիցս վ . . . ե . . . ց,—վեց . . . օր . . . այբ ռա—առ, այբ ջէ—աջ—առաջ ս . . . ա . . . ղ,—սաղ ս . . . ա . . . վա . . . մաթ,—սաղ սալամաթ.*

Նարգիզ.

(*Հոռոմսիմին*) *Ա՜յ, այս կողմից քաղաքները շատ լաւ են. Աղջիկները գնում են վարժատուն, կարդում։*

Հոռոմսիմ.

Ճշմարիտ է։

Նարգիզ.

Շուշան ջան, չարունակիր։

Շուշան.

(*Կարդում է*) *Հա . . . ա . . . սայ,—հասայ. (մեկուսի) Երանի ոտքդ կոտրուէր, չհասնէիր։ (Կարդում է) տիւն եղ—տե, դատ սէ—դս—տեղս . . .*

Հոռոմսիմ.

Շուշանս էլ բաւականին լաւ է կարդում, ա՜յ։

Նարգիզ.

Լոյս դառնայ մեր գիւղի տէրտէրի հոգին։ (Շուշանին) Կարդա՛։

Շուշան.

(*Կարդում է*) *Իմ . . . կող . . . մա . . . նից . . . շատ . . . սիր . . . ով . . . շատ . . . կա . . . բо . . . տով բա . . . բեւ . . . կա . . . նես Շու . . . շա . . . նին . . .* (*Նամակը վայր է ձգում եւ հեկեկալով դուրս գնում. Նարգիզը զարմանում է*):

Հոռոմսիմ.

(*Ծիծաղ*) *Հա՛, հա՛, հա՛։ Հը՞մ, ինչի՞ այդքան բերանդ բաց մնաց, գլխի չընկա՞ր։*

Նարգիզ.

Չէ՛։

Հոռոմսիմ.

Ուրախութեան լաց. ուրիշ ոչինչ։

Նարգիզ.

Բայց . . . Հոռոմսիմ ջան . . .

Հոռոմսիմ.

Հա, ի հարկէ։ Քիչ էլ նրանից կայ։

Նարգիզ.

Նա ինչ՞ բան է։ Ինչ՞ ես ասում, աղջի։

Հոռոմսիմ.

Նարգիզ, կարծես դու ամենեւին ջահիլ չես եղել։

Նարգիզ.

Ինչի՞ չեմ եղել։ Հօ մօրից այսպէս չեմ ծնել։

Հոռոմսիմ.

Շատ լա՛ւ։ Բայց դու ուզում ես, որ ժամանակիս հարսներն էլ ինձ ու քեզ նման լինե՞ն։ Ջահիլ հարս, մարդուն կարօտել է։

Նարգիզ.

(Նամակը վերցնելով) Կորցրո՛ւ. ես իմ Շուշանիս այդպէս չէի իմանում։

Հոռոմսիմ.

Ցիմար ցիմար մի խօսիր։ Խեղճ հարսդ ի՞նչ արաւ։ Նարգիզ Ջան, ես թէեւ քեզ չեմ կարող խելք սովորեցնել, բայց կարծում եմ, որ մեծ ասածը փոքր ինչ էլ փոքրերի հալիցը պէտք է հասկանայ, մատա՛ղ։

Նարգիզ.

Շատ լա՛ւ. ես դրան հակառակ չեմ։ Միայն թէ ես ուզում էի նամակի...

Հոռոմսիմ.

Նամակի գլխաւոր ու հարկաւոր միտքը իմացար, պրծար։ Օրհնեալ է Աստուած, Քերոբդ սաղ սալամաթ տեղ է հասել։ Սուքիաս աղի կառավարիչն էլ հէնց այն էր գրել։

Նարգիզ.

Բարի։ Բայց ես ուզում էի մնացեալն էլ...

Հոռոմսիմ.

Մնացեալն էլ թող Շուշանը յետոյ կարդայ։

Նարգիզ.

Աղջի, չո՛ռ, կարծես դուն էլ մայր չես եղել։

Հոռոմսիմ Ջան, խնդրեմ, քո կողմից գնա՛, ասա՛, թող գայ, մնացածն էլ կարդայ։

Հոռոմսիմ.

Նարգի՛զ, ի՛նչ անհամբեր ես եղել։

Նարգիզ.

(Լաղագիւն) Աղջի՛, չո՛ռ, դէհ ես ուզում եմ որ... (նամակը համբուրում է)։

Հոռոմսիմ.

Դու ուզում ես կրակի վրայ ձէթ ածել. ուրիշ ոչինչ։

Նարգիզ.

Դէ՛հ ուրեմն դու էլի մօտը կայ։ Ես գնամ գոնէ մեր տէրտէրին կարդալ տամ։

Հոռոմսիմ.

Ա՛յ, դրան խօսք չունիմ։ Գնա՛։ (Նարգիզ նամակը համբուրելով գնում է շտապ շտապ։ Հոռոմսիմ ծիծաղում է) հա՛, հա՛, հա՛։ (Իսկոյն ձայնը կտրում եւ գնում է Շուշանի ձեռքիցը բռնած ներս բերում)։

ՏԵՍԻԼ Դ.

Հոռոմսիմ եւ Շուշան.

Հոռոմսիմ.

Դա ի՞նչ ցիմարութիւն էր։ Անաստուած, դեռ երդում էլ կերար։

Շուշան.

Քա, ես ի՞նչ ասացի որ...

Հռոմմիմ.

Կարծում ես երդումը մենակ խօսքո՞վ կարելի է խոռել. եթէ մի անգամ էլ այդ տեսակ յիմարութիւն կանես, այն ժամանակ ես էլ ոչ կը հետեւեմ, ոչ էլ կստուգեմ։ Ա՛յ դու, ա՛յ քո Քերոբը։ Նալլաթ քեզ էլ, նրան էլ։

Տուլան.

Բարի։ Այսուհետեւ...

Հռոմմիմ.

Անպատճա՛ռ։ Մէկ էլ ինչ այդպէս սատկած ճանճի նման պատն ի վեր ցցուել ես։ Ժիր եղի՛ր, ժիր։

Տուլան.

(Լալիս է) հը՛, հը՛, հը՛։

Հռոմմիմ.

Նորի՞ց։ Ուրեմն դու էլ իմ երեսն չես տեսնիլ։ (Իբրեւ թէ գնում է):

Տուլան.

(Բռնում է): Քա, մէկ սպասի՛ր։

Հռոմմիմ.

Գործ ունիմ։

Տուլան.

Այն որ խնդրեցի՞։

Հռոմմիմ.

Ոչ։ Ուրիշ գործ։ (Իբրեւ թէ գնում է):

Տուլան.

(Բռնում է) Քա, մէկ կաց։ Ախր սրա վերջը ինչ՞ պէտք է լինի, է՛հ։

Հռոմմիմ.

Ո՞ւմ վերջը։

Տուլան.

Ա՛յ, մեր այս անզգամ...

Հռոմմիմ.

Քերոբի՞ն։

Տուլան,

Հա։

Հռոմմիմ,

Անպիտան, դարչելի. իրա տան խաս մեղրով գաթան թողած, ուրիշի քարթոս հացի ետեւից է ընկած։ Անասնուա՛ծ։

Տուլան.

(Լալիս է) հը՛, հը՛, հը՛։

Հռոմմիմ.

(Փայփայելով) Սիրելիս, Շուշանս, դու փոքր ինչ համբերի՛ր. ես դրա ճարը կը գտնեմ։

Տուլան.

(Զոռում է) Ոաքերիդ մեռնիմ, Հռոմմիմ աբլա ջան։

Հռոմմիմ.

(Բարձրացնում է եւ կեղծորեն լալիս) Վեր կաց, վեր կաց, քամբաղդ աղջիկ. (հանգստանում է եւ լալիս):

Շուշան.

Հոռոմսիմ աբլա ջան, դուն ու քո Աստուած. (արտասուալից ձայնով). վերեւում Աստուած, ներքեւում հրամանքդ։—Ախր սա մի այնպիսի անտանելի կրակ է, որ սկեսոյրս ոչինչ չպիտի կարողանայ անել...

Հոռոմսիմ.

Խեղճ ողորմելին հազիւ հազ ժամ է դալիս։...

Շուշան.

Տեսնում ես էլի՞։ Ուրեմն զուր տեղը...

Հոռոմսիմ.

Ի հարկէ. զուր տեղը նրան էլ յանկարծական մահուան պատճառ ինչի՞ լինել։

Շուշան.

Ես էլ հէնց դրանից եմ վախենում, է՜հ։

Հոռոմսիմ.

ում եմ է՛լի։ Դու փոքր ինչ համբերի՛ր, ես դրա ճարը կը գտնեմ։—Թող հոգւոյս պարտքը լինի։

Շուշան.

Շնորհակալ եմ։ Բայց ինչ՞ պէս։

Հոռոմսիմ.

Փող, դրա համար մի քանի հարիւր մանէթ փող է հարկաւոր. ուրիշ ոչինչ։

Շուշան.

Քա, փողն ինչ՞ի համար է հարկաւոր։

Հոռոմսիմ.

Դու ջահել ես, չես հասկանում։

Շուշան.

(Վարանմամբ) Ի՞նչպէս թէ չեմ հասկանում։

Հոռոմսիմ.

Ես քեզ բան եմ ասում. (գլուխը շարժելով) ը՜մ ը՜մ, Շուշան ջան, անիրաւ աշխարհի երեսին փողն ինչե՞ր չի անիլ։ Զաւակս, ողջ արարող աշխարհը փողի վրայ է պտոյտ դալիս։ Փողով կարելի է ապահով ապրել։ Միմիայն փողով աշխարհը վայելել։ Փողով կարող ես անուն ու համբաւ ձեռք բերել։ Միմիայն փողով թշնամուդ, այսպէս, ոտքիդ տակն առնել, կոխ տալ, սպանել։

Շուշան.

Ճշմարիտ է. բայց ինչ՞ արած։ Մեր բաղդից փող էլ չկայ։ Հազիւ հազ մի կտոր ցամաք հաց կարողանում էինք ճարել։ Հիմի հաց ճարեցինք, դարդերս աւելացուցինք։ Էլի չքաւորութիւնը հազար անգամ լաւ չէր,—հը՜, հը՜, հը՜։

Հոռոմսիմ

Կորցրո՜ւ, դուն էլ, յիմա՛ր։ Չքաւորութիւնն ինչ՞ բան է։ Արնախում թշնամուս անգամ թող չկամենայ Աստուած։ Ողջ օրը չարչարուել, կէս կուշտ, կէս քաղցած՝ անկողին մտնել։ Կերակրի համն ու հոտը երազում տեսնել։ Արդ ու զարդն էլ հո՜, մրոքովն չանցկացնել։ Ա՜յ, դուք ձեզ վրայ նայեցէք է՜լի։

Շուշան.

Ճշմարիտ է։ Բաս Հոռոմսիմ աբլա ջան, հիմի՞...

Հոռոմսիմ.

Մի եւ նոյն բանը հազար անգամ չեն կրկնել։ Ես մէկ գնամ տեսնեմ որը որոց է։ (Գնում է):

Շուշան.

(Եսեւիցը գնալով) Մեռնեմ քեզի, Հոռոմսիմ աբլա ջան։

Հոռոմսիմ.

Լա՛ւ, լաւ։ Հա՛, տես, մոռացայ։ Վերցրու այս տասանոցը։ (Ձիւռում է Շուշանի ծոցը): Լաւ պահիր. չկորցնես։ (Գնում է):

Շուշան.

(Խոր մտածմանց մէջ ընկղմած՝ յետ դառնում): Հոռոմսիմ աբլաս չատ ճիշտ է ասում։ Զքաւորութեան նման վատ բան չկայ աշխարհիս վրայ։ (Տան փոռուածքը ցոյց տալով եւ ձեռքերը շարժելով) Ա՛յ, փսխթնե՛ր, չո՛ւլ չու՛լ կարպետնե՛ր, հազար տեղից կարկատած մինդարնե՛ր ու բարձեր։ Միմիայն մէկ նոր բմբուլ բարձ ունենք,—նրա էլ կիսից աւելին բուրդ է։ (Դարակը ցոյց տալով) Այն տեղ էլ... Նոյ նահապետի ժամանակից մնացած մի քանի պղնձեղէններ։ (Իւր նստած տեղը ցոյց տալով): Զմռանը..., երբ այստեղ նստած գործ եմ անում... քամին տակիցս... վըզ՛ըր վը՛զր փչում է... Ձիւնն էլ (երդիքը ցոյց տալով) այնտեղից... փաթիլ փա-

թիլ մաղում է...։ Դէ՛հ, Շուշան, հիմի դու վեր կաց, ձիւնը հաւաքիր..., ջնջոցը վերցրու, թաց-ցուքիւնը սրբիր։ Յետոյ էլ... փէտացած, կշկռուած մատներով նստիր ե՛ւ (խարգահին խրելով) այս անտէրը գործիր։ Եւ դու, Քերոբ, դեռ այդ տեսակ դալաթներ էլ ես անո՞ւմ, հա՞,—հը՛, հը՛, հը՛։ (Լպիս է): Նամակն ինչ՞ եղաւ։ Դեռ ինձ չատ բարով էլ է գրում, աներեսը։ Վեր առնեմ բզիկ բզիկ անեմ։ (Մաս է գալիս: (Մտախոհ մնում է Նարգիզ):

ՏԵՍԻԼ Ե.

Շուշան եւ Նարգիզ.

Շուշան.

Խաթուն մայրիկ, նամակն ինչ՞ արիր։

Նարգիզ.

Մօտս չէ։ (Ձեռքը ծածկաբար ծոցի վրայ է դնում): Ի՞նչ ես անում նամակը։

Շուշան.

Ուզում էի... կիսատը կարդամ։

Նարգիզ.

Տէրտէրը կարդայ. նամակն էլ մօտը թողի, որ պատասխանը գրէ։

Շուշան.

Ինչ՞ պատասխան պէտք է գրէ։

Նարգիզ.

Մեր բոլորի մասին միամտութիւն եւ շատ հարց, շատ բարով։

Շուշան.

(Մեկուսի) Չէ, չօռ ու ցաւս։

Նարգիզ.

Վաղո՞ւց է, Հոռոմսիմը գնացել է։

Շուշան.

Բաւականին ժամանակ կը լինի։

Նարգիզ.

Շուշան ջան, Հոռոմսիմն ասում էր Սուքիաս աղան է՛լ նամակ է ստացել, այնպէս չէ՞։

Շուշան.

Հա՛. կառավարչիցը։

Նարգիզ.

Երբ ես գնացի, Հոռոմսիմը քեզ չասա՞ց թէ կառավարիչը ինչ է գրել։

Շուշան.

Չէ՛, չասաց։

Նարգիզ.

Բարի։ Շուշան ջան ես գնում եմ Մարիամ խանումենց տուն։

Շուշան.

Ինչ՞ կալ։

Նարգիզ.

Այնպէս։ Մէկ էլ իմանամ թէ կառավարիչը ինչ է գրել։

Շուշան.

Բարի։

Նարգիզ.

(Գնում է եւ մեկուսի) Խեղճ հարսիս էլ ինձ հետ՝ չըվրդովելու համար, վա՛յ ինձ, ստիպուած եմ սուտ խօսել։ (Շտապով գնում է)։

Շուշան.

*(Ինքնիրան) Մօրդ հալալ կաթը, Քերոբ, քընթիցդ թափի, հա՞, քնթիցդ։ (Ման է գալիս)։ Տեսնես, Հոռոմսիմ աբլան փողն ինչի համար էր ուզում։ Փողերով արդեօք նա ինչ պիտի անէ։ (Միտք է անում)։ Որ կողմը շուռ եմ տալիս, խելքս մի բանի չէ հասնում... Բայց երեւի անհրաժեշտ է։ (Ծոցից հանելով տասանոցը)։ Այս էլ մի հատ տասանոց։ Մէկ հատ էլ՝ յետոյ։ Դրանից ինչ դուրս կուգայ։ Հոռոմսիմ աբլան ասում է, մի քանի հարիւր մանէթ փող է հարկաւոր։ Եւ՛ի հարկէ, այդպէս է։ Մէջտեղում մեծ փող է հարկաւոր, որ տանես բո՛լ բո՛լ դատաւորների ձեռները ճխտես եւ (ատամները կրճտացնելով) ա՛յն, ա՛յն, ա՛յն անպիտանին գիւղից դէպէչով ձեռաց յետ բե-

բել տաս եւ բանտը ձգել տաս։ Թո՛ղ գնայ, բանտումը սոված մեռնի, ա՛նամօթ, ա՛նպիտան դու։ (Մաև է գալիս)։ Միւս կողմից սաստիկ ուզում եմ իմանալ, թէ այն լկտի Անթառամն ո՞վ է արդեօք։ (Աչամները կրճատցնելով)։ Դարչե՛լի դու, դարչելի։ Ուրիշի մարդուն ձեռքիցը կը խլես, հա՞։ (Ցարձակուում է)։ Հիմի եւ եթ կացինը գլխիդ կուտամ, ձեռաց չան սատակ կանեմ։ (Շուտ շուտ մաև է գալիս եւ ապա հանդարտ ձայնով)։ Հազար երանի չէ՞ր, եթէ որ գիւղից այս անիծած քաղաքը եկած չըլինէինք։ (Խորասուզվում է մտքերի մէջ եւ յետոյ հոգեզմայլմամբ եւ արտասուալից) Մեր խաչն ու արօ՞տ... մեր չայիր չիմա՞ն... մեր ծաղկաւէտ դաշտեր... մեր բա՞ղձր, բա՞ղձր, կանանչ սարե՞ր... մեր կչկչան աղբրակնե՞ր,—հը՞, հը՞, հը՞։ (Լալիս եւ հեկեկում է։ (Տեսարանը փոխուում է Սուրիասի տան կաբինետը ըստ առաջին տեսարանի։ Սուրիաս եւ Հոռոմսիմ խօսում են)։

ՏԵՍԻԼ Զ.

Սուրիաս եւ Հոռոմսիմ.

Սուրիաս.

Հոռոմսիմ, դէ՛հ այն մէկ ասածդ գլուխ բերինք, պրծանք։ Էլ հիմի...

Հոռոմսիմ.

Այս մէկն էլ իմ ասածովը պէտք է լինի։ Եթէ ոչ, դու ես իմանում։ Բանը գլուխ չի գալ։

Սուրիաս.

Մի՞թէ։

Հոռոմսիմ.

Առանց զօրի անկարելի է նպատակի հասնել։

Սուրիաս.

Ուրեմն Շուշանն է՞լ խաթրով չի կամենալ։

Հոռոմսիմ.

Ոչ։ Այս ես հայելու նման պարզ տեսնում եմ։

Սուրիաս.

(Մեկուսի) Ի՜նչ դժբաղդ մարդ եմ եղել ես։ Այստեղ արհամարհանք, մուննա՛ղ. այնտեղ զօր, ոյժ։ (Բարձր) Հոռոմսի՛մ, ախր դու ասում էիր թէ մեծ պահապան չունը մենակ այդտեղ պառաւն է...։

Հոռոմսիմ.

Բայց չէ՞ որ Շուշանն էլ այդ չնորից ծնած եւ նրանց ձեռքերի տակ մեծացած լակոտն է։

Սուրիաս.

(Մեկուսի) Ի՜նչ դժբաղդութիւն։

Հոռոմսիմ.

Դու ես իմանում։

Սուրիաս.

(Մեկուսի) Նշանակում է ուսումով կնիկն էլ, առանց ուսումին էլ միեւնոյն զիբիլներն են։

Հոռոմսիմ.

Աւելի լաւ կը լինի վաղօրոք ես այս գործից ձեռքերս լուանամ, քան թէ ես իմ ձեռքով՝ վեր առնեմ կացինը եւ տանեմ քարին կպցնեմ։ Այն էլ ինչ քար,—ապառա՛ժ, մարմա՛ր։

Սուբիաս.

(Մեկուսի). Ափսոս չե՞ն այլազգի կնանիք։ Հէնց դրա համար էլ՝ մեր ազգը առաջ չէ գնում, է՛հ։

Հոռոմսիմ.

Այդ մէկը ճշմարիտ է։ Եթէ որ մեր Շուշանները այդ մասին լաւ միտք անեն, ի՛նչ ասել կուզի, որ էլ այդքան խեղճ ու թշուառ չեն մնալ։

Սուբիաս.

Շատ լա՛ւ, Հոռոմսիմ, բայց ախր զօռով գլուխ բերելն աւելի վատթար...

Հոռոմսիմ.

Ընդհակառակը։ Այդ դէպքում ես երաշխաւոր եմ։

Սուբիաս.

Վերջապէս մէկ անգամ, երկու անգամ զօռ. բայց հօ ամեն ժամանակ...

Հոռոմսիմ.

Դժարը հէնց առաջին անգամն է։ Մեր Շուշանները ես լաւ եմ ճանաչում։

Սուբիաս.

Չեմ իմանում։ Կարելի է...

Հոռոմսիմ.

Ես քեզ հաստատ բան եմ ասում։ Ա՛յ, տե՛ս, մազերս ես այս տեսակ գործերի մէջն եմ ճերմակացրել։ Եւ մինչ օրս,—օրհնեալ է Աստուած, ոչ մէկի մօտն էլ դեռ սեւերես չեմ դուրս եկել։ Հը՛մ, հիմի ի՞նչ ես ասում։

Սուբիաս.

Ուղիղն ասած, ես զժուարանում եմ։

Հոռոմսիմ.

Ա՛յ մա՛րդ, դու ինձ լսի՛ր։ Ես քեզ բան ասացի։ Երբ դու մէկ անգամ,—զօռով թէ խաթրով,—քո նպատակին հասար, էլ այնուհետեւ Շուշանը ինքը քեզ կինդրէ։ Էլ այնուհետեւ դու մենակ ճանճի պէս բը՛զ արա՛, նա ինքը մեղրը կը չինէ։

Սուբիաս.

Հաստատ իմանո՞ւմ ես, թէ մենակ ասում ես։

Հոռոմսիմ.

(Խոժոռ նայելուց յետոյ) Մենք այստեղ գործի մասին ենք խօսո՞ւմ, թէ փստայ բաղամ փայ անում։ (Ծիծաղ) հա՛, հա՛, հա՛։

Սուբիաս.

Ախր... մեծուռնանց խօսքն է. էշի վրայ հեծնելը մէկ ամօթ՝ վեր գալը երկու ամօթ...

Հոռոմսիմ.

Դու գործիդ նայէ։ Թէ կը հեծնես եւ թէ՛ մտրակդ ձեռքդ կառնես եւ քշէ՛ հա քշէ՛։ (Շուտ-ասելուկի նման): Որ չգայ բեռն ի վրան, որ եկաւ բեռն 'ի վրան. դիր 'ի գետին, եկ 'ի վրան։ (Գնում է եւ նորից յետ դառնում): Հա, իրաւ...

Սուրիաս.

Ինչ՞ կայ։

Հոռոմսիմ.

Նարգիզին հեռացնելիս՝ Շուշանի մօտ պահապան մնալու համար չլինի՞ թէ ինքդ ինձ առաջարկես։ Թող կնիկդ՝ ինքը կամ հէնց Նարգիզը առաջարկեն։ Զմոռանաս, հա՛։

Սուրիաս.

Բարի, բարի։

Հոռոմսիմ.

Մին բան էլ էի ուզում ասել։

Սուրիաս.

Ինչ՞, էլի՞ փող։

Հոռոմսիմ.

Լաւ. թող մնայ յետոյ։ (Գնում է եւ մեկուսի) Եա՛հ եօթնանուն Սուրբ Կարապետ։

Սուրիաս.

(Ինքնիրան եւ մանգալով): Անպիտա՛ն Մա-

րիամ, եթէ դու մարդ լինէիր, ես էլ ինչի՞ իմ ողջ գլուխը կը վեր առնէի եւ աւետարանի տակը կը դնէի։ Բայց հիմայ թէկուզ, հէնց մենակ քո ջգրու, պէտք է ասածս կատարեմ։ Եթէ հարկ լինի, մինչեւ անգամ հարստութեանս մի մասն էլ կը փչացնեմ եւ իմը կանեմ։ Դու ինձ չե՛ս սիրում, հա՛։ Ինքդ քեզ ուսումնական ես կարծում, հա՛։ Դրա համար էլ թը՛, թը՛, թը՛. բը՛, բը՛, բը՛ (ծաղածուրթիւններ է անում): Ա՛յ, ես քեզ ցոյց կը տամ թէ՝ ես ով եմ։ Այսը մինչեւ ե՛րբ, է՛հ։ (Զարացած գընում է): (Քիչ յետոյ մտախոհ մտնում են Մարիամ եւ Նարգիզ):

ՏԵՍԻԼ Է.

Մարիամ եւ Նարգիզ.

Նարգիզ.

Մեր տէրտէրը ինքը կարդաց։ (Ծոցից նամակ հանելով եւ տալով): Ա՛յ, ձեր հրամանքն էլ կարդացէք։

Մարիամ.

(Կարդում է. երբեմն երբեմն կանգ առնելով, ցաւակցական խօսքեր ասելով եւ նշաններ անելով): «Մայրիկ ջան։ Աստուծոյ ողորմութիւնով նամակիցս վեց օր առաջ սաղ սալամաթ հասայ տեղս։ Իմ կողմանից շատ սիրով, շատ կարօտով բարեւ կանես Շուշանին։ Աստուած ինձ մահից ազատեց։ Երէկ՝ կէս օրից յետոյ, պատահմունքով սղոցածս գերանը յանկարծ վայր ընկաւ, ինձ էլ հետը գլորեց։ Մազ

մնաց, ինձ տակն անէր, ճղէր։ Աստուած ազատեց։ Գերանը ձախ ոտքիս վրայ ընկաւ, ոսկորը կոտրեց։ Ձեռաց եախու կապեցինք։ Աստուծով մի քանի օրից կը լաւանամ եւ նորից կը սկսեմ գործը։ Մայրիկ Ջան, ամեն ինչ առանց ծածկելու նամակովս ահա յայտնեցի, որ միամիտ լինիք դու էլ, Շուշանն էլ։ Իմանում եմ, այս վատ խաբարը ձեզի շուտ կը հասնի։ Տակնուվրայ չլինիք։ Աւելի լաւ կը լինի, եթէ Շուշանին իմաց չանեա։ Քո որդի Քերոբ. իմ մատովս ճիտեցի»։

Նարգիզ.

(Որ ընթերցման ժամանակ Մարիամի հետ զարմացական եւ ցաւակցական խօսքեր էր ասում եւ նշաններ արտայայտում)։ Մարիամ խանում Ջան, տեսա՞ր—Հը՛, հը՛, հը՛ (լալիս է)։

Մարիամ.

(Մեկուսի) Ա՜խ, Տէր Աստուած, այսպէս էլ անսպասելի դժբաղդութիւն։ (Մաս է գալիս)։

Նարգիզ

Մեռնիմ քեզի, դէհ մէկ նեղութիւն քաշիր, աղայիս նամակն էլ կարդա՛։ Տեսնենք ձեր կառավարիչը ինչ է գրել։

Մարիամ.

Ես տեղեկութիւն չունեմ։ (Որոնում է)։ Ինչ նամակ, ինչ բան. Նա ինքը ինձ ոչինչ չէ ասել։ (Դուռն մօտ գնալով կանչում է)։ Գասպա՛ր, ա՜յ աղայ, Գասպար, չե՞ս լսո՛ւմ. չո՛ւտ։

Գասպար.

(Դրսից). Ի՞նչ է քեզ հրամայում։

Մարիամ.

Շուտ վազ տո՛ւր, գնա՛, աղին գտիր։ Ասա՛ գիւղի կառավարչից ստացած նամակը թող վեր առնի, գայ։ Շո՛ւտ։

Գասպար.

(Դրսից)։ Աղան այս րոպէին դուրս գնաց։

Մարիամ.

Դէ՜հ, չո՛ւտ, վազ տո՛ւր։ (Նարգզին) Մայրիկ Ջան, այդքան մի յուսահատուիլ. բան չկայ։ Ա՜յ, տեսնում ես, որդիդ ամեն բան պարզ գրել է. փառք Աստուծոյ, փորձանքից լաւ է պրծել...

Նարգիզ.

Ո՞վ է իմանում, պրծել է թէ... հը՛, հը՛, հը՛։

Մարիամ.

Ի հարկէ պրծել է։ Ա՜յ, այս րոպէին աղան կուգայ։ Նրանից էլ ամեն բան կիմանամ եւ ինչ որ պէտք է կը կարգադրեմ։

Նարգիզ.

(Զոհում է) Սրեւի՛դ մատաղ։ Վերեւ Աստուած, ներքեւ Ձեր հրամանքն ու աղաս։

Մարիամ.

(Իսկոյն բարձրացնում է) Քա՛, ի սէր Աս-

տուծոյ, վեր կացէք։ (Մեկուսի) Ա՛յ քեզ բաղդ Իբրեւ թէ խեղճերին կամեցանք լաւութիւն անել։ (Բռնում է արտասուքները եւ երեսը մի կողմն արած շպիտ է)։

Նարգիզ.

(Նկատելով Մարիամի տխրութիւնը)։ Մեռնիմ քեզի. դէհ հրամանքդ էլ մեր պատճառով... (Սուֆիաս շտապ մտնում է)։

ՏԵՍԻԼ Ը.

Առաջինները եւ Սուֆիաս.

Սուֆիաս.

(Կեղծ վրդովմունքով). Մարիամ Ջան, ինձ ի՞նչի ես կանչել։

Մարիամ.

Ներիր ինձ։ Հարկաւոր էիր։

Սուֆիաս.

Խնդրեմ։ Սա՞ է Քերոբի մայրը, հա՞։

Մարիամ.

Սա ինքը։

Սուֆիաս.

Նա՛նի, բարով։

Նարգիզ.

(Երկու ձեռքը կրծքին դրած խոր գլուխ է

տալիս)։ Բարով, հաղար բարի, մեռնիմ քեզի։ Տեսութիւններս բարի։

Սուֆիաս.

Շնորհակալ եմ։

Մարիամ.

Սուքիաս, գիւղի կառավարչից նամակ ես ստացե՞լ։

Սուֆիաս.

Հա։

Մարիամ.

Ե՞րբ։

Սուֆիաս.

Երէկ։ Նա՛նի, քեզ էլ նամակ կար որդուցդ։ Չե՞ս ստացել։

Նարգիզ.

Մեռնիմ քեզի, ստացել եմ։ Շնորհակալ եմ։

Մարիամ.

Կառավարիչը սրա որդու մասին քեզ ի՞նչ է գրում։

Սուֆիաս.

Ը՛ը... առանձին ոչինչ։ (Ծածուկ) Հարկաւոր չէ սրան յայտնել։

Մարիամ.

(Ծածուկ) Արդէն իմանում է։

Սուրիաս.

Մի՛թէ։ Նանի...

Նարգիզ.

Մեռնիմ ձեզի. ինձնից մի՛ ծածկէք։ Օրհնած լինի Աստուծոյ կամքը. ինչ էլ որ եղած լինի,—հը՛, հը՛, հը՛։

Սուրիաս,

Նա՛նի, բան չկայ...

Մարիամ.

Մայրիկ ջան...։ (Սուրիասին) Կառավարչի նամակը տուր տեսնեմ։

Սուրիաս.

Այս բոպէիս։ (Գրպանից գրասեղանի բանալին հանելով, զզրոցը բաց է անում եւ նամակը հանելով սկսում է մտիկ տալ)։ Ահա։

Մարիամ.

Կարո՞ղ եմ կարդալ։

Սուրիաս.

Ինչի՞ չէ։ (Նստում է գրասեղանի առաջ)։

Նարգիզ.

Կարե՞լի է, որ ես էլ մօտդ գամ լսեմ։

Մարիամ.

Ի՞նչպէս թէ կարելի է։ (Լուռ կարդալով մօտենում է Նարգզին)։

Նարգիզ.

Մեռնիմ քեզի, բարձր կարդա՛, ես էլ լսեմ։

Մարիամ.

Իսկոյն։ (Անձայն եւ շտապ կարդում է)։

Սուրիաս.

Դէհ որ կարդում ես, բարձր կարդա՛։

Մարիամ.

(Ծածուկ) Հօ առանձին...։

Սուրիաս.

(Ծածուկ) Ոչինչ։ Կարող ես։

Նարգիզ.

(Որ Սուրիասի եւ Մարիամի շարժումները դիտում էր սկզբից եւ յուզւում, միշտ զսպում է իրան)։

Մարիամ.

Մայրիկ, խնդրեմ քո նամակը մէկ ինձ տուր։ Կարծես միեւնոյն ձեռքը լինի։

Նարգիզ.

Ա՛հա, մատաղ։ (Տալիս է)։

Մարիամ.

(*Համեմատում է*): *Այո՛. միեւնոյն ձեռքն է։ Չէ՞, Սուքիաս.*

Սուքիաս.

Չեմ իմանում։

Մարիամ.

Ա՜յ, մտիկ արա։ (*Մօտենում է*):

Սուքիաս.

(*Նոյնպէս մօտենալով*): *Հա՛, նոյն ձեռքն է։*

Մարիամ.

Սա ի՞նչ է նշանակում։

Սուքիաս.

(*Ներքին յուզմունքը զսպելով*) *Չեմ իմանում։*

Նարգիզ.

(*Նրանց մօտ զալով*) *Մեռնիմ ձեզի. չէ՞ որ քերթաս գրել կարդալ չէ իմանում...*

Սուքիաս.

Հա՛, հա՛, իրաւ։ Մարիամ ջան, յիշո՞ւմ ես, երբ ամսականը վճարեցի...։

Մարիամ.

Հա. յիշեցի։

Սուքիաս.

Ա՜յ, մօր նամակումն էլ քերթողը գրում է. «մատս ճխտեցի»։

Նարգիզ.

Այդպէս է, մեռնիմ ձեզի, այդպէս։

Մարիամ.

(*Կարդում է կառավարչի նամակը։ Սուքիաս նստում է եւ ծխում*): «*Գերամեծար եւ գերազնիւ իմ ամենաողորմած սահապ տէր*» (*մեկուսի*). *եթէ յիմարութիւն չէ, ստոր չոզոքորթութիւն է։* (*Շարունակում է*): «*Ձեր գերազնուութեան ուղարկած քերթը վարպետը վեց օր առաջ սաղ սալամաթ տեղս հասաւ։ Նա շատ լաւ վարպետ է։ Առիւծի նման է աշխատում...*»

Նարգիզ.

(*Մարիամին*) *Հրամանքիդ չէ՞ի ասում։*

Մարիամ.

Ճիշտ է։ (*Կարդում է*). «*Ձեր հրամանոց նշանակած վարձը, օրական մէկ ու կէս մանէթ, թէեւ թանգ է, բայց վարպետ քերթը արժէ*»։

Սուքիաս.

Նա՛նի, խանումի խաթրի համար...

Մարիամ.

Համբերի. (*Կարդում է*): «*Որպէսզի միւս վարպետները չըարանջան, չնախանձեն, վարպետ քերթողին Ձեր հրամանի համաձայն պատուիրեցի, որ միւս վարպետներին ասի թէ՝ ինքն էլ օրական մէկ մանէթով է ծառայում։ Դժբաղդաբար վարպետ քեր-*

բոբը մի անսպասելի փորձանքի (Նարգիզ շարունակ է իր ուշադրութիւնը) հանդիպեցաւ։ Գերանը, որոյ վրայ կանգնած նա աղոցում էր, վայր ընկաւ եւ վարպետ Քերոբի ձախ ոտքը տակովն արաւ։ Նայած հիւանդի զգացած ցաւին ու կսկիծներին . . . (Նարգիզ լուռ շարիս է) պէտք է որ ոսկորը ջարդուած լինի։ Ես մի գառ մորթել տուի եւ կաշին ոտքին փաթաթել տուի։ Մի եւ նոյն ժամանակ ձիաւոր ուղարկեցի մօտակայ գիւղը, այս կողմերում յայտնի, մի ջառայ հրաւիրելու։ Բոլորովին միամիտ եղէք. յոյս Աստուած հիւանդը կը լաւանայ։ «Վարպետ Քերոբի յատուկ թախանձանքով, իւր բերանից մի երկու տող էլ իրան մօրը գրեցի, որ բուն եղելութիւնը խմանալով, քաղաքդ հասած եւ անշուշտ չափազանցեցրած լուրերին հաւատ չընծայէ։ Ձեր նուաստ եւ ամենախոնարհ ծառայ»։ Մայրիկ Ջան, ա՛յ, տեսնում ես, այստեղ էլ նոյնն է գրած, ինչ որ քո նամակումը։ Օրհնեալ է Աստուած, առանձին ոչինչ չկայ։

Սուքիաս.

Ոչի՛նչ. դատարկ, սովորական բան է։ Նանի՛, որդիդ կը լաւանայ. դու միամիտ եղիր։

Մարիամ.

Լաւ. դու ինչի՞ ինձ չյայտնեցիր։

Սուքիաս.

Ախր նամակը նոր էի ստացել։ Հէնց այն էր, դու տանից դուրս եկար, նամակ բերող ձիաւորը եկաւ։

Նարգիզ.

Աղա Ջան, Մարիամ խանում Ջան, մեռնիմ ձեզի ներեցէք համարձակութեանս. իմ սիրտը չէ դիմանում . . .

Սուքիաս.

Նանի, միամիտ եղիր։

Նարգիզ.

Մեռնիմ ձեզի, չէ՞ր կարելի, որ Քերոբիս այստեղ բերել տայինք։

Մարիամ.

(Որ ցարդ մտախոհութեամբ մաս էր գալիս)։ Ո՛չ, ո՛չ. այդ անկարելի բան է։

Սուքիաս.

Ես էլ եմ այդպէս կարծում։ Որդուդ հիմայ ժաժտալ չը լինիլ։

Նարգիզ.

(Երեսը մի կողմն արած՝ ձեռքերով ծնկներն է տրորում եւ ասում)։ Աղա Ջան, Մարիամ խանում Ջան, մեռնիմ ձեզի. նեղութիւն քաշեցէք, թող ծառան ինձ համար մի ձի ու ձիաւոր վարձէ։

Սուքիաս.

Որ ի՞նքդ գնաս . . .

Նարդիզ.

Հա՛, դուրբան։

Սուֆիաս.

Նա՛նի, ի՞նչ ես ասում...

Նարգիզ.

Մարիամ խանում ջան, արեւիդ մատաղ... ծախսը Քերոբիս վարձքիցը...

Մարիամ.

Մայրիկ, սպասի՛ր։ [Սուֆիասին) Սրան այստեղ պահել անկարելի է...

Սուֆիաս.

Ի՞նչ կարող ենք անել, է՛հ։—Հը՛մ, ինչ այդքան միտք ես անում։

Մարիամ.

Ա՛յ, ես ինչ եմ ասում։ Կառք վարձել եւ սրան վիրաբոյժ բժշկի հետ միասին...

Սուֆիաս.

(Միտֆ է անում):

Մարիամ.

Ինքս էլ շատ միտք արի։ Ուրիշ ելք չկայ։ Այնպէս չէ՞։

Սուֆիաս.

Դու ես իմանում։ Փող չեմ խնայում։ Ծախսն ինձանից. միայն թէ պատճառ չդառնանք...

Մարիամ.

Անշուշտ։ Այն տեսակ դէպք է, որ...։ Մայրիկ ջան, դու կը գնաս։

Նարգիզ.

(Ուրախացած) Հա՛։

Մարիամ.

Անպատճառ։ (Սուֆիասին): Խնդրեմ, գնաս, բժշկին խնդրես։

Սուֆիաս,

Ուրախութեամբ։

Նարգիզ.

Ի՞նչ, բժի՞շկ։

Մարիամ.

Հա՛, մայրի՛կ, հա՛։

Սուֆիաս.

Նանի, քեզ հետ բժիշկն էլ թող գայ։

Նարգիզ.

Չէ՛, չէ՛, չէ՛։ Եթէ բժիշկ գայ, երեխս ոտքը կը կտրէ։

Սուֆիաս.

Նանի...

Նարգիզ.

Չէ՛, չէ՛, չէ՛։

Սուֆիաս.

Մայրի՛կ, ինձ լսիր։ — Չի կարիլ։ Ես կասեմ, որ չկարէ...

Նարգիզ.

Կարելի է կարեց. յետո՞յ։

Մարիամ.

Բժշկին ես կասեմ. կը խնդրեմ։

Սուֆիաս.

Նանի՛, բժիշկը առանց քո կամքին...

Նարգիզ.

Մեռնիմ ձեղի. ինձ չխաբէք։

Սուֆիաս.

(Ծիծաղ) Հա՛, հա՛, հա՛։

Մարիամ.

Թախանձիր, որ հէնց այսօր բժիշկը ճանապարհ ընկնի։

Սուֆիաս.

Բարի, (գնում է):

Նարգիզ.

Ես էլ գնամ հարսին խմաց տամ... (Կանգ է առնում): Հապա Շուշանս..., Թոռնե՞րս...

Մարիամ.

Մայրիկ ջան, համբերիր։ (Դռան մոտ գնում

եւ կանչում է). Դասպա՛ր, չուտ գնա՛, հացթուխին կանչիր։ Հը՛մ, չո՛ւտ։

Դասպար.

(Դրսից). Հոռոմսիմ արլայի՞ն

Մարիամ.

Հա, չո՛ւտ։ Ա՛յ տղայ, կառք նստի՛ր, կառքով էլ ելիր։ Մայրիկ ջան, լաւ չի՞ լինիլ, հարսիդ ու թոռներիդ Հոռոմսիմին...

Նարգիզ.

(Ուրախացած). Հա՛։ Հէնց նրանից լաւ պահապան չի լինիլ։

Մարիամ.

Ես էլ եմ այդպէս կարծում։

Նարգիզ.

Շատ լաւ։ Բայց ես վախենում եմ, որ եթէ Շուշանս այս բանը լսէ...

Մարիամ.

Այդ էլ է ուղիղ...

Նարգիզ.

Ես հէնց դրա համար էլ տէրտէրի կշտից հրամանքիդ մօտ եկայ ուղղակի։

Մարիամ.

Թող Շուշանը չլսէ...

Նարգիզ.

Հա՛, մեռնիմ քեզի։ Նրանից ծածկենք,— ջահիլ է, ես վախենում եմ թէ...

Մարիամ.

Բարի, բարի։

Նարգիզ.

Հրամանքդ էլ, ես էլ Հոռոմսիմին խնդրենք, մենակ գիշերները գայ...

Մարիամ.

Թէկուզ ցերէկներն էլ։

Նարգիզ.

Դէհ ես գնամ, պատրաստուիմ։ (Գնում է):

Մարիամ.

(Ձէ թողնում). Համբերիր։ Վա՛յ թէ դու չըկարողանաս...

Նարգիզ.

Լաւ. ինչպէս որ կը հրամայես։

(Սուֆիան մնում է):

ՏԵՍԻԼ Թ.

Առաջինները եւ Սուֆիան,

Սուֆիան.

Մարիամ ջան բժշկին տեսայ...

Մարիամ.

Այսպէս շո՞ւտ։ Ո՞րտեղ։

Սուֆիան.

Հէնց մեր փողոցում. կառքով գնում էր։

Մարիամ.

Համաձա՞յն է գնալու։

Սուֆիան.

Հա։ 30 մանէթ խոստացայ։

Մարիամ.

Բարի։

Նարգիզ.

Քերոբիս վարձիցը...

Մարիամ.

Ա՛ էնիկ, սպասիր։ (Սուֆիանին) Ասացի՞ր, որ մայրիկին էլ հետը վերցնի։

Սուֆիան.

Ասացի։ համաձայն է։

Նարգիզ.

Աղա՛ ջան, ասացի՞ր, որ երեխիս ոտքը չկտրէ։

Սուֆիան.

Հա՛, հա։

Մարիամ.

Ա՛ կնիկ, ես քեզ ասում եմ...

Նարգիզ.

Բարի, բարի։ Ես մեղայ Աստուծոյ։
(Շնչասպառ մտնում է Հոռոմսիմ):

ՏԵՍԻԼ Ժ.

Առաջինները եւ Հոռոմսիմ.

Հոռոմսիմ.

Ո՛ւֆ. չունչս կտրուեց։

Սուբիաս.

(Մարիամին ծածուկ). Դո՞ւ ես կանչել սրան։

Մարիամ.

Հա։

Սուբիաս.

Ինչի՞ համար։

Մարիամ.

Հարկաւոր է։

Հոռոմսիմ.

(Իմիմիրան) Սանդուխներն էլ դի՛ք, դի՛ք, ո՛ւֆ։

Նարգիզ.

(Հոռոմսիմին մոտ է գնում եւ յուռ ու մուռջ

նրա հետ խօսում: Հոռոմսիմ զարմացման եւ կարեկցութեան նշաններ է արտայայտում):

Սուբիաս.

(Մարիամին). Ի՞նչ բանի համար է հարկաւոր։

Մարիամ.

Ո՛ւֆ, Սուբիաս։ Մէկ համբերիր, է՛հ։

Սուբիաս.

Ինչի՞ ես նեղանում։ Ախր դու այս տունը կատարեալ անկեղանոց դարձրիր...

Հոռոմսիմ.

(Վեր է կենում). Աղա՛ Ջան, ներող եղիր։

Սուբիաս.

Մեղաւորը դու չես, այլ... (Կնոջը ցոյց տալով):

Մարիամ.

(Խոժոռ հայեացք է ձգում):

Սուբիաս.

Բարի, բարի. ինչ ուզում ես արա՛։ (Զարացած գնում է եւ իրեւ թէ մեկուսի), թէ՛ փողդ ծախսի՛ր եւ թէ...

Հոռոմսիմ.

Մարիամ խանում, կարծես աղան...

Մարիամ.

Ոչինչ. ոչինչ։

Հոռոմսիմ.

Ճշմարիտ է, իմ արածը համարձակութիւն էր, բայց Աստուած է վկայ, որ չունչս կտրուած էր։

Մարիամ.

Քեզ ասում եմ, ոչինչ։ Հոռոմսիմ, ա՛յ, ինչի՞ համար ես քեզ կանչեցի։

Հոռոմսիմ.

Խե՜ղճ Նարգիզ...

Նարգիզ.

(Լուռ արտասուում է)։

Մարիամ.

Ես էլ, մայրիկն էլ, խնդրում ենք քեզ...

Նարգիզ.

Հա՛, Հոռոմսիմ ջան, խնդրում ենք...

Հոռոմսիմ.

Հրամայեցէք։

Մարիամ.

Մինչեւ մայրիկի գնալ վերադառնալը...

Հոռոմսիմ.

Հա։

Մարիամ.

Սրա հարսի ու թոռների մօտ պէտք է մնաս. կարո՞ղ ես։

Նարգիզ.

Հոռոմսիմ ջան. մենակ գիշերները...

Մարիամ.

Երախտիքդ չեմ մոռանալ։

Հոռոմսիմ.

Վո՜ւյ, ձիւնն իմ գլխին։ Դա՞ ինչ խօսք է։

Նարգիզ.

Մարիամ խանում ջան, ախր Հոռոմսիմն էլ մերն է։

Հոռոմսիմ.

Քա՛, 'ի սէր Աստուծոյ, ձայներդ կտրեցէք։

Մարիամ.

Լաւ. այդ իմ գիտնալիքն է։ Այս լաւութիւնն էլ կարող ես սրանց անել, այնպէս չէ՞։

Հոռոմսիմ.

Ուրախութեամբ։ Դա ի՞նչ լաւութիւն է։ Խեղճ Քերոբ։ Նարգի՛զ, ուզո՞ւմ ես, հարսդ ու թոռներդ թող գիշերները գան, մեր տանը քնանան։

Նարգիզ.

Աղջի՛, ձեր տանն էլ այնքա՞ն...

Հոռոմսիմ.

Ո՛չ ոք չկայ։ Մենակ ես եմ։

Մարիամ.

Բա՛ որդի՞ք ու հարսնե՞ր...

Հռոմսիմ.

Մի ժամից յետոյ նրանք գնում են «Կարմիր Աւետարան» (Երկիւղածութեամբ) Մեռնիմ նրան։ Չէ՞ որ վաղը չէ, միւս օրը նրա տօնն է։ Ուխտաւորների սայլերով արդէն քաղաքը լցուել է։

Նարգիզ.

(Բազկաստարած) Ըը՛մմ, թող իմ թերոբս լաւանայ, ես իմ ոտքերովս գնամ։

Մարիամ.

Բարի. այդ մնայ. Հռոմսիմ, մայրիկ, այդ մասին դուք ձեզ ու ձեզ եւ Շուշանի հետ խօսեցէք...

Հռոմսիմ.

Լա՛ւ։

Մարիամ.

Եւ ինչպէս որ յարմար համարեցիք...

Նարգիզ.

Լաւ, լաւ։ Մեռնիմ քեզի։ Հրամանքիդ էլ այսքան դլխացաւանք...

Հռոմսիմ.

Այդ ամենը հեշտ է։ Կամ Շուշանին ու երեխաներին կը բերեմ մեր տուն, կամ ինքս... Բայց ուրիշ դժուարութիւն կայ, ուրի՛շ։

Մարիամ.

Ի՞նչ դժուարութիւն։

Հռոմսիմ.

Ախր այն խեղճ հարսին ի՞նչպէս յայտնենք թէ...

Մարիամ.

Ճշմարիտն ասեմ, ինքս էլ չեմ իմանում, թէ ի՞նչ խորհուրդ տամ։ Հռոմսի՛մ, մայրի՛կ, ա՛յ, դուք ինքներդ, ձեզ ու ձեզ խօսեցէք։ (Գնում է)։

Նարգիզ.

Կուրանամ ես. խեղճ խանումս մեր պատճառով...

Հռոմսիմ.

(Մի ոտքի միտ անելուց յետոյ). Նարգի՛զ, ես քեզ մի խորհուրդ տամ։

Նարգիզ.

(Հեգաբերութեամբ) Ի՞նչ խորհուրդ, Հռոմսիմ Ջան։

Հռոմսիմ.

Ես ասում եմ թէ՝ Շուշանիս ասենք, դու այսօր մերոնց հետ «Կարմիր Աւետարան» ուխտ պիտի երթաս։

Նարգիզ.

Աղջի՛, եթէ այդպէս ասենք, Շուշանս անպատճառ կը պահանջէ, որ իրան էլ տանեմ։

Հոռոմսիմ.

Նա չատ բան կը պահանջէ. մի՞թէ դա քեզանից կախուած չէ՞։

Նարգիզ.

Ի հարկէ . . .

Հոռոմսիմ.

Շուշանիս կասենք թէ՝ մերոնց ուխտ գնալու առիթից օգտուելով, դու ինքդ էլ իբրեւ «Կարմիր Աւետարան» ուխտ ես գնում։ Բայց բժշկի հետ կը գնաս գիւղ, Քերոբիս մօտ։ Իսկ ես ձեզ ճանապարհ ձգելուց յետոյ, մեր դուռը կը կողպեմ եւ կը գնամ ձեր տուն, Դէ՛հ գնանք, գնանք, չուտ պատրաստուի՛ր։

Նարգիզ.

Բա՛յց, Հոռոմսիմ ջան, չէ՞ որ բժիշկը վաղն է գիւղ գնալու։

Հոռոմսիմ.

Դու գիշերս մեր տանը քնիր։ Գնանք։

Նարգիզ.

Գնանք։ Հոռոմսիմ ջան, ողորմած Աստուածը... (Գնում են):

ՏԵՍԻԼ ԺԱ.

Մարիամ. (մնում է)

Անբա՜ղդ ընտանիք։ Կարծում էի, որ լաւութիւն էի անում։ Հը՞մ։ Այժմ տակից ինչ է դուրս

գալիս։ Աստուած մի՛ արասցէ, եթէ որ խեղճ Քերոբի ոտքը վնասուի. յետո՞յ ի՞նչ պէտք է արած։ Անկարելի է յուսալ, որ այս անպիտան Սուքիասը նրանց ապահովէ։ Ես կարծեմ նա Քերոբի մի տարուայ վարձն էլ հազիւ թէ համաձայնի վճարել։ Իսկ իմ զարդերը այնքան քիչ կարժենան, որ առ առաւելն, նրանց մի երկու տարուայ ապրուստի հազիւ կը բաւականանան։ Ի՞սկ այնուհետեւ։ (մտածում է):

ՏԵՍԻԼ ԺԲ.

Մարիամ եւ աղախին.

Աղախին.

Բժիշկը կամենում է ձեզ տեսնել։

Մարիամ.

Խնդրիր։ (Աղախինը գնում է): (Դէպի դուռն է գնում) Պարոն բժիշկ, խնդրեմ։ (Բժիշկը մտնում է):

ՏԵՍԻԼ ԺԳ.

Մարիամ եւ Բժիշկ.

Բժիշկ.

Տիկին Մարիամ... (ձեռք են տալիս միմեանց):

Մարիամ.

Խնդրեմ։ (Նստում են): Պարոն բժիշկ, չատ շնորհակալ եմ, որ յանձն էիք առել . . .

Բժիշկ.

Ճշմարիտ է, ես ձեր ամուսնոյն խոստացայ՝ վաղն եւ եթ գիւղ գնալ...

Մարիամ.

Հրամերէք...

Բժիշկ.

Բայց որովհետեւ մի կողմից ցերեկը շոգ է լինում, միւս կողմից վաղը չէ միւս օրը՝ ես անպատճառ քաղաքումս պէտք է լինիմ, ուստի լաւ կը լինէր հէնց այս երեկոյ հիւանդի մօր հետ ճանապարհ ընկնէինք։ Պարզ, լուսնեակ գիշեր։—Մի քանի ժամից կը հասնէինք գիւղ։ Այս գիշեր եւ վաղը մինչեւ երեկոյ՝ ինչ հարկն էր, կանէինք հիւանդին եւ հէնց վաղն երեկոյեան գիւղից դուրս կուգայի։ Կարելի՞ է արդեօք...։ Կարող չէ՞ր հիւանդի մայրը...

Մարիամ.

Կարծում եմ որ... Ինչո՞ւ չէ։

Բժիշկ.

Ուրեմն (վեր է կենում): Խնդրեցէք պարոն Սուքիասին։

Մարիամ.

(Նոյնպէս վեր է կենում). Ուրախութեամբ։

Բժիշկ.

Երեք ժամից յետոյ...

Մարիամ.

Ամեն ինչ պատրաստ կը լինի։ Պառաւն էլ, կառքն էլ, ծառան էլ։ Պարոն բժիշկ, եթէ միայն հնար կայ, խնդրեմ կարգադրեցէք, որ հիւանդին սայլով այստեղ, քաղաք փոխադրեն։

Բժիշկ.

Տեսնենք։ Այդ արդէն հիւանդին տեսնելուց յետոյ...

Մարիամ.

Ի հարկէ։ Ես կամեցայ ձեզ խնդրել...

Բժիշկ.

Մեծ սիրով, մեծ սիրով, տեսնենք։

Մարիամ.

Շատ շնորհակալ եմ. ցտեսութիւն (ձեռքը թոթվում է)։

Բժիշկ.

(Գնում է եւ մեկուսի) Եթէ մեր հարուստների կնանիքը սրա, թէկուզ կիսի չափ լինէին, շատ տառապեալներ...

Մարիամ.

Կառավարիչը գրում է, որ ասիածի նման է աշխատում։—Թերեւս չափազանց եռանդից, կամ գուցէ, խամութիւնից...։ Ինչ էլ որ լինի, կատարեալ դժբաղդութիւն է։ (Մտածում է)։ Մարդիկ

ի՞նչ բանի համար են ծնում։ Մի օր, անգամ մի ժամ սրտի եւ հոգու անդորրութիւն չկայ. ոչ հաբեստի չքեղ պալատում, ոչ աղքատի գծուծ խրճիթում։

Վարագոյր

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Նարգզի տունը ըստ առաջնոյն: Առաւօտ է: Հոռոմսիմ նստած միտֆ է անում։ Շուշան երկու բաժակ չայ ձեռին մտնում է։ Մի բաժակը դնում է Հոռոմսիմի առաջ, միւսը ինքն է վերցնում եւ նստում: Խօսելիս նրանք խմում են:

ՏԵՍԻԼ Ս.

Շուշան եւ Հոռոմսիմ.

Շուշան.

Հրամեցէք (չայ է տալիս):

Հոռոմսիմ.

Շնորհակալ եմ (վերցնելով): Շուշան ջան, ի՞նչ շատ լու կայ եղել ձեր տանը։

Շուշան.

Հին տուն է. որքան էլ որ մաքրում եմ, նորից փոշին անպակաս է լինում։ Այդ պատճառով էլ...

Հոռոմսիմ.

Ողջ գիշերը այնքան կծոտեցին, որ հազիւ մի երկու ժամ կարողացայ քնանալ։ Կարծես դուն էլ անհանգիստ էիր։ Երեւի քեզ էլ էին կծոտում, ա՞յ։

Շուշան.

Ինձ կծոտողին Աստուած բարի տայ։—Անպիտան մարդս իմ սրտին այնպիսի վէրքեր տուեց, որ լուանների կծոտելն էլ ո՞վ է զգում։

Հոռոմսիմ.

Ուրեմն դու այն անպիտանի պատճառո՛վ անհանգիստ էիր, հա՞։

Շուշան.

Հապա էլ ուրիշ ի՞նչ պատճառով։ Դրանից էլ մեծ պատճառ կարո՞ղ է լինել։ Աստուծոյ ողորմութիւնն էր, որ սկեսոյրս ուխտ գնաց։ Գոնէ հիմի ես ու դու՝ այդ բանը կը ստուգենք։

Հոռոմսիմ.

Տեսնե՞նք։ Ա՛յ, ձեռաց չայս խմեմ, պրծնեմ, գնամ տեսնեմ թէ՝ որը որոց է։ (Սկսում է շուտ շուտ խմել):

Շուշան.

Մի շտապի՛ր, այն անպիտանի պատճառով կոկորդդ կայրես։

Հոռոմսիմ.

Սիրտս համբերո՞ւմ է։ Գարշելի՜ Անթառամ։

Շուշան.

Հոռոմսիմ աբլա ջան, ասա խնդրեմ. այն անապիտանի դրսի տեսքը գոնէ ի՞նչպէս է։

Հոռոմսիմ.

Ոչ դրսի, ոչ էլ ներսի տեսքը իսկի մի բանի նման չէ։

Շուշան.

Ուրեմն գեղեցի՞կ էլ չէ՞։

Հոռոմսիմ.

Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ բան. ի՞նչ ես ասում։ Գոյնի կողմից կատարեալ մի աբաբի ճուտ...

Շուշան.

Հա։

Հոռոմսիմ.

Սայլի ցիցի նման՝ գունէն այսպէս դուրս ցըցուած...

Շուշան.

Է՛հ...

Հոռոմսիմ.

Լաբարօշ չրթունքները, բաղուկի տերեւների պէս, կախ ընկած...

Շուշան.

(Արտասուալից ծիծաղ) հա՛, հա՛, հա՛։

Հոռոմսիմ.

Հաւատացնում եմ քեզ։ Թչերը, հացի բաթաթի պէս, այսպէս ուռած, փքուած։

Շուշան.

(Արտասուալից ծիծաղ) հա՛, հա՛, հա՛։

Հոռոմսիմ.

Ճակատը նոր հերկած արտի նման կոշտ ու բլոշտ դարձած...

Շուշան.

(Զայրոյթի նշաններ—արագ շնչառութիւն)։

Հոռոմսիմ.

Անպիտանի աչքերը մենակ...

Շուշան.

(Բարկութեամբ) Աչքերն ի՞նչ։

Հոռոմսիմ.

Բաւականին գեղեցիկ են։

Շուշան.

Կորցրո՛ւ։

Հոռոմսիմ.

Հա՛, աղջի՛, հա՛։ Խոշո՛ր, կապուտակ. կարծես Խորասանի ջուխտակ փիրուզաներ լինին։

Շուշան.

Շատ լաւ։ Բայց մենակ աչքերի համար...

Հոռոմսիմ.

Ի՞նչ կարող ես անել։ Սէր ասածդ նման է ճանճի։ Երբեմն գնում է սիրուն կնանիքների թըշ-նների վերայ է թառում. երբեմն էլ աղբակոյտերի վրայ նստում։ Եթէ ոչ. եթէ Քերոբը խելք ունենար, քեզ թողած, Անթառամի նման անպիտանի վրայ սէր կը ձգէ՞ր։

Շուշան.

Ի հարկէ. Հոգս նրա գլխին։ Հը՛, հը՛, հը՛։

Հոռոմսիմ,

Ա՛յ մտիկ։ Քո այդ կամար կամար յօնքե՛րը, այդ զալամթրաչ թերթեւիճնե՛րը, քահրիբարի նման եղան այդ աչքե՛րը, այդ ալվան ալվան կարմիր թշերը... (Թշից բռնելով) ը՛մ, Սուքիաս աղան կծէ...

Շուշան.

(Ցնցվում է եւ Հոռոմսիմի ձեռքը յետ անում): Քա, ի՞նչ ես անում, Հոռոմսիմ արլա։

Հոռոմսիմ.

(Ծիծաղ): Հա՛, հա՛, հա՛։

Շուշան.

Ինչո՞ւ համար ես ծիծաղում։

Հոռոմսիմ.

Շուշան ջան, միտքս յանկարծ ուրիշ բանի վրայ գնաց, հա՛, հա՛, հա՛։

Շուշան.

Ի՞նչ բանի վրայ։

Հոռոմսիմ.

Սուքիաս աղան...

Շուշան.

Մե՞ր Սուքիաս աղան։

Հոռոմսիմ.

Հա։ Մարիամ խանումի մարդը։

Շուշան.

Բարի։ Յետո՞յ։

Հոռոմսիմ.

Դու հօ իմանում ես, որ նա չափից դուրս առատասիրտ է...

Շուշան.

Իմանում եմ։

Հոռոմսիմ.

Իրան գիմող անգործ մարդին իսկոյն գործի կը դնէ...

Շուշան.

Հա։ Ա՛յ, ինչպէս Քերոբին։

Հոռոմսիմ.

Շոր չունեցողներին շորեր կընծայէ...

Գուլան.

Ի՞նքը թէ կնի՞կը։

Հռոմսիմ.

Աղջի՛, չէ որ փողն տղամարդկանցն է լինում։

Գուլան.

Հա՛, իրա՛ւ։

Հռոմսիմ.

Ո՛ր քեռսիք կնիկարմատը որ փողի հարկաւորութիւն է ունենում...

Գուլան,

Ի՞նչ բանի համար։

Հռոմսիմ.

Մարդ է ու աշխարհք։ Պարտքերը վճարելու... մի որ եւ է կեղտոտ գործ ծածկել տալու համար...

Գուլան.

(Մեծ ուշադրութեամբ)։

Հռոմսիմ.

Իսկոյն գնում է, խնդրում։ Սուքիաս աղան էլ ձեռաց տալիս է։

Գուլան.

Հռոմսիմ աբլա՛, դա ի՞նչ լաւ մարդ է եղել։

Հռոմսիմ.

(Շրթնափակ) Ը՛մ։ Մեռնիմ ես նրա բարեսիրտութեանը։

Գուլան.

Հռոմսիմ աբլա ջա՞ն...

Հռոմսիմ.

Սուքիաս աղան մենակ մի տարօրինակ սովորութիւն ունի...

Գուլան.

Ի՞նչ սովորութիւն։

Հռոմսիմ.

Ոչինչ։ Անմեղ, երեխայական։

Գուլան.

Ձեմ հասկանում։

Հռոմսիմ.

Փողը տալուց յետոյ՝ նա այսպէս (ուզում է թշիցը բռնել)։

Գուլան.

(Յեռ զնալով) Քա՛, էլի ի՞նչ ես անում։

Հռոմսիմ,

Մի՛ վախենալ։ Ես մենակ Սուքիաս աղի սովորութիւնը ուզում եմ քեզ հասկացնել։

Գուլան.

Խօսքով հասկացրո՛ւ։ Էլ ձեռքդ ինչի՞ ժամ ես տալիս. ես հօ խուլ չե՞մ։

Հոռոմսիմ.

Աղջի, չո՛ռ, ես էլ հո տղամարդ չե՞մ, որ...

Շուշան.

Իմանում եմ։ Բայց...

Հոռոմսիմ.

Հա։ Փողը տալուց յետոյ՝ կնիկարմատի թշից այսպէս բռնում է եւ չար երեխայի նման կզմթում. յետոյ իսկոյն բաց թողնում։

Շուշան.

Իրան դիմող ամեն մի կնիկարմատի՞ էլ։

Հոռոմսիմ.

Հա՛. ամենքին էլ։

Շուշան.

Ջահիլ կնիկարմատների՞ն էլ։

Հոռոմսիմ.

Հա. անխտիր։

Շուշան.

Դալաթ է անում. իրաւունք չունի։

Հոռոմսիմ.

Դէհ հիմի... երեխայութիւն...

Շուշան.

Ո՛չ. Հոռոմսիմ աբլա՛, կարելի է, որ դու նրա մտքի տակինը չես հասկանում։

Հոռոմսիմ.

Կարելի է թէ՝ չեմ հասկանում։

Շուշան.

Ի հարկէ. նա իրան մտքումը կարող է ուրիշ բան ունենալ։

Հոռոմսիմ.

Ի՞նչ բան։

Շուշան.

Գէշ, շատ գէշ բան։

Հոռոմսիմ.

Սիրալուտ ես։ Քանի քանի անգամ նա թշիցն էլ է բռնել։

Շուշան.

(Ծիծաղ). Հա՛, հա՛, հա՛։

Հոռոմսիմ.

Ի՞նչ. չե՞ս հաւատում։

Շուշան.

Հաւատում եմ։ Միայն թէ, Հոռոմսիմ աբլա ջան, խաթրդ չմնայ...

Հոռոմսիմ.

Ի՞նչ կայ։

Շուշան.

Սուքիաս աղի ախորժակի վրայ եմ ես զարմանում. հա՛, հա՛, հա՛։ (Մեկուսի)։ Դրուստ որ ճանճ։

Հռոմսիմ.

Ինչ կարող ես անել։ Սմենն մարդու մէջ էլ մի մի խորթ բան կայ։

Շուշան.

Խորթ բան էլ կայ, խորթ բան էլ։ (Մեկուսի)։ Քա՛, մեղայ։ Ուրիշի կնկայ թշիցը բռնեմ, կզմթեմ, թէ փող եմ ընծայում։ կորցրո՛ւ։

Հռոմսիմ.

Հը՛մ, քեզ ու քեզ ի՞նչ ես վնթվնթում։

Շուշան.

Ոչինչ։ Այն եմ ասում թէ՝ եթէ որ Սուքիաս աղան այդ տեսակ բնութիւն ունի,—ա՛յ իրան կնիկը,—թող ինչ ուզում է, անէ։ Էլ ուրիշների...

Հռոմսիմ.

Քա՛, աղջի՛, նա իրան կնկայ հետ էլ է այդպէս անում։

Շուշան.

Ես դրան խօսք չունիմ։ Հալալ լինի։ (Մեկուսի)։ Սմենն մարդ իրան ապրանքի տէրն է։ (Բարձր)։ Հռոմսիմ աբլա ջան, դու ինձ այս ասա՛, եթէ որ Քերոբի համար լսածդ դրուստ եղաւ...

Հռոմսիմ.

Անթառամի՞ հետ։

Շուշան.

Հա։ Այն լկտիի հետ։ Եթէ որ այդ բանը դրուստ եղաւ։ Եւ մեզ էլ փող հարկաւորեցաւ...

Հռոմսիմ.

Անպատճառ կը հարկաւորի։ Որպէս զի Անթառամին ձեռաց քշել տանք այստեղից...

Շուշան.

Անթառամի՞ն քշել տանք, թէ փուչ արեւ Քերոբին բանտ ձգել տանք։

Հռոմսիմ.

Նրան էլ, նրան էլ։

Շուշան.

Ուզո՞ւմ ես, ոսկի էլ դարնել տանք։

Հռոմսիմ.

Աւելի լաւ։

Շուշան.

Մի բան էլ. Հռոմսիմ աբլա ջան։

Հռոմսիմ.

Հա ջան։ Ի՞նչ բան։

Շուշան.

Արդեօք կարելի չէ՞, որ դատաւորներին խնդրենք, Քերոբին առանց փողի թէ ոչզի զարնեն, թէ բանտը ձգեն...

Հռոմսիմ.

Իսկ Անթառամի՞ն։

Շուշան.

Լա՜։ Թող նրան էլ այստեղից քշեն։

Հռոմսիմ.

Հապա՛ ոչզի՞...

Շուշան.

Չէ՜։ Դուն էլ ի՞նչ ես ասում։ Նաչալնիկի առաջ, այնքան տղամարդկանց առաջին...

Հռոմսիմ.

Այդ էլ է դրուստ։ Այնքան տղամարդկանց առաջին...

Շուշան.

Ի հարկէ՛։ Ամօթ բան է։ Դու լնձ այս ասա այստեղի դատաւորներն է՞լ առանց փողի մեր խնդիրքը չեն կատարե՞լ։

Հռոմսիմ.

Ի հարկէ չեն կատարել։

Շուշան.

Ինչո՞ւ համար. չէ՞ որ սրանք...

Հռոմսիմ.

Հօ մենք նրանց քէֆի տէրը չե՞նք։

Շուշան.

Ի՞նչպէս թէ քէֆ։ Մի՞թէ սա քէֆի՞ բան է։

Հռոմսիմ.

Դու չե՞ս տեսել, չե՞ս իմացել. «Կատուի խաղը, մկան մահը»։

Շուշան.

Այն ժամանակ թագաւորին գանգատ գրենք։

Հռոմսիմ.

Սարսա՛խ. թագաւորը որտեղ է՛, հա՛. դեռ եօթը սարից էլ այն կողմը։

Շուշան.

Դէպէչ զարնենք։

Հռոմսիմ.

Աղջի՛, խե՛նթ, ինչի՞ ողջ գլուխներս տանենք աւետարանի տակը դնենք։ Լաւ չէ՞, եթէ որ այստեղ սուս ու փուս մեր գործը վերջացնենք։

Շուշան.

Բայց ախր...

Հոռոմսիմ.

Ախր՝ ի՞նչ...

Շուշան.

Ես վախենում եմ Սուքիաս աղան իմ էլ թշի-ցը բռնի։

Հոռոմսիմ.

Թող բռնէ. դրանից ի՞նչ վնաս։

Շուշան.

Ցը՛մ, ցը՛մ, ցը՛մ։

Հոռոմսիմ.

Բարի։ Թող իմ թշից բռնէ։

Շուշան.

(Մտածում է)։ Բայց ամեն բանից առաջ դու-մէկ գնա...

Հոռոմսիմ.

Գլխիս վրայ։

Շուշան.

Դէ՛հ, չուտ արա՛, չայդ խմիր։

Հոռոմսիմ.

(Բաժակի շուրջը բռնելով) Դեռ տաք է։

Շուշան.

(Փչում է)։

Հոռոմսիմ.

Աղջի՛, խե՛նթ, ի՞նչ ես անում։

Շուշան.

Փչում եմ, որ չուտ սառչի։

Հոռոմսիմ.

Թող փոքր ինչ էլ ուշ լինի։ Մի բաժակ չայ տուիր, հիմի էլ քնթիցս ես թափո՞ւմ։

Շուշան.

(Անօրահար ձայնով) Ներողութիւն։

Հոռոմսիմ.

Ես դեռ մի բաժակ էլ եմ ուզում խմել։

Շուշան.

Ցեռոյ, յեռոյ կուգաս, կը խմես

Հոռոմսիմ.

Վա՛յ թէ ջուրը սառչի։

Շուշան.

Ոչինչ։ Ես նորից կը տաքացնեմ։

Հոռոմսիմ.

Թող գոնէ այս բաժակը վերջացնեմ, է՛հ։

Շուշան.

(Բաժակը նրա քերնին դեմ տալով) Դէ՛հ խը-միր, խմիր։

Հոռոմսիմ.

Աղջի՛, անպիտա՛ն, դու նորի՞ց էշութիւնդ սկսեցիր։

Շուշան.

(Ամօթահար ձայնով). Ներիր։

Հոռոմսիմ.

(Խմելուց յետոյ վեր է կենում) Եա՜հ եօթնանուն սուրբ կարապետ։

Շուշան.

(Երկինք նայելով) Ամմէ՛ն։

Հոռոմսիմ.

(Գնում է)։

Շուշան.

(Եռեւիցը) Հոռոմսիմ աբլա...

Հոռոմսիմ.

Ի՞նչ կայ։

Շուշան.

Ես ասում եմ թէ...

Հոռոմսիմ.

Ի՞նչ ես ասում։

Շուշան.

Փողը Սուքիաս աղից թող Մարիամ խանումը խնդրէ։

Հոռոմսիմ.

Ի՞նչու համար։ Ես ինչի՞ չխնդրեմ։

Շուշան.

Վախենում թէ Սուքիաս աղան քո խնդիրը չկատարէ։

Հոռոմսիմ.

Ինչի՞ ես այդպէս կարծում։

Շուշան.

Այնպէս։

Հոռոմսիմ.

Ուզո՞ւմ ես, դու ինքդ խնդրէ։

Շուշան.

Ցը՛մ, ցը՛մ, ցը՛մ։ Անկարելի բան է։

Հոռոմսիմ.

Շուշան ջան...։

Շուշան.

Ցը՛մ, ցը՛մ, ցը՛մ։ Այդ մասին ոչ ջան, ոչ հաջան։

Հոռոմսիմ.

Բարի։ Յետոյ կը տեսնենք։

Շուշան.

Քա՛, էլ ի՞նչ տեսնենք։ Ամենից յարմարը այն է, որ մենք մեր Մարիամ խանումին խնդրենք...

Հոռոմսիմ.

Աղջի՛, ծալպակա՛ս, զդո՛ւմ գլուխ. կարելի՞ է միթէ այդպէս խայտառակ բանը այն սուրբի նման կնկայ ականջին հասցնել։

Շուշան.

Ի՞նչպէս թէ սուրբ։

Հոռոմսիմ.

Ի հարկէ, Մարիամ խանումը, իսկ եւ իսկ սուրբ կնիկ է։

Շուշան.

(Մեկուսի) Սա ի՞նչ է ասում։ (Բարձր) Քա՛, ինչպէս թէ՝ համ կնիկ է, համ էլ սուրբ է։

Հոռոմսիմ.

Չես հասկանո՞ւմ։

Շուշան.

Չէ՛։

Հոռոմսիմ.

Աղջի՛, յիմա՛ր, չէ՞ որ նա իրան օրումը երեխայ չէ բերել։

Շուշան.

(Ծիծաղ) Հա՛, հա՛, հա՛։

Հոռոմսիմ.

Նորից այս անխելքը ծիծաղում է։

Շուշան.

Լաւ. քո խելքով նրա երեխայ չբերելու պատճառն ի՞նչ է։ Իմանո՞ւմ ես։

Հոռոմսիմ.

Իսկ դու իմանո՞ւմ ես։

Շուշան.

Հաստատը չեմ իմանում։ Միայն դրա համար հազար ու մին պատճառ կայ։

Հոռոմսիմ.

Սխալւում ես։ Միմիայն մէկ պատճառ կայ։

Շուշան.

Ի՞նչ պատճառ։

Հոռոմսիմ.

(Լրջորեն) Մարիամ խանումը իրան մարդու ծոցը չէ պառկում։

Շուշան,

(Զարմացմամբ) Ինչո՞ւ համար։

Հոռոմսիմ.

Որովհետեւ նա մարդուն չէ սիրում։

Շուշան.

(Մեկուսի) Ա՜յ ձեզ նոր բան։ (Բարձր) Հոռոմսիմ աբլա...

Հոռոմսիմ.

Զէ սիրում է՛լի։

Տուբան.

Ա. կնի՛կ . . .

Հոռոմսիմ.

Դու դեռ շատ ջահիլ ես։ Այդ բանները չես ըմբռնում։

Տուբան.

(Մեկուսի) Զեմ հասկանում։

Հոռոմսիմ.

Դու լինձ այս ասա՛ . . .

Տուբան.

Ի՞նչ։

Հոռոմսիմ.

Դու ասում ես, որ այս բանի համար Մարիամ խանումին միջնորդ ձգենք, հա՞։

Տուբան.

Հա։ Ա՜յ, ինչպէս առաջ. Քերոբին գործ տալու ժամանակ։

Հոռոմսիմ.

Դէհ նա ախր ուրիշ բան էր, սա ուրիշ բան է։

Տուբան.

Բայց երկու բանի էլ միտքը նոյնն է։

Հոռոմսիմ.

Ոչ։ Ահագին զանազանութիւն կայ։ Ուղիղ սար ու ձոր։

Տուբան.

Զեմ հասկանում։

Հոռոմսիմ.

Աղջի՛, յիմար, չհասկանալու այստեղ բան չկայ։ Մարիամ խանումը այնքա՛ն սուրբ, այնքան առաքինի՛, անարատ կնիկ է, որ եթէ, Տէր մի՛ արասցէ, նա լսէ, որ քո մարդը այդ տեսակ զալաթներ անող է . . .

Տուբան.

Հա . . .

Հոռոմսիմ,

Նրա հետ միասին ձեզ՝ բոլորիդ էլ կը պատժէ։

Տուբան.

Ինչո՞ւ համար։ Ախր մենք ի՞նչ մեղք ունենք։

Հոռոմսիմ.

Եղունգը մսից կարո՞ղ ես ջոկել։

Տուբան.

Ինչի՞ չէ. մկրատով եղունգը կը կտրեմ, դէն կը շպրտեմ։

Հոռոմսիմ.

Իսկ մինչեւ եղունդի երկայնանալն, կտրելն ու դէն չպրտելն, էլի քո մսի հետ միացած չէ՞ր։

Շուշան.

Ճշմարիտ է։ Բայց ի՞նչ արած։

Հոռոմսիմ.

Ինչպէ՞ս թէ ի՞նչ արած, յիմա՛ր։ Եթէ մի կընկայ տղամարդը այդ տեսակ զալաթներ է անում, կնկայ համար էլ ամօթ ու նախատինք չէ՞ նորից։

Շուշան.

Ի հարկէ. բայց . . .

Հոռոմսիմ.

Համբերիր։ Որի՞ն հասկացնենք։ Ո՞ւմ գլխին խելք դնենք։ Մէկ Աստուած, հազար արարած։ Մէկը կը սկսի նալին խփել, միւսը մեխին։ Աստուածին մէկն էլ մի օր յանկարծ կը վեր կենայ եւ իմանո՞ւմ ես, ի՞նչ կասէ։

Շուշան.

Ի՞նչ կասէ։

Հոռոմսիմ.

Կասէ. շատ կարելի է, որ դրա կնիկն էլ մարդուն պէս է։

Շուշան.

(Վիրաւորուած) Նրա բերանը կը ճղեմ, չանորդին։

Հոռոմսիմ.

Դրան խօսք են ասում։ Մինչեւ դու նրա բերանը ճղես, նա քո բարի անունը հազար տեղից ճղոտած, պրծած կը լինի արդէն։

Շուշան.

Շատ լաւ. բայց ախր Մարիամ խանումն էլ հո՛ այն յիմար անաստուածներից չէ։ Զէ՞ որ նա ինքը խելք ու խղճմտանք ունի։

Հոռոմսիմ.

Շատ էլ ունի։ Բայց այդ մնայ։ Դու դեռ ջահել ես։ Խելքդ չէ կտրում։ Ես քեզ միայն այս մէկ հաստատ բանն եմ ասում. . .

Շուշան.

Ի՞նչ ես ասում։

Հոռոմսիմ.

Եթէ որ այդ վատ բանի թէկուզ փո՛քր, չատ փո՛քր ծայրը Մարիամ խանումի ականջին հասնի, էլ Աստուած անգամ այնտեղ բան ու գործ չունի։

Շուշան.

Այդքան չար է, հա՛։

Հոռոմսիմ.

Վերին աստիճանի։ Կատարեալ Փրաւօն։

Շուշան.

Ի՞նչ է ասո՛ւմ։

Հոռոմսիմ.

Հաւատացնում եմ քեզ։ Սկեսրօջդ ուխտ գնացած այն «Կարմիր աւետարանը» վկայ։

Շուշան.

(Մեկուսի) Քա՛, տեսնո՞ւմ է.ք. ի՞նչ կախ գլուխն է եղել։

Հոռոմսիմ.

Հապա՞։ Երբ որ նա այդ վատ բանն իմանայ,—հէնց նոյն բոպէին ձեզ բոլորիդ ընծայած շորերն յետ կը խլէ...

Շուշան.

Սխր կարել պրծել ենք, է՛հ։

Հոռոմսիմ.

Վրաներիցդ կը հանէ։

Շուշան.

Երեխաների շորերն է՞լ։

Հոռոմսիմ.

Ողջիդ, միասին։

Շուշան.

(Մեկուսի եւ ղաղագիին) Ա՛խ, Աստուած ջան։

Հոռոմսիմ.

Բացի դրանից...

Շուշան.

Էլ ուրիշ ի՞նչ։

Հոռոմսիմ.

Քերոբին էլ դէպէշով գործից վռնտել կուտայ։

Շուշան.

(Սոսկում է)։

Հոռոմսիմ.

Հապա՞։ Այն աստիճան չարն է, որ...

Շուշան.

(Պաղատագին) Հոռոմսիմ աբլա ջան...

Հոռոմսիմ.

Հաջան։

Շուշան.

(Լաղագին) Եթէ անմահ, սուրբ պատարագը կը սիրես...

Հոռոմսիմ.

(Խեղդուկ ձայնով) Վո՛ւյ աղջի, դա ի՞նչ սարսափելի...

Շուշան.

Շուտ գնա, մէկ այդ բանը ստուգիր։

Հոռոմսիմ.

Գլխիս վրայ։ Այս բոպէիս։ (Գնում է եւ մեկուսի) Եփեցի, լաւ եփեցի։

Գուլան.

(*Նշանացի արտայայտութիւններով մամաստում է իւր ներքին յուզմունքների հետ եւ ասպա*) *Ա՜խ, Տէր Աստուած, այս ի՞նչ տարօրինակ մարդիկ են եղել այս քաղաքացիները։ Մէկը, ողջ երեսովը այլանդակ, մենակ աչքերովն է կարողանում ուրիշի մարդուն ճանապարհից հանել։ Միւսը իրան քէֆի, զուարճութեան համար սիրում է ուրիշների կնանիքների թշիցը բռնել։ Երրորդը՝ իրան մարդու ծոցը չէ պառկում, թէ ես նրան չեմ սիրում։ Սարսա՛խ, ի՞նչպէս թէ մարդուս չեմ սիրում։ Վրայ չորրորդը՝ առանց գործի տակն ու վրան խմանալու, կատաղում, մէկ բոպէում իրան տրած բոլոր լաւութիւնները ոտքի տակ առնում, կոխկըտում։ Թի՛ւ։ Ափսոս չէր մեր գիւղը։* (*Մտածում է*)։ *Յիրաւի. ի՜նչ խայտառակ բան կը լինի, եթէ որ Մարիամ խանումը յանկարծ մեր չորերը վրաներից հանէ։ Մանաւանդ եթէ խեղճ երեխաներիս . . .* (*արտասուալից*) *Ա՜խ, տէր Աստուած, խեղճ երեխաներս հազիւ հազ տաքացել էին,—հը՛, հը՛, հը՛,* (*լալիս է*)։ *Խաթուն մայրիկս էլ զարմանալի մարդ է։ Ուխտ գնալու ժամանակը դատ, ա՛յ։ Այնքան էլ աղաչեցի, պաղատեցի թէ՝ «Խաթուն մայրիկ ջան, դուարի եւ ինձ էլ քեզ հետ վերցրու»։* (*Սկսում է ձայնով*)—«*Ոչ, անկարելի է*»։—«*Խաթուն մայրիկ ջան, չէ՛ որ, մեռնիմ իրան, ես էլ եմ ուզում համբուրել*».— «*յետոյ, ուրիշ անգամ*»։ *Դէ՜հ, հիմի հրամմէ։ Մինչեւ աղն եկաւ, մատաղը վերջացաւ։ Բա հիմայ ես ի՞նչ վայ տամ իմ գլխին։ Ո՞ւր գնամ. ո՞ր ջուրն ընկնեմ։*—(*Հոռոմսիմ մտնում է թախծալից եւ յուսահատ կերպարանքով*)։

ՏԵՍԻԼ Բ.

Հոռոմսիմ եւ Գուլան.

Գուլան.

(*Ուրախանում է հոռոմսիմին տեսնելով*)։ *Հը՞մ, ի՞նչ խաբար։ խէ՞ր է թէ չա՞ռ։*

Հոռոմսիմ.

Շա՜ռ, այի՜նօյի՜ն չա՜ռ։

Գուլան.

(*Աջ ձեռքը բերանին դեմ տալով*) *Վա՜յ, ձիւնն իմ գլխին։ Իրա՞ւ ես ասում, թէ, կարելի է, հանաքով ինձ վախեցնել ես ուզում։*

Հոռոմսիմ.

(*Խիստ խոժոռ հայեացք է ձգում*)։

Գուլան.

Ուրեմն ճշմարի՞տ է։

Հոռոմսիմ.

Կո՞յր ես։ Չե՞ս տեսնում, որ բարկութիւնից կարմրել, կարմիր կակաչ եմ կտրել։

Գուլան.

(*Նայում է եւ փղձկում, արտասուում*) *Հը՜, հը՜, հը՜։*

Հոռոմսիմ.

(*Կեղծ ցաց*) *Հը՜, հը՜, հը՜։*

Շուշան.

Քա՛, մէկ պատմիր, տեսնեմ...

Հռոմսիմ.

Հէնց այն էր, որ ձեր այս փողոցովն միւսը պիտի անցկենայի...

Շուշան,

Հա՛։

Հռոմսիմ.

Պուպո՛ւստ. այն լկտին յանկարծ դիմացս ելաւ։

Շուշան.

Անթառա՞մը։

Հռոմսիմ.

Հա։

Շուշան.

(Ատամները կրճտացնելով) Ա՛խ, քո տեղակ ես պէտք է լինէի, որ...

Հռոմսիմ.

Ի՞նչ. չան հետ պա՞ր կը մտնէիր։

Շուշան.

Գէօր ու Ջանլամ։ Գոնէ սրտիս փարփուն փոքր ինչ կը թափէի։

Հռոմսիմ.

Համբերիր։ Խենթութիւնով վէրք չի սաղմնալ։

Շուշան.

Դէ՛հ, պատմիր, պատմիր։ (Բորբոքուում է)։

Հռոմսիմ.

Ինձ տեսաւ. կանգ առաւ։ Բարով, Աստծուն բարին...

Շուշան.

(Մէկուսի) Չէ, չօր ու ցաւս։

Հռոմսիմ.

Չէի ուզում մէկ գլուխ այն վատ բանից սկըսել։ Բայց՝ սրտնեղութիւնից էլ չկարացի համբերել...

Շուշան.

Դի հարկէ. այդ միջոցում համբերութի՞ւն։

Հռոմսիմ.

Ապառաժ լեռն անգամ չէ դիմանում։

Շուշան.

Անշուշտ։

Հռոմսիմ.

Աղջի՛, Անթառամ,—ասում եմ,—դու Քերոբին ճանաչո՞ւմ ես։—«Լա՛ւ»—ասում է։

Շուշան.

(Լաղիս է) Հը՛, հը՛, հը՛։

Հոռոմսիմ.

Աղջի՛,—ասում եմ,—դու նրան որտեղի՞ց ես ճանաչում։ Քե՞զ ի՞նչ,—ասում է. բերանն այսպէս ծռմռկելով։

Տուլան.

(Աչքերը կրճատցնելով) Ա՜խ, երանի՜ թէ նա մէկ իմ ճանկն ընկնէր...

Հոռոմսիմ.

Լսի՛ր։ Աղջի՛, Անթառամ,—ասում եմ,—վաղո՞ւց է, որ դու Քերոբին ճանաչում ես։ Մի տարուց ի վեր,—ասում է,—նա իմ սիրեկանն է։

Տուլան.

(Վեր է թռչում եւ դէպի դուրս գնում)։

Հոռոմսիմ.

(Բռնում է) Ո՞ւր։

Տուլան.

Թող ես մէկ գնամ, այն զահրային...

Հոռոմսիմ.

Շուշան ջան, ամո՛թ է, ամո՛թ...

Տուլան.

Էլ ամօթի, մամօթի ժամանակն անց է կացել։—Թող...

Հոռոմսիմ.

(Փաղաքշելով) Հանդարտուիր, բալա՛ս, հանդարտուիր։

Տուլան.

(Ոտքը գետնին խփելով եւ որոտաձայն)։ Քեզ ասում եմ, թող...

Հոռոմսիմ.

Աղջի՛...

Տուլան.

(Լալիս է) Հը՛, հը՛, հը՛։

Հոռոմսիմ.

Շուշան ջան, հոգիս, գառնուկս...

Տուլան.

(Հանդարտւում է եւ սկսում է հեկեկալ)։

Հոռոմսիմ.

Արի՛, արի՛, նստիր, բալա։ (Հանդարտութեամբ նստեցնում է)։ Կա՛ց, գնամ քեզ ջուր բերեմ...

Տուլան.

(Կրծքի եղեւէջներ). Հարկաւոր չէ...

Հոռոմսիմ.

Հարկաւոր է, (գնում է)։

Տուտան.

Քերո՛ք, այդպէս բան, հա՛։ (Յարձակողական դիրքով եւ կրճտալից ատամներով)։ Ա՛յ դու, չան երեա։ Դու... դու... դու ի՞նչպէս (շալիս է) հը՛, հը՛, հը՛։ (Հոռոմսիմ ջուր է քերում պղնձեայ մորշպայով)։

ՏԵՍԻԼ Գ.

Տուտան եւ Հոռոմսիմ.

Հոռոմսիմ.

(Ջուր է տալիս)։ Խմիր քիչ։

Տուտան.

(Ագահաբար խմում է)։

Հոռոմսիմ.

Կամաց խմիր։ (Ամանը ուզում է յետ վերցնել)։

Տուտան.

Թո՛ղ։ (Խմում է) Օխխա՛յ, օխխա՛յ։

Հոռոմսիմ.

Պուա, պուա խմիր։ Դէհ բաւական է։

Տուտան.

(Ջրամանը յետ է տալիս)։ Շնորհակալ եմ։

Հոռոմսիմ.

(Ջրամանը մի կողմ դնելով)։ Շուշան ջան, ախր այդպէս չէ կարելի...

Տուտան.

(Լաչագին)։ Մեռնիմ քեզի, ախր սա ուրիշ կրակ է, ուրի՛շ։

Հոռոմսիմ.

Իմանում եմ, որ ուրիշ կրակ է։ Բայց թէ...

Տուտան.

(Հեկեկոց) Հը՛, հը՛, հը՛։

Հոռոմսիմ.

Տէ՛ր ողորմած Աստուած։ Քա՛, աղջի՛, ես իմ բան ու գործը թողած՝ հիմի դու ուզում ես, որ ես ժամերով քո զոռոցները լսե՞մ...

Տուտան.

Ներողութիւն...

Հոռոմսիմ.

Ա՛յ որդի, փոքր ինչ քաղաքավարութիւն ունեցիր։ Խղճմտանք ասածը լաւ բան է։

Տուտան.

(Խոր շնչառութիւն եւ ապա) Օ՛ֆ մայրիկ ջան։

Հոռոմսիմ.

Բէմուրաղ լինի մայրիկդ, ինչպէս որ դու բէմուրաղ ես...

Տուտան.

(Լաչագին) Երանի ոտքերս կոտրուէր, մենք մեր գիւղից ժամ չգայինք...

Հոռոմսիմ.

Այդ արդէն անց է կացել։ Մենք այժմ այս բանի ճարը գտնենք։

Շուշան.

Էլ ի՞նչ ճար։

Հոռոմսիմ.

Ես շուտով կը գտնեմ։ Դու հիմի վեր կա՛ց, գնանք մեր տունն։ Քարգահների միջից բերածս պատուէրի չափով մինը ջոկիր...

Շուշան.

Երանի սրտիդ...

Հոռոմսիմ,

Դու համբերիր։ Ես ամեն ինչ...

Շուշան.

Հը՛մ. ասելը հեշտ բան է։

Հոռոմսիմ.

Այս դէպքում ամենից լաւ բանը՝ համբերութիւնն է։

Շուշան.

Իսկ ես բոլորովին ընդհակառակն եմ կարծում։

Հոռոմսիմ.

Փառք Աստուծոյ, որ ամեն շաբաթ, կիւրակի ժամ ես գնում...

Շուշան.

(Արտասուալից) Ճշմարիտ է. գնում եմ, Աստծուն էլ այնքան խնդրում, աղաչում եմ, որ մեր օգնութեանը հասնի։ Խնայածս կոպէկներով էլ սուրբ Աստուածամօր առաջ ջուխտ ջուխտ մոմ եմ վառում միշտ։ Բայց փոխանակ...

Հոռոմսիմ.

(Մեծ երկիւղածութեամբ). Աղջի՛, դու այսօր կատարեալ ցնդել ես,—վո՛ւյ։ Շուտ ասա՛, «մեղայ Աստծոյ»։

Շուշան.

(Մեծ ամօթահարութեամբ) Մեղայ Աստծոյ։

Հոռոմսիմ.

Հա. այն էի ասում։ Փառք Աստծոյ, որ ամեն շաբաթ, կիրակի ժամ ես գնում։ Մի՞թէ չես լսել, որ սուրբ Աւետարանի մէջ տէրտէրը միշտ կարդում է. «ով որ համբերէ, վերջում սպանող կուտէ»։

Շուշան.

Քա, դուն էլ բան ես ասում։ Ս. Աւետարանում որտե՞ղ կայ գրած սպանող, մրսբանող։

Հոռոմսիմ.

Լիքն է. ո՛ր երեսը շուռ տաս կանանչեղէնի կը հանդիպես։ Այն որ ասում է անանուխ, սամիթ, չաման .. չե՞ս լսել։

Շուշան.

(Մի rոպէ միsf է անում):

Հոռոմսիմ.

Դու մէկ լաւ միտք արա՛։ Այնտեղ դեռ քո անունն էլ կայ։

Շուշան.

Ի՞նչ ես ասում։ Իմ անունն այնտեղ ինչ բա՞ն ունի։

Հոռոմսիմ.

Ախմա՛խ։ Չե՞ս լսել այն, որ ասում է. «Նայեցէք, ո՛րքան սիրուն, ո՛րքան գեղեցիկ է վայրենի Շուշանը։ Իմաստուն Սողոմոնը,—ասում է,—իրան պալատի բոլոր զարդերի միջին շուշանի նման ոչ մի զարդ չունէր...

Շուշան.

Ամա՛ն, Հոռոմսիմ արլա՛, հիմի դրանց ժամանակն է՞։ (Գլուխը կախ ձգած միsf է անում):

Հոռոմսիմ.

(Մեկուսի) Որ կողմը շուռ եմ տալիս, էֆ լինում։

Շուշան.

Նալա՛թ Սողոմոնին էլ, նրա Շուշանին էլ (մտածում է):

Հոռոմսիմ.

(Մեկուսի) Ուրիշ ճար չկայ. պէտք է բռնութիւն գործ դնել։

Շուշան.

(Արտասուալից) Հոռոմսիմ արլա՛ Ջան...

Հոռոմսիմ.

Եկ, գնանք մեր տուն առ այժմ քարդահ ջոկենք։

Շուշան.

Խնդրեմ, ինքդ գնաս, ջոկես, ուզարկես։ Ինձանում էլ սիրտ չմնաց։

Հոռոմսիմ.

Շատ ես խօսում։ Էհրամդ ո՞րտեղ է։ Ծածկի՛ր։

Շուշան.

(Պատի պահարանից հանելով՝ շուտով ծածկըւում է): Ա՛խ, Քերոբ, վախ Քերոբ...

(Տեսարանը փոխւում է Սուֆիասի կաբինետը, ուր նա եւ Մարիամը խօսում են):

ՏԵՍԻԼ Դ.

Սուֆիաս եւ Մարիամ.

Սուֆիաս.

Մարիամ Ջան, ուզի՞ղ ես ասում, թէ հանաք ես անում։

Մարիամ.

Հաւատացնում եմ քեզ, սիրելիս։

Սուֆիաս.

Ա՛յ, զարմացք բան։

Մարիամ.

Զարմանալու ի՞նչ կայ։ Ո՞վ երազ չէ տեսնում։

Սուբիաս.

Ճշմարիտ է. բայց որ ասում ես, թէ երազումս ես այդ անուններն էի յիշում, մանաւանդ կառավարչիս ու հացթուխի հետ իբրեւ թէ փսփսում էի...

Մարիամ.

Փսփսոց, բան, ասենք, դատարկ բան է։ Բայց, Սուքիաս Ջան, այն որ Քերոբի ու Շուշանի անուններն էիր տալիս, ուզում էի ուրախութիւնից զըժուեմ...

Սուբիաս.

Ինչո՞ւ համար. այդտեղ ի՞նչ կայ այդքան ուրախանալու...

Մարիամ.

Սիրելի՜ս, ի՞նչ ես ասո՜ւմ։ Ի՞չպէս չուրախանայի, երբ սեղհական ականջներովս լսում էի, որ դու այնքան համակիր ու քաղցր խօսքեր էիր արտասանում դէպի այդ թշուառ զոյգը...

Սուբիաս.

Այդ ի՞նչ զոյգ է, է՜հ։

Մարիամ.

Ա՜յ, այն Քերոբն ու իրան կինը... Սուքիաս Ջան, ճշմարիտ չէ՞, որ այդ տեսակ թշուառներին

օգնելը, նրանց համակրելը վերին աստիճանի սփոփեցնում, մխիթարում է մարդկանց...

Սուբիաս.

Ի՞նչ ասել կուզի..., (մեկուսի) տէր Աստուած...

Մարիամ.

Բայց, Սուքիաս Ջան, ես չէի իմանում թէ դու խորամանկութիւն էլ ես ունեցել...

Սուբիաս.

Ի՞նչ խորամանկութիւն... (մեկուսի) Սա ի՞նչ է ասում։

Մարիամ.

Ա՜յ, այն որ աղքատներին փող եւ չորեղէններ նուիրելու, անգործներին գործ յանձնելու կամ ճարելու համար՝ իմ խնդիրներն կատարում էիր...

Սուբիաս.

Մի՞թէ կարո՞ղ էի քեզ մերժել...

Մարիամ.

Այո՛։ Շնորհակալ եմ։ Բայց, խորամանկ, երեսանց այնպէս էիր ձեւացնում, իբրեւ թէ այդ բաներին չես համակրում, մինչեւ անգամ ինձնից զըժգոհ ես լինում...

Սուբիաս.

Մարիամ Ջան, դէհ ես կատակ էի անում...

Մարիամ.

Բայց, սիրելիս, ես միայն հիմայ եմ տեսնում, որ դու կատակ էիր անում...

Սուփիան.

Ի՞նչպէս...

Սուփիան.

Որովհետեւ հետս միշտ այնպէս ցուրտ, ցուրտ էիր խօսում, երեսդ այսպէս թիպեցնում, որ ես էլ կարծում էի թէ, իրաւ, ի՛նչ անգութ եւ անսիրտ մարդ եմ ունեցել...

Սուփիան.

Ա՜յ, հիմի տեսնո՞ւմ ես, որ սխալուած ես եղել...

Մարիամ.

Այո՛, այո՛ Մեղքս վզովս եմ առնում։

Սուփիան.

Ի՞նչպէս թէ մեղքդ...

Մարիամ.

Որովհետեւ այս գիշերուայ տեսածդ՝ երազից 'ի վեր, պարզ տեսնում եմ, որ դու ներսից, սրտանց չա՜տ եւ չա՜տ բարի ես եղել, դէպ ի մի այնպիսի թշուառ ընտանիքը...

Սուփիան.

Բայց ախր այդ այդ ընտանիքն ո՞վ է, է՜հ։

Մարիամ.

Սուքիաս Ջան, ի՞նչ մոռացկոտն ես եղել...

Սուփիան,

Մոռացկոտն ո՞րն է, է՜հ։ Ախր...

Մարիամ.

Ա՜յ, այն Քերոբը, նրա մայր Նարգիզը, յետոյ նրա հարսը...

Սուփիան.

Ասենք, Քերոբին եւ մօրը ճանաչում եմ, բայց թէ հարսին...

Մարիամ.

Սիրելի՛ս, մի՞թէ հարսին չես ճանաչում...

Սուփիան.

Ի՞նչ տեղից...

Մարիամ.

Չէ՜. գրուսան տար։

Սուփիան.

Հաւատացնում եմ քեզ...

Մարիամ.

Ա՜յ, ուզում ես, ծանօթացնեմ։ Չե՞ս ուզում։

Սուփիան.

Հարկաւորութիւն չունիմ։ (Մեկուսի) Ա՜խ, տէր Աստուած։

Մարիամ.

Սուքիաս ջան, շատ լաւ հարս է...

Սուքիաս.

Լաւ է թէ վատ,—իրան համար, ինձ ի՞նչ։

Մարիամ.

Բարեմի՛տ, պարզամի՛տ...

Սուքիաս.

Աւելի լաւ...

Մարիամ.

Անպիտանը, միեւնոյն ժամանակ, առողջակազմ, սիրուն, գեղեցի՛կ...

Սուքիաս.

Աստուած բարի վայելումն տայ մարդուն...

Մարիամ.

Ճշմարիտն ասեմ, ես նախանձում եմ նրան...

Սուքիաս.

Ի՞նչ բանի վրայ ես նախանձում...

Մարիամ.

Ա՛յ, նրա գեղեցկութեան վրա...

Սուքիաս.

Մի՞թէ դու ինքդ պակաս գեղեցիկ ես...

Մարիամ.

Բայց նա ախր ուրիշ բան է, է՞։

Սուքիաս.

Երեւակայութեանդ ես զօր տալիս...

Մարիամ.

Հաւատացնում եմ քեզ. շատ ափսո՜ս, որ նրան չես տեսել, չես ճանաչում...

Սուքիաս,

Դրուսան ասեմ, ես ամենեւին չեմ էլ ափսոսում...

Մարիամ.

Ասենք՝ մի կողմից, լաւ է, որ չես ճանաչում...

Սուքիաս.

Ի՞նչպէս։ Ի՞նչ ես ասում, աղջի։

Մարիամ.

Որովհետեւ,—դէ՛հ մարդու կնիկ ենք, խօսում ենք է՞լի, եթէ դու նրան ճանաչելիս լինէիր, վախենում եմ, թէ ինձ իսկոյն դաւաճանէիր...

Սուքիաս.

(Տագնապով). Սիմա՛խ, մի՞թէ այդպէս բան կարելի է...

Մարիամ.

Ի հարկէ, չէ։ Բայց թէ ես, առհասարակ, խենդոտ եմ։

Սուֆիաս.

Ա՜յ, այդ մէկը սուտ ես ասում։ Եթէ դու ինձ վրայ,—դէհ, մարդ ու կնիկ ենք, խօսում ենք էլի՞...

Մարիամ.

Ի հարկէ..

Սուֆիաս.

Եթէ դու ինձ վրայ սէր ու խանդ ունենայիր, հեռս այնքան ցուրտ չէիր վարուիլ միշտ։

Մարիամ.

Սիրելի՛ս, այդ դէպքում ես էլ քեզ նման խոհրամանկութիւն էի բանեցնում...

Սուֆիաս.

Ա՜յ, չարաճճի դու... (մեկուսի) կարծես օձ, սատանայ լինի։

Մարիամ.

Հաւատացնում եմ քեզ։ Սուֆիաս ջան, ասա՛ խնդրեմ. դու ասում ես, թէ Շուշանին չես ճանաչում, հա՞։

Սուֆիաս.

Աղջի՛, այդ անունը ես առաջին անգամն եմ լսում...

Մարիամ.

(Ցուցամատը շարժելով եւ ժպտադայն). Դու սուտ ես խօսում...

Սուֆիաս.

Փիէ՜հ։

Մարիամ.

Հապա աչքերիս նայիր։

Սուֆիաս.

Խաթա՜բալա։

Մարիամ.

Նայի՛ր, նայի՛ր։

Սուֆիաս.

(Նայում է խուլ տագնապով) Հը՞մ. բան գտա՞ր։

Մարիամ.

(Վիճաբեալ ձայնով) Ոչի՛նչ, ոչի՛նչ։

Սուֆիաս.

Ա՜յ, տեսնո՞ւմ ես. (մեկուսի) Ա՜յ դրութիւն։

Մարիամ.

(Թոյլ ձայնով) Ներողութիւն եմ խնդրում։

Սուֆիաս.

Այս առաջին անգամ ներում եմ. բայց միւս անգամ...

Մարիամ.

(Միշտ զսպուած տագնապով). Ասա՛, խնդրեմ, մեր հացթուխն ինչպիսի՞ կին է։

Սուֆիաս.

Դու ինքդ չէի՞ր, որ նրան գովում էիր, քեզ առաջնորդ էիր վերցրել...

Մարիամ.

Ես նրա մասին վատ բան չեմ ասում...

Սուֆիաս.

Հէրն էլ անիծած. ուզում ես վատ առա՛, ուզում ես լա՛։

Մարիամ.

Ո՛չ. ինչո՞ւ համար վատ։ Իմանո՞ւմ ես. ես մեծնակ ցանկանում էի քո կարծիքը լսել նրա մասին։

Սուֆիաս.

Իմ կարծի՞քը...

Մարիամ.

Հա՛. այնպէս...

Սուֆիաս.

Եթէ մի ծանր խօսք ասեմ, չէ՞ս նեղանալ։

Մարիամ.

Եթէ արժանի եմ...

Սուֆիաս.

(Զսպուած զայրոյթով) Ցիմա՛ր, անխե՛լք... (Ընդհատում է):

Մարիամ.

Խնդրեմ, խնդրեմ, շարունակիր։

Սուֆիաս.

Է՜հ, ձեռք քաշի՛ր, ինձնից, թէ Աստուած սիրես...

Մարիամ.

Ո՛չ. ո՛չ։ Խնդրում եմ. տեսնո՞ւմ ես, որ ես չեմ վիրաւորուում, անսասրբերութեամբ լսում եմ։ (Շուտ շուտ հովհարով հովանաւորում է):

Սուֆիաս.

Քիչ հանդարտ։ Քամի ես բարձրացնում։

Մարիամ.

Ա՜խ. ներողութիւն... (Վէյերը վայր է ձրգում): Խնդրեմ, խօսքդ վերջացրու։

Սուֆիաս.

Ասա խնդրեմ. քո տան հացթուխին ե՞ս պէտք է ճանաչեմ, թէ դու ինքդ։

Մարիամ.

Այո՛։ Բայց թէ՝ նախ քան իմ այս տունը հարս գալը, Հոռոմսիմը վաղո՛ւց, շատ վաղո՛ւց ձեր տան հացթուխն է եղել։

Սուֆիաս.

Իսկ քո հարս գալը, իմանո՞ւմ ես, քանի՛ տարի է։

Մարիամ.

Ութերորդ տարին է գնում...

Սուբիաս.

Մի՞թէ այդքան ժամանակումը...

Մարիամ.

Իրաւունք ունիս. ես նրան պէտք է ճանաչած լինէի։ Այո՛. բայց, սիրելի՛ս, իմանո՞ւմ ես ի՛նչ կայ...

Սուբիաս.

Ի՞նչ...

Մարիամ.

Ես..., ես,—չգիտեմ բարեբաղդաբար ասեմ, թէ դուցէ դժբաղդաբար, մի... մի..., թող ասենք, անմտութիւն ունիմ. նենգամիտներով, խարդախութիւններով...

Սուբիաս.

Ի՞նչ. ի՞նչ։

Մարիամ

Ոչինչ։ Չեմ կարող հետաքրքրուիլ։ (Արտասուքները զսպելով). Սուբիաս, իմ ամուսինս, ես... ես այսպէս եմ ստեղծուած եւ այսպէս էլ դատապարտուած...

Սուբիաս.

(Մեկուսի) Գեօռքագէօռ լինիս դու էլ, քո...

Մարիամ.

Ասա՛ խնդրեմ, Ֆերորի մասին դու քո կառավարչին ոչինչ չե՞ս գրել...

Սուբիաս.

Չէ՞ որ յանձնարարականը քո աչքի առաջ գրեցի...

Մարիամ.

Մի՞թէ՞..., մի՞թէ՞ իմ աչքի առաջ գրեցիր հա՞, իմ աչքի առաջ գրեցի՞ր։ Արդեօք չե՞ս սխալւում... լաւ մտաբերիր։

Սուբիաս.

Լաւ չեմ յիշում. բայց հէնց քո առաջ Ֆերոբին յանձնեցի։

Մարիամ.

Այդ ճշմարիտ է. բայց յետո՞յ։ Յետոյ դու քո կառավարչին ոչինչ չե՞ս գրել...

Սուբիաս.

Ոչինչ...

Մարիամ.

Իսկ նրանից ոչինչ չե՞ս ստացել, հա՞։

Սուբիաս.

Ա՛յ, այն նամակը, որ դու ինքդ էլ պառաւի մօտ կարդացիր...

Մարիամ.

Ցիշում եմ, որտեղ...

Սուֆիաս.

Քերոբի հետ պատահած...

Մարիամ.

Դժբաղդ դէպքն էր պատմում...

Սուֆիաս.

Միևնոյն դէպքը չէ՞ որ Քերոբը, ինքն էլ էր գրած իրան մօրը...

Մարիամ.

Այո՛։ Բայց Քերոբի նամակն էլ կառավարիչդ ինքն էր գրել դարձեալ... չէ՞

Սուֆիաս.

Որովհետեւ Քերոբը...

Մարիամ.

Այո։ Քերոբը անգրագէտ է։ Նա, այն խղճուկը միայն իւր մատն է ճխտում...

Սուֆիաս.

Լաւ. դու հիմի կասկածում ես...

Մարիամ.

Երբէք։ Ես ընդունում եմ, որ կառավարիչդ նոյն նամակը Քերոբի համաձայնութեամբն էր գրում։ Բայց եւ այնպէս, սիրելիս, երբ եւ իցէ, դու

քո կառավարչին, — գրաւոր կամ անգիր, — խորհուրդ... հրահանգ չե՞ս տուել, որ... որ...

Սուֆիաս.

Որ ի՞նչ...

Մարիամ.

Սուքիաս Ջան, արի ես քեզ մի պատմութիւն պատմեմ։

Սուֆիաս.

Լաւ ժամանակ ես գտել, ա՜յ։

Մարիամ.

Ոչինչ։ Խրատական, սքանչելի պատմութիւն է այն, այն, այն յաւիտենական գրքից...

Սուֆիաս.

Յաւիտենական գի՞րք։ Յաւիտենական գիրքը ո՞րն է, է՜հ։

Մարիամ.

Սուրբ գիրքը։—Իմ ուսուցիչը գոնէ այդպէս էր անուանում նրան։ Հա՞։ Պատմե՞մ, կը լսե՞ս։

Սուֆիաս.

Տեսնենք։

Մարիամ.

Նստենք, ուրեմն (նստում է):

Սուֆիաս.

Լա՜ւ. նստինք (նստում է):

Մարիամ.

Խնդրեմ, աթոռդ փոքր ինչ էլ...

Սուֆիաս.

Համեցէ՛ք։ (Աթոռը մօտեցնում է):

Մարիամ.

Հովհաբս... (Վէյերն է պտտում աչքերով):

Սուֆիաս.

(Վերցնում տպիս է) Համեցէ՛ք։

Մարիամ.

Շնորհակալ եմ։ Լսի՛ր ինձ, Սուֆիաս Ջան։

Սուֆիաս.

Լսել եմ ուզում էլի՞։

Մարիամ.

Մի ժամանակ հրէաների մէջ մի սուրբ մարդարէ կար, անունը Դաւիթ։

Սուֆիաս.

Սպասի՛ր, Մարիամ...

Մարիամ.

Ի՞նչ ես ուզում...

Սուֆիաս.

Ես լսել եմ, որ...

Մարիամ.

Այո՛, միեւնոյն ժամանակ, նա թագաւոր էլ էր։

Սուֆիաս.

Հա՛։ Ասում են, մեծ թագաւոր էր։

Մարիամ.

Ճշմարիտ է։ Այդ թագաւորն ու մարգարէն մի օֆիցէր ունէր։ Անունը Ուրիա Քեռացի...

Սուֆիաս.

Չեմ ճանաչում։

Մարիամ.

Այո՛։ Որովհետեւ նա շատ եւ շատ հազար տարի առաջ էր ապրում։...

Սուֆիաս.

Բարի։—Յետո՞յ։

Մարիամ.

Մի ժամանակ հրէաները իրանց թշնամիների դէմ պատերազմ էին մղում։ Ուխտի տապանակն էլ իրանց հետ էին վերցրած...

Սուֆիաս.

Այդ մարդը ո՞վ է։

Մարիամ.

(Վհատական կարճ նայուած եւ ապա) Ուխտի տապանակը, սիրելիս, մարդ չէ։ Բայց այդ թող մնայ։ Դա իմ պատմութեան հետ առանձին կապ չունի։ Պատերազմի դաշտումն էր նա եւ Ուրիա Քեռացին . . .

Սուֆիաս.

Այն օֆիցէ՞րը։

Մարիամ.

Այո՛։ Այն օֆիցէրը մի կին ունէր, անունը. . . անունը մոռացայ . . .

Սուֆիաս.

Լաւ, հիմի մեզ ի՞նչ գործ ունենք հրէաների օֆիցէրների, նրանց կնանիքների . . .

Մարիամ.

Սուքիաս ջան, դէ՛հ պատմութիւն է է՛լի։ Հա, սիրելիս . . .

Սուֆիաս.

(Մեկուսի) Սիրելիս, հոգիս, անպատճառ մըտքումը մի սատանայութիւն կայ։ (Բարձր) Հա՛, Մարիամ ջան, ի՞նչ էիր ասում։

Մարիամ.

(Որ այդ միջոցին զննում էր Սուֆիասին). Իսկո՛յն։ Օֆիցէրի կինը ջահիլ, շատ սիրուն ու գեղեցիկ էր . . .

Սուֆիաս.

(Մեկուսի հազում է):

Մարիամ.

Սիրելի՛ս, եթէ ձանձրացա՞ր, պատմութիւնս ընդհատեմ, ուզո՞ւմ ես։

Սուֆիաս.

Ո՛չ, ո՛չ։ Վերջացրու։

Մարիամ.

Բարի։ Սուրբ գրքի պատմածին նայելով օֆիցէրի կինը պէտք է որ շատ եւ շատ նման լինէր...

Սուֆիաս,

Ո՞ւմ . . .

Մարիամ.

Ա՛յ, քո բարերարութիւնը վայելած Քերոբի կնոջը՝ Շուշանին . . .

Սուֆիաս.

(Մեկուսի հազում է մի անգամ եւ իսկոյն). Ո՛ւֆ, Մարիամ ջան, դու էլ զահլա տարար քո Քերոբով, Շուշանով . . .

Մարիամ.

Ներողութիւն։ Ես իմ պատմութեանն եմ դալիս։

Սուֆիաս.

Ախր ես գործ ունիմ։ Շտապում եմ։

Մարիամ.

Իսկոյն, իսկոյն։ Դաւիթ Թագաւորը, Սուքիաս ջան, նոյնպէս բարերարութիւններ անող մարդ էր...

Սուքիաս.

Ի՞նչպէս թէ նոյնպէս։

Մարիամ.

Բարեգործ մարդ էր է՞լի. նա իրան աղքին...

Սուքիաս.

Բարի։ Երեւի, ուրեմն դրա համար էլ նրան սրբերի կարգն են անցկացրել, ա՜յ։

Մարիամ.

Երեւի։ Մի անգամ իրան տան կտուրից Դաւիթ Թագաւորը օֆիցէրի կնոջը տեսաւ ու հաւանեցաւ...

Սուքիաս.

Այսինքն սիրե՞ց էլի։

Մարիամ.

Ո՞չ թէ սիրեց... չեմ իմանում ինչպէս ասեմ, այո՛, սիրեց... ոչ, ոչ...

Սուքիաս.

Ի՞նչպէս թէ սիրեց... ո՛չ, ո՛չ։

Մարիամ.

Սիրելի՛ս, ախր աչխարհումս այն տեսակ փչացած մարդիկներ էլ կան, որ սոսկ իրանց անասնական կրքերին յագուրդ տալու մասին են մտածում միշտ։

Սուքիաս.

Միթէ՞։ Չեմ կարծում, արդեօք չե՞ս սխալւում։

Մարիամ.

Ո՛չ. ես չեմ սխալւում։ Եւ, Սուքիաս, այդ տեսակ մարդիկը, առհասարակ, հարուստներն են լինում... այո՛, հարուստները։

Սուքիաս.

Աչխա՞րհք չէ. կարող է պատահել։

Մարիամ.

Այո։ Ես անչափ ուրախ եմ, որ դու, բարեբաղդաբար, գոնէ այդ ախտից ազատ ես...

Սուքիաս.

Ինչպէս թէ գոնէ։ Դա ինչ հեղնութիւններ են։

Մարիամ.

Ուզում էի ասել...

Սուքիաս.

Լաւ, լաւ. պատմութիւնդ վերջացրու։ (Մեկուսի)։ Հը՛մ։

Մարիամ.

Որպէս զի կարողանայ օֆիցէրի ջահիլ եւ սիրուն կնոջը ձեռք բերել, Դաւիթ Թագաւորը...

Սուֆիաս.

(*Խուլ տագնապով*) *Դաւիթ թագաւորը ի՞նչ...*

Մարիամ.

Իրան զօրավարի միջոցաւ օֆիցէրին սպանել տուեց...

Սուֆիաս.

Ի՞նչ ես ասում (*վեր է կենում*):

Մարիամ.

(*Հովհարուելով եւ նոյնպէս վեր կենալով*). *Այո՛։ Սպանել տուեց եւ նրա կնոջը յափշտակեց...* (*զապուած զայրոյթ եւ դողդոջիւն*):

Սուֆիաս.

(*Շփոթմունքը ծածկելով*) *Եւ մի այդպիսի ամօթալի՛, յանցաւո՛ր պատմութիւն Սուրբ գրքում...*

Մարիամ.

Այո՛, սիրելի՛ս, Սուրբ գրքում։

Սուֆիաս.

Կորցրո՛ւ։ Ինչ լաւ, որ ես այդ գիրքը չեմ կարդացել։

Մարիամ.

Կարդա՛, գէթ այսուհետեւ կարդա՛։

Սուֆիաս.

Լսելն անգամ մեղք է... (*պատրաստւում է գնալ*):

Մարիամ.

Ի՞նչ, դու գնո՞ւմ ես։

Սուֆիաս.

Հարկաւոր գործ ունիմ։

Մարիամ.

Ախր ես դեռ չվերջացրի...

Սուֆիաս.

Պահի՛ր, այդ տեսակ խայտառակ պատմութիւնները քեզ համար պահիր։ (*Գնում է*):

Մարիամ.

(*Եսֆեւիցը երկար նայելուց յետոյ երեսը շուռ է տալիս*). *Կարծես թէ... կարծես թէ, այս մարդու մէջ ամեն ինչ կատարեալ է...* (*Լռութիւն*): *Շուշանը պարզամիտ է։ Նա ինքն իրան չուտ կը մատնէ... խնդիրը ինձ համար թէեւ պարզ է, բայց եւ այնպէս... արդար լինելու համար, էլի՛ հարկաւոր է ստուգել։* (*Մի քայլ անում է եւ նորից կանգ է առնում*): *Եթէ այս մարդը այդ ախտն էլ ունեցե՞լ...։ Եւ իւր անարդ նպատակը ոճրագործութիւնով է կամեցել գլուխ բերել,—այն ժամանա՞կ.—ո՜հ, դուք երկնային ահեղ ոյժեր, օգնեցէք ինձ այս անելանելի դրութիւնից դուրս գալու։* (*Գնում է եւ կանչում*) *Կա՛ռք, չուտով ինձ կառք հասցրէք։*

(*Տեսարանը փոխւում է Նարգզի տունը, ուր ոչ ոք չկայ։ Քիչ յետոյ մտնում է Մարիամ*):

ՏԵՍԻԼ Ե.

Մարիամ.

Այստեղ էլ չկայ. ոչ էլ նմանապէս բակումը։ Երեխայքն ասում են հացթուխի հետ գնաց։ Ո՞ւր գնաց։ Ինչո՞ւ համար գնաց։ Փոքր ինչ չսպասե՞լ արդեօք։ Կառքն էլ, դժբաղդաբար, արձակեցի։ Այժմ էլ ոտքով եւ այս դրութեամբ փողոցները չափել...։ Անյարմար է, ամօթ է։ Մի քանի րոպէ կը սպասեմ։ (Նստում է եւ նայում շուրջը)։ Եթէ նահապետական պարզ ու մաքուր այս յարկի տա՞կ էլ ապականութիւնը կարողացել է ներս սողալ եւ իրան համար ճարակ գտնել, այն ժամանակ հարկաւոր է բոլո՞ր, բոլոր նաւերը մեր եւրոպից այրել։ Բայց Շուշանն ուշանում է։ (Գնում է եւ դուռն մօտ հանդիպելով Շուշանին, ձեռքիցը բռնած ներս է բերում։ Շուշանը ծածկուած է հիրամով)։

ՏԵՍԻԼ Զ.

Մարիամ եւ Շուշան.

Մարիամ.

Ա՜հ, վերջապէս...

Շուշան.

(Ապշում է)։

Մարիամ.

Ո՞րտեղից ես գալիս։

Շուշան.

(Երկիւղալից) Հռոմսիմ աբլայի տանից։

Մարիամ.

(Ցուզուած) Հռոմսի՞մ։

Շուշան.

Ձեր հրամանոց հացթուխը։

Մարիամ.

Հացթո՜ւխ, հացթո՜ւխ։

Շուշան.

Քա՛, հա՛, Մարիամ խանում ջան, մոռացա՞ր միթէ։

Մարիամ.

Ինչո՞ւ համար էիր գնացել։

Շուշան.

Քարդահ ջոկելու։

Մարիամ.

Քարդա՞հ։ Հապա ա՞յս (հին քարգահը ցոյց տալով)։

Շուշան.

Դրա չափը չէր գալիս։

Մարիամ.

Չա՞փս։ Ի՞նչ չափս...

Շուշան.

Նոր պատուէրի համար։

Մարիամ.

Ի՞նչ նոր պատուէր։ Շուտ ասա՛։

Շուշան,

Ա՛յ... (Գնում է եւ մեկուսի) Դրուստ որ շատ չարն է եղել, ա՛յ։ (Մինդարի տակից թերթն հանելով եւ տալով)։ Ա՛յ, նոր պատուէրը։

Մարիամ.

Տեսնեմ։ (Խլում է. գիր կամ որ եւ է նշան է որոնում եւ երբեմն երբեմն Շուշանին զննում)։

Շուշան.

(Որ այդ միջոցում իւր հիրանը վերցնում եւ կիսաս պուտս ծալում, մի կողմ էր ձգում, ասում է մեկուսի). Ո՛չ թէ չար։ Սա, կարծես, խելագա՛ր է եղել։

Մարիամ.

Այս պատուէրն ո՞ւմն է։

Շուշան.

Զեմ իմանում։ Հոռոմսիմ աբլան բերեց։

Մարիամ.

Զասա՞ց թէ ումն է։

Շուշան.

Զասաց։ (մեկուսի) Իսկապէս խելագա՛ր։

Մարիամ.

Ինձնից չթաքցնես, հա՛։

Շուշան.

Մարիամ խանում, թաքցնելու ես ի՞նչ բան ունիմ։

Մարիամ.

Հոգի՛դ կը հանեմ, հա՛։

Շուշան.

Քա՛, կանանչ մեռնը վկայ, անմահ սուրբ պատարագը...

Մարիամ.

(Թուղանում է)։ Ամոսած իմ։ (արտի եղեւեջներ)։

Շուշան.

Հոռոմսիմ աբլան 20 մանէթով է խօսացել։ Ա՛յ, կէսն էլ կանխիկ տուեց։ (Ծոցից 10-ը հանում է)։

Մարիամ.

Փո՛ղ։ (Խլում է եւ նայում, ինչպես որ նայում էր պատուէրի թերթին)։ Ինչո՞ւ այսքան թա՞նգ։

Շուշան.

Զեմ իմանում։

Մարիամ.

Հարսի պատուէր է, հա՞։

Շուշան.

Զեմ իմանում։

Մարիամ.

Չէ՞ որ դու առաջ 4—5 մանէթ էիր ստանում։

Շուշան.

Հրամանք ես։

Մարիամ.

Հապա ինչի՞ այժմ այսքան թանգ։

Շուշան.

Չեմ իմանում։

Մարիամ.

Աղջի՛, դու իմ մարդուն ճանաչո՞ւմ ես։

Շուշան.

Հա։

Մարիամ.

Հա՞։

Շուշան.

Հա։

Մարիամ.

Դու նրան տեսե՛լ ես։

Շուշան.

Տեսել եմ։

Մարիամ

Տեսե՞լ ես։

Շուշան.

Հա՛։ Տեսել եմ։

Մարիամ.

Ո՞րտեղ։

Շուշան.

Ժամի ճանապարհին։ Ժամի դռան առաջ։

Մարիամ.

(Մտախոհ) Քանի անգամ։

Շուշան.

(Միտք անելուց յետոյ) Լաւ չեմ յիշում, չո՞ւս թէ հինգ անգամ։ (մեկուսի) Տէր ողորմած Աստուած։

Մարիամ.

Քեզ ու քեզ ի՞նչ էիր ասում։

Շուշան.

(Նայում է զարմացմամբ)։

Մարիամ.

Հը՛մ, չո՛ւտ։

Շուշան.

(Խուլ ներդաշնութեամբ). Այն էի ասում, որ եթէ հրամանքդ բան ես հարցնում...

Մարիամ.

(Թափահարելով) Հա՛, հա՛. հարցնում եմ, չո՛ւտ...

Տուբան.

Դէհ մարդավարի... (շփոթուում կանգ է առնում):

Մարիամ.

(Երկար եւ արհամարհալից հայեացք):

Տուբան.

(Լալիս է) Հը՛, հը, հը՛։

Մարիամ.

Լացը քեզ չէ օգնում։ Դու... դու ուրեմն խորամանկութիւն է՞լ ես ունեցել։ Ասա՛ ինձ, քեզ ո՞վ էր ժամ տանում։ Սկեսո՞յրդ։

Տուբան.

Նա էլ։ Շատ անգամ էլ Հոռոմսիմ աբլան։

Մարիամ.

Շատ անգամ է՛լ... Աղջի՛, մարդուս հետ դու չե՞ս խօսացել։

Տուբան.

Ո՛չ. հեռուից միմեանց մտիկ ենք տուել։

Մարիամ.

Ինչի՞ համար. քեզ ո՞վ էր ասում, որ մտիկ տաս։

Տուբան.

(Մտածում է):

Մարիամ.

Հը՛մ. չուտ։

Տուբան.

(Լուռ է եւ մտախոհ):

Մարիամ.

Չե՛ս լսո՞ւմ։ Քեզ ո՞վ էր ասում։

Տուբան.

Ձեր հացթուխը,—Հոռոմսիմ աբլան...

Մարիամ.

Մե՞ր հացթուխը։ Իմ մարդը այստեղ, ձեր տուն չէ՞ եկել։

Տուբան.

Ո՛չ։

Մարիամ.

Ո՛չ մի անգամ։

Տուբան.

Հա։

Մարիամ.

Եկե՞լ է թէ ոչ։

Տուբան.

Ոչ։ Չի եկել։

Մարիամ.

Իսկ ինքդ հացթուխի տանը եղել ես այնպէ՞ս չէ։

Շուշան.

Հա. եղել եմ։

Մարիամ.

Եղել է՞ս։

Շուշան.

(Զսպուած քարկոտեանք) Հա։ Այս բոպէիս էլ հէնց այնտեղից եմ գալիս։

Մարիամ.

Իսկ ուրի՞շ անգամ։

Շուշան.

(Միտք է անում)։

Մարիամ.

Հը՞մ։ Ի՞նչ ես միտք անում։

Շուշան.

(Մտախոհութեամբ) Բաղնիս գնալիս...

Մարիամ.

Նորից հացթուխի տանն եղել ես, հա՞։

Շուշան.

(Նեղացած) Քա, հա՛, հա՛։

Մարիամ.

Մենակ ի՞նքդ։

Շուշան.

Հա։

Մարիամ.

Ա՞մեն անգամ։

Շուշան.

Երբեմն էլ Խաթուն մայրիկիս հետ։

Մարիամ.

Այնտեղ ինչի՞ էիք գնում։

Շուշան.

Մտնում, Հոռոմսիմ աբլային մեզ հետ վերցը-նում էինք...

Մարիամ.

Երբ դու մենակ էիր մտնում, հացթուխի տանը ուրիշ մարդ չէ՞ր լինում։

Շուշան.

Ի՞նչպէս չէ։

Մարիամ.

Ո՞վ։

Շուշան.

Հոռոմսիմ աբլայի հարսները։

Մարիամ.

Իսկ օտա՛ր մարդ . . .

Տուտան.

Օտար մա՞րդ, ո՞վ։

Մարիամ.

Իմ մարդը—Սուքիաս աղան։

Տուտան.

(Մտախոհությամբ գլուխն աջ եւ ձախ շարժելով). Չէ՛։

Մարիամ.

(Աչքերով գնելով յետոյ) Ինձ չխաբես, հա՞։

Տուտան.

Քա ինչի՞ եմ խաբում, ես հօ խաբեբայ չե՛մ։

Մարիամ.

(Մի կողմ տանելով) Աղջի... աղջի, ինձ ասա՛, դու . . . դու անմե՞ղ ես։

Տուտան.

Ի՞նչ ես ասում։

Մարիամ.

Դու . . . անմեղ . . . սո՞ւրբ ես։

Տուտան.

(Կիսահեգնորեն) Սուրբը հրամանքդ ես, որ .. որ . . .

Մարիամ.

Որ ի՞նչ։

Տուտան.

Որ . . . որ . . . (մեկուսի) Ասե՞մ, չասե՞մ . . .

Մարիամ.

(Թափահարելով) Շո՛ւտ ասա. եթէ ոչ այս բոպէիս քեզ ոտքերիս տակ տրոր տրոր կանեմ . . . ։ Պրծի՛ր։

Տուտան.

(Մեկուսի) Ջանդամ քո գլուխը։ (Բարձր) Սուրբը ձեր հրամանքն ես, որ մարդուդ ծոցը չես պառկում։

Մարիամ.

(Ապշալից) Ի՞նչ։ Մարդուս ծո՞ցը։

Տուտան.

Ինձ չես հաւատում,—ա՛յ, գնա՛ ձեր ։ացթուխին հարցրու։

Մարիամ.

(Մեկուսի) Մարդուս ծո՞ցը։ Ամուսնած իմ։ (Բարձր) Աղջի՛, իսկ դու . . . դու իմ մարդու ծոցում պառկա՞ծ ես . . .

Տուտան.

(Խուլ արդողմունք). Ի՞նչ . . . Ի՞նչ ես ասում...

Մարիամ.

Խորամանկութիւն չանես, հա՛...

Շուշան.

(Կարծես յարձակուել ուզելով) Խորամանկը դու ի՛նքդ ես... (Սկսում է դողդողալ. պատկեր):

Մարիամ.

Շուշան ջան... Ուրեմն... ինձ չե՞ս խաբում, հա՞։ Չես խաբո՛ւմ. ասա՛, սիրելի՛ս, չես խաբո՛ւմ։..

Շուշան,

(Լալիս է) Հը՛, հը՛, հը՛։

Մարիամ.

Աղջի... համբերիր, դու...

Շուշան.

(Կամացուկ յեռ մղելով) Գնա՛... (պատկեր): (Լալագին) Մի քանի կտոր չոր ընծայեցիր, դարչելի մարդուս գործի դրիր...

Մարիամ.

Դարչելի մա՛րդդ...

Շուշան.

Ի հարկէ։ Դարչելիների դարչելի՛ն։

Մարիամ.

(Մեկուսի) Կը դժուեմ, հիմի եւ եթ կը դժուեմ։ (բարձր) Շուշան...

Շուշան.

(Լալագին) Հիմի էլ չես խղճահարւում եւ եկել ես, երեսիս մի այնպիսի սեւ մուր քսում, որ... (շաց) հը՛, հը՛, հը՛։ Կա՛ց, թող մէկ Խաթուն մայրիկս գա՞։ Տես քո գլխին ի՞նչ վայ կուտայ,—հը՛, հը՛, հը՛։ (Պատկեր):

Մարիամ.

Շուշան ջան, լաց մի՛ լինի՛ր։ Կաց այստեղ։ Ես իսկոյն կը վերադառնամ։ (Գնում է եւ բարձրաձայն). Դաւաճանութի՛ւն, խարդախութի՛ւն։

Շուշան.

(Երկար միտֆ անելուց յետոյ) Ինչի՞ այս կնիկը ինձ այս խօսքն ասա՞ց...։ Ցիրաւի, չլինի՞ թէ Հռոմսիմն ու Սուքիաս աղան... իրանց խօսքերը մէկ են արել, որ ինձ... վո՛ւյ, ձիւնն իմ գլխին։ (Ցնցւում եւ յետոյ միտֆ անում). Քիրոքն այդ տեսակ զալաթ անի՞... Չեմ կարծում։ (Խեղդուկ ձայնով) Քիրոքն, այդպէս բա՞ն...։ Անկարելի է...։ Նա ամենեւին չէր էլ հարբում, որ ասեմ թէ հարբած ժամանակ... ոչ, ոչ... ես նրա բերանից ամենեւին արաղի հոտ չեմ առնում, ոչ ցերէկները, ոչ էլ... (շուրջը նայելով) ամօթ է ասել, գիշերները։ Չէ՛... Հռոմսիմ արյան տեղն բան չուռ ու մուռ տուեց։ Նա իմ առաջին հազար տեսակ տաք ու պաղ բաներ փչեց, որ ինձ խելքից հանէ, (Մտածում է):—Ա՛յ դու (գրող է չափում) գեսինը մանես, գեսինը. սեւ օձ դու, սեւ օձ։ Քա՛, տեսնո՞ւմ էք այս քաղաքի մէջ ինչ տեսակ անօրէն, անաստուած

մարդիկ կան։—Մէկն էլ այն հաստավիզ, հաստա-
փոր Սուքիաս աղան . . . :Քա՛, ես էլ ասում եմ, թէ
ինչի՞ համար ամեն անգամ ժամ գնալիս, այդ չուն
քօփակը միշտ դիմացս է ելնում եւ չան աչքերը
այսպէ՛ս չռած, նայում է վրաս, նայում, ինչպէս
դմակ իւղի վրայ՝ գող կատուն։ (Իբրեւ յարձակ-
ւում է). Հը՛մ զամփարա քօփակ . . . : Հապա Հո-
ռոմսիմի լեզո՞ւն, լեզո՞ւն։ Ջուլհակի մաքոքի նման
անդադար չուռ ու մուռ է գալիս բերանի մէջ. բը՛զ,
բը՛զ, բը՛զ, բը՛ռ, բը՛ռ, բը՛ռ, բը՛զ, բը՛զ, բը՛զ, բը՛ռ,
բը՛ռ, բը՛ռ, ը՛մ, ջադո՛ւ դու։ (Մտածում է): Մի քիչ
առաջ էլ քարգահը ջոկեցինք, պրծանք։ Ուզում եմ
ինձ հետ վերցնե՛լ։ Ասում է, ամօթ է։ Մի ժամ յե-
տոյ,—ասում է, նորից արի այստեղ։ Միասին զա-
կուսկա անենք, պրծնենք։—Է՛հ։ Յետոյ, ասում է,
միասին վեր կանենք, կը տանենք ձեր տուն։
Սատի՞ն։ Սատի հէրն անիծա՞ծ, ա՛նասատուած։ Ջադու
պառաւ, դու։ Դու եւ Սուքիաս աղան, երեւի, խօս-
քերդ մէկ ամանի մէջ էք դրել, որ խորամանկ, գող
աղուէսի նման կամա՛ց, կամա՛ց մեր հաւաբունին
մօտենաք եւ . . . (յարձակւում է). ա՛յս բոպէիս
կացինը կը վերցնեմ եւ երկուսիդ միասին չան սա-
տակ կանեմ . . . (Շտապում է դուրս, յետոյ մտնում.
Հիրամը շտապով եւ կիսաս պոռաս գլխին ձգում եւ
դուրս գնում: Տեսարանը փոխւում է Հոռոմսիմի
տունը, կէս ասիական եւ կէս եւրոպական ճաշա-
կով կահաւորուած, թեւեւ ոչ շքեղ, բայց ոչ էլ աղ-
քատ։ Պատի մի անկիւնում մի շիրմայ։ Սուքիաս եւ
Հոռոմսիմ խօսում են։ Երկուքն էլ յուսահատ են
երեւում):

ՏԵՍԻԼ Զ.

Հոռոմսիմ եւ Սուքիաս.

Հոռոմսիմ.

Դու ինձ ասա՛, յիրաւի. կնիկդ գլխի՞ է ընկել,
թէ դու մենակ երեւակայում ես։

Սուքիաս.

Էլ երեւակայութիւնս ո՞րն է, է՛հ։ Դուրս է
գալիս, որ ես երազիս միջին ինքս ինձ մատնել եմ,
իսկ եւ իսկ մատնել։ (Ծիծաղ) Հա՛, հա՛, հա՛։

Հոռոմսիմ.

Ուրեմն լաւ չի լինել, եթէ առ այժմ յետաձ-
գենք . . .

Սուքիաս.

Ինչո՞ւ համար։

Հոռոմսիմ.

Մինչեւ որ . մէկ ես ինքս էլ կնկանդ մօրուս-
քի տակիցն անց կենամ . . .

Սուքիաս.

Աւելորդ է։ Դու ինչ որ անելու ես արա պրծիր։

Հոռոմսիմ.

Սիր վախենում եմ, որ կացինը յանկարծ քա-
բին կը կպցնենք . . .

Սուքիաս.

Աղջի, անպիտան, դու չէիր, որ չտապեցնում
էիր . . .

Հռոմմիմ.

Ճշմարիտ է. բայց հիմի որ ասում ես . . .

Սուֆիաս.

(Զարացած) Ո՛ւֆ, Հռոմմիմ. . .

Հռոմմիմ.

Լաւ, լաւ, դէհ մի չարանալ, նա ինքը հէնց շուտով գալու է։

Սուֆիաս.

Գնա՛ եւ շտապեցրու։ (Մանի է գալիս եւ յետոյ շիրմայի ետեւը մտնում):

Հռոմմիմ.

(Գնալով) Սիրաս լաւ բան չէ վկայում. (գնում է. հանդիպում է Շուշանին):

ՏԵՍԻԼ Է.

Սուֆիաս Հռոմմիմ եւ Շուշան.

Շուշան.

Անպիտան, գարշելիներ։

Հռոմմիմ.

Շուշան Ջան, ի՞նչ է պատահել։

Շուշան.

Ներս գնանք. քեզ բան եմ ասելու։

Հռոմմիմ.

Գալիս եմ. դու մտիր։

Շուշան.

(Մտնելով) Դէհ եկ։

Հռոմմիմ.

Սպասիր. գալիս եմ։ Հիւրի եմ սպասում։

Շուշան.

Հիւրի՞։ Հիւրդ ո՞վ է։

Հռոմմիմ.

Այն գրողի խեղդածը։

Շուշան.

Գրողի խեղդածն ո՞վ է։

Հռոմմիմ.

Քա՛, աղջի, մեր Սուքիաս աղան։

Շուշան.

Սուքիաս աղա՞ն... (ուզում է դուրս փախչել):

Հռոմմիմ

(Իսկոյն դուռը վրայ քաշելով հազում է):

Շուշան.

Սուքիաս աղա՞ն, Սուքիաս աղա՞ն։ (յուզմունքով):

Հռոմմիմ.

(Շիրմայի տակից դուրս գալով) Հա՛, Շուշան Ջան, Սուքիաս աղան։

Շուշան.

(*Ճչալով*) *Օ՜յ։ Ասատուած իմ։* (*Դռան մօտ վազ տալով եւ բակեղով*) *Բաց արա, եթէ ոչ կը կոտրեմ։*

Սուֆիաս.

Շուշան Ջան, մի՛ վախենար։ (*Մօտենում է*)։

Շուշան.

(*Ցեռ է մղում*) *Կորի՛ր։*

Սուֆիաս.

(*Բռնում է եւ համբուրում*)։

Շուշան.

(*Պաշտպանւում եւ աղաղակում է*) *Քերոբ, Խաֆուն մայրիկ, Մարիամ խանում...*

(*Դուռն յանկարծ բացւում է եւ Մարիամ Հոռոմսիմի ծամերից բռնած ներս է բերում. պատկեր*)։

ՏԵՍԻԼ Ը.

Մարիամ.

(*Ոժգալից հայեացք է ձգում Սուֆիասի վրայ*)։ *Հիմայ... ամեն ինչ... կատարեալ է։*

Սուֆիաս.

(*Սմքում է*)։

Շուշան.

Հեկեկում է)։

Հոռոմսիմ.

(*Մղկտում է*)։

Մարիամ.

(*Հոռոմսիմի մազերը թողնելով եւ կրնգալից*), *Ուրեմն բռնութիւն է՞լ...*

Սուֆիաս.

(*Աչքի տակով նայելով, քայլ առ քայլ յետ յետ է գնում*) *Մարիամ Ջան...*

Շուշան.

(*Հեծկլտում է*)։

Մարիամ.

Ապրիս, Շուշան Ջան, գոբանան։ Արի գնանք (*թեւքն է ընկնում եւ տանում*) *իսկ ձեր երկուսի հետ՝ ես իմ հաշիւը յետոյ կը վերջացնեմ։* (*Գնում են*)։

Սուֆիաս.

Հոռոմսիմ, բաս հիմի՞։

Հոռոմսիմ.

Հիմի, դէհ մեռնիմ քեզի, երկուսիս էլ բանը բուրդ է։

Վարագոյր.

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Սուֆիասի տան կաբինետը: Նա նստած է բաց պատուհանի առաջ եւ թունդ ծխում է: Մէկ էլ դուրս նայելիս՝ աչքերը պլշացնում, նայում է եւ յանկարծ վեր կենալով գնում է դռան մօտ եւ կանչում):

ՏԵՍԻԼ Ա.

Սուֆիաս.

Գասպա՛ր, ա՜յ տղայ Գասպա՛ր. խո՞ւլ ես, չե՞ս լսում։

Գասպար.

(Դրսից). Աղա ջան, ինձ էք կանչո՞ւմ։

Սուֆիաս.

Հա՛. շուտ արի այստեղ։ (Գնում է պատուհանի մօտ եւ միմիայն գլուխը կիսովի դուրս արած՝ նայում է: Գասպար մտնում է):

ՏԵՍԻԼ Բ.

Սուֆիաս եւ Գասպար.

Գասպար.

Աղա ջան, ի՞նչ էք կամենում։

Սուֆիաս.

Արի՛, այստեղ։ (Ինքը թաց կենալով): Ա՜յ, մտիկ արա՛. փողոցի ծայրում մէկն երեւում է։

Գասպար.

Աղա՛ ջան, վարպետ Քերոբն է, չէ՞։

Սուֆիաս.

Հա, նա ինքն է։ Եթէ այստեղ եկաւ, կասես, աղան տանը չէ։ Եթէ ասաց, որ պատուհանից ինձ տեսել է։ Կասես, տանն էր, գնաց։ Տուն չթողնես։

Գասպար.

Գլխիս վերայ։

Սուֆիաս.

Եթէ կամեցաւ անպատճառ մտնել . . .

Գասպար.

Ձեմ թողնիլ։

Սուֆիաս.

Բայց զալմաղալ չհանես։

Գասպար.

Եթէ ստիպե՞ց։

Սուֆիաս.

Թող մտնի։

Գասպար.

Բարի։

Սուֆիաս.

Այն ժամանակ դռնապանին իմ եռեւից կ՚ուղարկես։

Դասպար.

Հրամանքդ ո՞բաեղ կը լինես։

Սուֆիաս.

Ա՜յ, մեր փողոցի եաքեւի հրապարակի վրայ։

Դասպար.

Շատ բարի։

Սուֆիաս.

(Դրասեղանի վրայի թղթերն, հաշուեմատեանները շտապ շտապ հաւաքում է, դնում զզրոցների մէջ։ Մի զզրոցից էլ մի քանի ծրար թղթադրամ է հաւաքում, կոխում գրպանները։ Զզրոցները կողքում եւ գնում)։ Բակի դուռը բա՞ց է։

Դասպար.

Հրամերէք։ Բաց է։

Սուֆիաս.

Դէ՜հ, արի, դռան առաջ կանգնիր։ (Գնում է) Շո՛ւտ։

Դասպար.

Աղայիս բանը բուրդ է, հա՜։ Տեսէք թէ՝ մէկ ինչին բանի պատճառով ի՞նչպէս երկինք գետինք իրար խառնուեցան։ Վերջն Աստուած բարի անէ։ (Գնում է. քեմի վերայ փոքր ինչ լուրթիւն է տիրում։ Յետոյ դրսից լսւում են Քերոբի եւ Դասպարի ձայները)։

Դասպար.

(Դրսից). Ախր քեզ ասում եմ, տանը չէ։

Քերոբ.

Ես փողոցից տեսայ։ Պատուհանի առաջ նըստած էր։

Դասպար.

Տանն էր, բայց գնաց։

Քերոբ.

Ո՞ւր գնաց։

Դասպար.

Չեմ իմանում։ Է՛յ, ո՞ւր ես գնում։ Չեմ թողնում։

Քերոբ.

Բաւա՛ս, քեզ ասում եմ, թո՛ղ ինձ։

Դասպար.

Անկարելի է։

Քերոբ.

Իսկ այս դագանակը գլխիդ վրայ փչուր փչուր անելը խո՞ կարելի է։ Հը՛մ, թող։ Եթէ ոչ՝ ա՜յ։

Դասպար.

Բայց որ եւ է բան չվերցնես, հա՜։

Քերոբ.

Ուզո՞ւմ ես, արի, դու էլ ինձ մօտ նստիր։

Դատպար.

Ես գործ ունեմ։

Քերոբ.

Դէ՛հ, ուրեմն բարի ճանապարհ։ (Փայտը կռան ետեղուկ տուած՝ կաղալով մտնում է):

ՏԵՍԻԼ Գ.

Քերոբ.

Կը փախչես՝ եա՛հ։ Բայց հոգ չէ։ Էլի կուգաս։ (Կաղալով գնում եւ բազկաթոռի վրայ նստում է ու խոր շունչ քաշում): Օ՜ֆ, մայրիկ ջան։ (Միտֆ է անում): Շուն չա՛ն որդի. յոյզ հարստութեանդ վրայ դրած՝ այդ տեսակ օյինբազութիւններ ես ա՜նում, հա՞։ (Զեռքը կոշիկի տակին խփելով): Ա՛յ քո հարստութիւնը։ Ոտքերիս տապանը։ Հարամզադա՛, սկզբում ինձ լաւութիւն արիր, որ վերջում էլ այս օյինը խաղաս մեր գլխին, հա՞։ Տե՛ս, ես քո օխտը պորտի հէրը կանիծե՞մ, թէ չէ։ Ես ասում էի քանի սաղ ու կենդանի ենք, մեր առ ու ապուռով ապրենք։ Աստուած չկամեցաւ։ Է՛հ։ Կամք տեառն օրհնեալ լիցի։ Հիմի երբ որ բանն եկաւ, այս կէտին հասա՞ւ, ես էլ, ուզեմ, չուզեմ, պէտք է իմ ընտանիքիս պատիւը պաշտպանեմ։ Եթէ ոչ՝ էլ այս գդակը ինչի՞ եմ ծածկում։ Հը՛մ. խեղճ Սուքիաս աղա՛, մէկ էլ տեսար, էլ չկա՛յ... (փչում է կամացուկ օդի մէջ) փֆո՜ւ, փֆո՜ւ։ Դէ՛հ արի. չուտ արի։ Մէկ երես առ երես խօսենք, յետոյ տեսնենք, որը որոց է։ (Մտածում է): Հազար անգամ ափսոս չէ՞ր

մեր գիւղը.—ես ու իմ Աստուածը։ Ծո՛, աղբար. այս անիծած քաղաքն եկանք, չեկա՞նք,—ամեն կողմից անբաղդութիւն անբաղդութեան վրայ։ Թի՛։ Ի՞նչ լաւ եղաւ, որ խեղճ հայրս չուտ մեռաւ, պըրծաւ։ (Լռութիւն): Ես էլ մի օր այսպէս, մի օր այնպէս։ Է՛հ, փառք Աստուծոյ, լաւ վատ եօլայ էինք գնում։ Արհեստաւոր մարդու վաստակն ի՞նչ պէտք է լինի։ Այնքան որ, ճոին աղբիւրի նման, օրական 5—10 շահի գալիս էր, մենք էլ մեր անուշովն ու ապուռովը ապրում էինք։ Միւս կողմից՝ մայրիկս ու կնիկս էլ, քչից շատից, ինձ օգնում էին։ Բայց աղքատին ո՞վ է տուել արքայութիւն։ Մի օր էլ՝ յանկա՛րծ, մի մաշինա... Ա՛յ, անիծեալ գլեզ։ Ի՞նչ ասել կուզի, որ լաւ բան է։ Բարաքեալա՛հ հնարողին։ Մարդը մի այնպիսի խելացի բան է չինել, որ օրական քառասուն, յիսուն վարպետից աւելի գործ է կատարում։ Բայց, որ հարիւրաւոր վարպետներ հացից զրկուեցան,—սրան ի՞նչ էք ասում։ Հէ՞։ Ա՛յ եղբայր, տանե՛նք, այդ մաշինային էլ տանենք։ Աշխարհի կանոն է՝ ով չուստ, փորը կուշտ։ Բայց թէ բանը մինչեւ այնտեղ հասցնել, որ հարամ զադա չուն չան որդու մէկը գայ, հազար տեսակ օյինբազութիւններ սարքէ, հեռի լսողաց, զահփայ հացթուխին մէկի ձեռքով իմ կնկայ պատիւը չօշափէ,—ինձ էլ այս օրին ձգէ՛,—ա՛յ ես ձեր... (Մտնում է պրիսաւը: Քերոբ շփոթուում է: Գլխարկը հանում, ոտքի կանգնում եւ խորը գլուխ տալիս):

ՏԵՍԻԼ. Դ.

Քերոբ եւ Պրիսաւ.

Պրիսաւ.

Ա՜յ տղայ, դու ո՞վ ես։

Քերոբ.

Աղա Ջան. ես վարպետ Քերոբն եմ։

Պրիսաւ.

Ինչի՞ ես եկել այստեղ։

Քերոբ.

Սուքիաս աղին հետ քիչ խոսելիք ունիմ։

Պրիսաւ.

Չե՞ս տեսնում, որ նա այստեղ չէ՞։

Քերոբ.

Աղա Ջան, երեւի կուգայ։ Կարծեօք, ծառան գնաց կանչելու։

Պրիսաւ.

Սուքիաս աղի հետ խոսելիքդ ի՞նչ է։

Քերոբ.

Ընտանեկան գործ է։

Պրիսաւ.

Ի՞նչ գործ։

Քերոբ.

Այնպէս ...

Պրիսաւ.

Ինձ չե՞ս ուզում յայտնել։

Քերոբ.

(Գլուխը բարձրացնելով)։ Ցը՜։

Պրիսաւ.

Այն ժամանակ տէրտէրներին գիմիր։

Քերոբ.

Տէրտէրների խելքի բանը չէ։

Պրիսաւ.

Կենսխատորիային գիմիր։

Քերոբ.

Աղա՛ Ջան, մեռնիմ քեզի, ես հօ պսակի հրաման չե՞մ ուզում։

Պրիսաւ.

Ուրեմն դատաստանին գիմիր։

Քերոբ.

Աղա՛ Ջան, ես իմ ձեռքերովս իմ դատաստանը կարող եմ տեսնել։

Պրիսաւ.

Ա՜յ տղայ, դու կնիկ ունի՞ս։

Քերոբ.

Ունիմ։

Պրիսաւ.

Հօ... Սուքիաս աղան...

Գեորք.

(Ցանկարծական եւ զարմացական հայեացք):

Պրիսաւ.

Մի՛ վիրաւորուիլ։ Ես...

Գեորք.

Քեզ այդ բանն ո՞վ ասաց։

Պրիսաւ,

Լսել եմ։ Փողոցում խօսում են։

Գեորք.

Գլուխները մեծ քարոզն են տալիս, շուն չան որդիք։

Պրիսաւ.

Մի՛ տաքանա՛լ, կնկանդ հետ պատահածը ոչինչ բան է։

Գեորք.

(Զարմացմամբ) Ի՞նչ

Պրիսաւ.

Այստեղ այդ տեսակ բաներ շատ են պատահում։

Գեորք.

(Գլուխը շարժելով) Երեսներդ ճերմակ։

Պրիսաւ.

Դու ինձ հաւատա՛, որ դա հասարակ բան է։ Դրա համար չարժէ...

Գեորք.

Աղա Ջան, հրամանքդ էլ՝ կնիկ ունի՞։

Պրիսաւ.

Ունիմ։

Գեորք.

Է՛։ Եթէ շուն չան որդի՝ հարամզադայի մէկը գայ, զօռով քո կնկանը պակնէ...

Պրիսաւ.

(Բարկութեամբ) Ա՛յ տղա՛յ...

Գեորք.

Սրտովդ չեղաւ, հա՞։

Պրիսաւ.

Դու ի՞նչպէս ես համարձակւում...

Գեորք.

Ի՞նչ իշեմ համարձակուիլ։ Ի՛նչ։ Քո աչքը աչք է, ոտքը՝ ոտք է, իմը՝ տոպիկ, պատի ծա՞կ է։

Պրիսաւ.

Ի՞նչ. ի՞նչ ես ասում։

Գեորք.

Այն եմ ասում, որ երբ անպատուելու հերթ՝

քո կնկանն է գալիս, ա՜յ, տես, հրամանքդ ինչպէս, —(պիտսարին նմանելով) «ինչպէ՞ս ես համարձակու�մ»։ Իսկ երբ հերթը իմ կնկանն է գալիս,— (պրիտսարին նմանելով). ոչի՜նչ. հասարակ բան է։ Ի՞նչն է հասարակ բան։ Չե՞ս ամաչում։ Թէ՞, կարելի է, ինձ իչի տե՞ղ ես դնում։ (Զարացած սկսում մնալ գալ)։ Ցը՜մ, ցը՜մ, ցը՜մ։

Պրիտսաւ.

Նստի՛ր, տկար մարդ ես։

Գեորք.

Ինչ եւ իցէ (Նստում է)։

Պրիտսաւ.

(Դռան մօտ գնալով) Ա՜յ աղայ, այնտեղ ո՞վ կայ։ Սրի այստեղ։

Գեորք.

(Մեկուսի) Հապա՞ փորձիր զօռով ինձ այստեղից հեռացնե՞լ

(Գասպար մտնում է)։

ՏԵՍԻԼ Ե.

Առաջինները եւ Գասպար.

Պրիտսաւ.

Խանումիդ ասա՛, գայ այստեղ։

Գասպար.

Աղա Ջան, խանումս տանը չէ։

Պրիտսաւ.

Ո՞րտեղ է։

Գասպար.

Ուրիչ տուն է գնացել։

Պրիտսաւ.

Ո՞ւմ տունը։

Գասպար.

Իրան տունը։

Պրիտսաւ.

Ի՞նչպէս թէ իրան տունը։

Գասպար.

Աղա Ջան, խանումս ազից խռովեցաւ։ Գնաց իրան համար ուրիչ տուն վարձեց։

Պրիտսաւ.

(Մեկուսի) Вотъ тебѣ разъ. (Գասպարին) *Ձեռաց կառք նստի՛ր. գնա՛ իմ կողմից ինդրուիր, թող անպատճառ գայ։*

Գասպար.

Գլխիս վրայ (գնում է)։

Գեորք.

Ա՜յ, հիմի տեսա՞ր։ (Ուզում է վեր կենալ)։

Պրիտսաւ.

Նստի՛ր, նստիր։

Քերոբ.

Շնորհակալ եմ։ (Նստում է)։ Եթէ որ չուն չան որդի Սուքիաս աղա է, թէ ինչ զահրուզուխում է,—մարդ լինէր, կնիկը այսպէս փառաւոր տունը թողած, կը հեռանա՞ր։

Պրիսաւ.

Ա՛յ տղայ, դու Սուքիասի կնկան ճանաչո՞ւմ ես։

Քերոբ.

Լա՛։

Պրիսաւ.

Ի՞նչպէս կնիկ է։

Քերոբ.

Հրամանքիդ ի՞նչպէս հասկացնեմ։ Միեւնոյն է թէ՝ անմեղ, մատղաշ գառը տանես, չուն ու գայլի առաջ ձգես։ Մեռնիմ քեզի, Մարիամ խանումին ի՞նչի ես կանչում։

Պրիսաւ.

Ես էլ նրա հետ խօսելիք ունիմ։

Քերոբ.

Ի՞նչ։ Չլինի՞ մտքումդ գրել ես հաշտեցնել նրա՞նց։

Պրիսաւ.

(Ժպտաձայն) Որ հաշտեցնեմ էլ՝ ի՞նչ վնաս։

Քերոբ.

Օը՜մ, ցը՜մ, ցը՜մ։ Այդպէս բան չանե՜ս։

Պրիսաւ.

Ինչո՞ւ։

Քերոբ.

Յետոյ, ահեղ դատաստանի առաջ պարտական կը մնաս, ա՛յ։ Ընտանիքի տէր ես։ Ափսոս ես։

Պրիսաւ.

Ի՞նչպէս, ա՛յ տղայ։

Քերոբ.

Խեղճ կնիկը հազիւ իրան անձն ու հոգին ազատել է, դու հիմի պէտք է բերես նորից դժոխքի մէջ ձգե՞ս։ (Զեռքը շարժելով) ցը՜մ, ցը՜մ։ ցը՜մ։

Պրիսաւ.

(Նստում է եւ մեկուսի)։ Քիչ խօսացնեմ։ (բարձր) Վարպետ Քերոբ, ես լսել եմ, որ Սուքիասը քո կնկանը մենակ համբուրել է։ Զարժէ դրա համար . . .

Քերոբ.

Աղա ջան, ամօթ քո տղամարդութեանը։ Դեռ թագաւորի էլ ղուլլուղ անող ես . . .

Պրիսաւ.

Վարպետ Քերոբ, կնիկդ հիմի ո՞րտեղ է։

Քերոբ.

Մայրս վերցրեց, մեր գիւղը տարաւ։

Պրիսաւ.

Դէհ գու էլ այստեղից գնա՛։

Քերոբ.

Ի հարկէ կերթամ։ Դեռ մէկ Սուքիաս աղին տեսնեմ։

Պրիսաւ.

Ա՛յ տղայ, չլինի՞ մտքումդ մի վատ բան ունիս դրած։

Քերոբ.

(Մեկուսի). Այդ արդէն իմ գիտնալիքն է։ (բարձր) Չէ՛, աղա ջան։

Պրիսաւ.

Հը՛մ. քեզ ու քեզ ի՞նչ էիր փնթփնթում։

Քերոբ.

Ոչի՛նչ։ Հրամանքիդ սաղութիւնն էի հարցնում։

Պրիսաւ.

Քեզ բան եմ ասում, հա՛. եթէ որ օրէնքի հակառակ մի գործ բռնես։

Քերոբ.

Չէ, աղա ջան, ես օրէնքից դուրս եկող մարդ չեմ։

Պրիսաւ.

Յետոյ, ձեռքիցս չես պրծնիլ, հա՛։

Քերոբ.

Իմանում եմ, որ չեմ պրծնիլ։ Աղա ջան, քեզնից մի բան հարցնեմ։

Պրիսաւ.

Ի՞նչ բան։

Քերոբ.

Օրէնքը թոյլ կուտա՞յ, որ չան մինը գայ եւ...

Պրիսաւ.

Շատ բան։ Դրա համար ուրիշ կարգ ու կանոն կայ... Եթէ գու համարձակուիս...

Քերոբ.

*Աղա ջան, եթէ որ հրամանքդ այդքան վախկոտ մարդ ես, գնա՛, էլ այստեղ մի՛ մնալ։ Մէկը կամ միւսը եթէ քեզ մի բան հարցրե՞ց,—ասա՝ ոչ լսել եմ, ոչ տեսել եմ, ոչ էլ մի բան իմանում եմ։ Ռուսի ատքազ ասածը չե՞ս լսել,—*ничего не знаю,—*բիլմէզ։ Դէհ գնա, զուրբան։ Առանց այն էլ գործ շատ կունենաս (Պրիսաւը ժպտում է։ Մտնում է Մարիամ)։*

ՏԵՍԻԼ Զ.

Առաջինները եւ Մարիամ.

Մարիամ.

(Պրիսաւիին ձեռք տալով). Բարեւ ձեզ։

Պրիսաւ.

(Գլուխ տալով). Ներեցէ՛ք, տիկին...

Մարիամ.

(Պրիսաւիին աջոն ցոյց տալով). Խնդրեմ։ Հաւմեցէք։ (Բերոբին) Ա՜յ մարդ, դու ինչի՞ ես դուրս եկել հիւանդանոցից։

Բերոբ.

(Որ կանգնած եր, ակնածութեամբ) Խանում ջան, բժիշկն իրաւունք տուեց։

Մարիամ.

Ի՞նչպէս։ Բոլորովի՞ն։

Բերոբ.

Օրը, ասաց, լաւ օր է։ Գնա՛, մի քանի ժամ ման արի՛ մաքուր օդում։

Մարիամ.

Երեւի, նորից զահլան տարար։

Բերոբ.

Խանում ջան, դէհ փակուած օդի մէջ ախր հոգիս դուրս եկաւ, է՜հ։

Մարիամ.

(Պրիսաւիին) Պարոնը կարո՞ղ է ձեր ներկայութեամբ նստել...

Պրիսաւ.

Խնդրեմ, ձեր տունն է։ Վարպե՛տ նստիր։

Բերոբ.

(Չի նստում):

Մարիամ.

Նստի՛ր։ (նստում է):

Բերոբ.

(Խոր եւ շուռ թառանչ: Նստում է):

Մարիամ.

Ինձնից ի՞նչ էիք կամենում։

Պրիսաւ.

Տիկի՛ն, ձեր ամուսինը ինձ խնդրեց...

Մարիամ.

Ի՞նչ։

Պրիսաւ.

Խնդրեց որ... (վեր է կենում) հաւմեցէք այս կողմը...

Մարիամ.

Խնդրեմ, (պրիսաւի հետ մի կողմն են գնում եւ նշանացի միմեանց հետ խօսում): Ա՜յ, հաւմեցէ՛ք,

այս թուղթը կարդացէք եւ կիմանաք ամեն բան (Ծոցից մի թերթ հանում եւ տալիս է. իսկ ինքը գնում է Բերոքի մօտ: Վերջինս ուզում է վեր կենալ: Մարիամ չէ թողնում եւ աթոռ վերցնելով, նստում է Բերոքի մօտ եւ շուռ խօսում ցաւակից մտերմութեամբ):

Դրիսաւ.

(Թերթը շտապ շտապ կարդալուց յետոյ): Տիկին, դուք ուրեմն ինքներդ ձեր ամուսնոյն դատի՞ էք մատնում։

Մարիամ.

Այո՛, պարոն, այս վարպետի ոտքը դիպմամբ վնասելու եւ սրա կնոջ բարի անունը արատաւորելու համար։

Դրիսաւ.

Եւ դուք յոյս ունէք, որ բժիշկը եւ ձեր մատնանիշ եղած միւս վկաները ձեր մեղադրանքները կը հաստատե՞ն։

Մարիամ.

Այդ մասին ես անտարակոյս եմ։

Դրիսաւ.

Այս վարպետն էլ այժմ ձեր խնամատարութեան տակ է գտնուում։

Մարիամ.

Հրամերէք։

Դրիսաւ.

Եւ երաշխաւոր էք, որ սա անկարդ մարդ չէ։

Մարիամ.

Միանգամայն երաշխաւոր եմ։

Դրիսաւ.

Իսկ ձեր ամուսինը կարծում էր . . .

Մարիամ.

Խնդրում եմ հաւատալ ինձ եւ վստահ լինել, որ . . .

Դրիսաւ.

Այս խնդիրը դուք արդէն պրոկուրորին տուա՞ծ էք։

Մարիամ.

Իւր գլուխատան դռան առաջին հանդիպելուց։ Գնում էր մի ինչ որ պաշտօնական ճաշկերոյթի։

Դրիսաւ.

(Ժամացոյցին նայելով) Հրամերէք. այսօր քաղաքային պարտեզում հրաժեշտի ճաշկերոյթ կայ։

Մարիամ.

Այդ պատճառով էլ խնդիրս վաղը պէտք է ներկայացնեմ։

Դրիսաւ.

Այդ ձեր կամքն է։ Դուք ուրեմն ասում էք որ այս վարպետը . . .

Մարիամ.

Կրկնում եմ։ Անհոգ եղէք այդ մասին։ Ես ինքս այս բոպէին սրան հիւանդանոց կուղարկեմ կրկին։

Պրիսաու.

Ուրեմն՝ մնաք բարով։

Մարիամ.

Գնաք բարով, պարոն։

Պրիսաու.

(Դղուխ է տալիս եւ գնում։ Դռան դրսի կողմում հանդիպում է Սուֆիասին)։ Հո՛ւ, Սուքիաս, քո բանը բուրդ է։

Սուֆիաս.

(Դրսից) Ինչպէ՞ս։

Պրիսաու,

(Դրսից) Ա՛յ, կնկանիցդ կիմանաս։ (Գնում է։ Սուֆիաս մնում է)։

ՏԵՍԻԼ Է.

Մարիամ, Գերոբ եւ Սուֆիաս

Սուֆիաս.

Մարիամ, բարով։

Մարիամ.

(Իբրեւ թէ չէ լսում եւ աթոռի վրայ նստում է տխրադէմ)։

Գերոբ.

(Մեկուսի)։ Շան երեսին մտիկ, դեռ բարեւ էլ է տալիս։

Սուֆիաս.

Օ՜հ, վարպետ Գերոբ, բարով։

Գերոբ.

(Զսպուած բարկութեամբ եւ հեգնութեամբ)։ Բարով, հազար բարի, Սուքիաս աղա։ Ներիր ինձ, ուրիշ . . .

Սուֆիաս.

Նստի՛ր, վնաս չունի։

Մարիամ.

(Հեգնօրեն) Հը՜մ։

Սուֆիաս.

Մարիամ, պրիստաւն ինչի՞ էր եկել։

Մարիամ.

(Արհամարհոտից ձայնով) Չեմ իմանում։

Գերոբ.

(Հեգնօրեն) Պրիստաւին ձեր հրամանքը չէի՞ր ուղարկել։

Սուֆիաս.

Ոչ։

Մարիամ.

(Մեկուսի) Տէր իմ եւ Աստուած։

Գերոբ.

Աստուա՛ծ ես՝ հրամանքդ չէիր ուզարկել։

Սուրիաս.

Ո՛չ. ո՛չ։

Գերոբ.

(Ցասմամբ) Սակ օխտը պորան անիծե՛մ (ակնածում է Մարիամից)։

Սուրիաս.

(Կեղծ արտասուքներով) Ա՜յ ազայ...

Գերոբ.

Մարիամ խանում, ինդրեմ հրամանքդ զուրս գնա՛, ես ազայի հետ քիչ խօսելիք ունեմ։

Մարիամ.

Զարժէ, արի՛ գնանք։

Գերոբ.

(Պաղատանքով) Մեռնիմ քեզի...

Մարիամ.

Աւելորդ է, գնանք։

Գերոբ.

Շատ եմ խնդրում...

Սուրիաս.

Ինչի՞ չես թողնում, թող խօսի էլի՛։

Մարիամ.

(Արհամարհական դառն հայեացք)։

Սուրիաս.

Եթէ դու նեղանում ես, կարող ես գնալ։

Մարիամ.

(Արհամարհոյից հայեացք)։

Գերոբ.

(Պաղատանքով) Հա՛, Մարիամ խանում, հա՛. գնա՛։

Սուրիաս.

Գնա՛, էլի՞։

Մարիամ.

Ո՛չ. չեմ գնալ։ (Նստում է)։

Գերոբ.

(Մեկուսի). Շատ ախտո՛ռ։

Սուրիաս.

Բարի։ Մնա՛։ Վարպետ Գերոբ... (այլերով զգեստ է որոնում Գերոբի վրայ)։

Գերոբ.

(Հեգնօրեն). Մեռնիմ քեզի. էլ հիմի չեղաւ։ Խանումս...։

Սուֆիաս.

Ի՞նչ բան չեղաւ, այ տղայ։

Գեորք.

Ոչինչ, աղա ջան։

Սուֆիաս.

Ի՞նչ. կարծում ես, վախենո՞ւմ եմ քեզանից։

Գեորք.

(Հեգնօրեն) Չէ՛։ Ինչի՞ պիտի վախենաս, ես ո՞վ, հրամանքդ ո՞վ։

Մարիամ.

Գո՛ղ, սիրտը գո՛ղ։ (Գեորքին) Գնանք, քեզ ասում եմ։

Գեորք.

Հրամանքդ նեղութիւն մի քաշել։ Ես կը գնամ (գնում է եւ ոտքի ցաւ զգալով). Օ՛յ... հի՛ւֆ, հի՛ւֆ։

Մարիամ.

Տնաչէն դու, ի՞նչի էիր դուրս գալիս հիւանդանոցից։

Գեորք.

(Կաղալով գնում է դէպի դուրս եւ խոր հառաչում). Ա՛խ ֆէլէկ, վախ ֆէլէկ [1])

---

[1]) *Ծանօթ. Ճակատագիր։*

Մարիամ.

(Գեորքի ձեռքից բռնելով եւ Սուֆիասին դառնալով). Անօրէն, հո տեսնո՞ւմ ես։

Գեորք.

(Մարիամին) Զարմանում եմ հրամանքիդ վրայ. գայլի գլխին չարակա՛ն։

Սուֆիաս.

(Կեղծ բարկութեամբ) Է՛յ դու, բերանդ քեզ հաւաքիր։

Մարիամ.

(Արհամարհալից հայեացք)։

Գեորք.

(Կրճտալից ատամներով) Գլխիդ ձկան խաչ ես ունեցել, որ խանումս այստեղ է։

Սուֆիաս.

Գնա՛, գնա՛։

Մարիամ.

(Խուլ գայրոյթ)։

Գեորք.

Բարի։ Գնում եմ։ (Գնում է)։

Սուֆիաս,

(Մարիամին) Մի բոպէ կաց. բան ունիմ ասելու։

Մարիամ.

(Քերոբին) Գնա՛ հիւանդանոց։ (Սուֆիասին) Ի՞նչ էք կամենում։

Սուֆիաս.

Խնդրում, աղաչում եմ քեզ՝ վերադարձիր քո տունը։

Մարիամ.

Մենք այլ եւս չենք կարող միասին ապրել։

Սուֆիաս.

Մարիամ ջան, մի այդպիսի չնչին բանի համար...

Մարիամ.

Ինչ որ քեզ համար չնչին բան է,—այն ինձ համար՝ մահացու յանցանք է։ Ինչ որ քեզ համար, դուցէ սովորական բան է եւ տանելի, ինձ համար, միանգամայն անտանելի է իսկա՛յն մահ է։

Սուֆիաս.

Այսքան տարի՝ որ մենք ապրում էինք միասին՝ մի՞թէ...

Մարիամ.

Այո՛, ապրում էինք միասին։ Ես քո կինն էի կոչւում. դու իմ ամուսինը։ Բայց... բաւական է, որքան խաբուեցայ...

Սուֆիաս.

Ես քեզ չեմ խաբել, սիրելիս...

Մարիամ.

Միշտ եւ ես երբէք քո սիրելին եղած չեմ։ Այլ քո սիրելիներն եղած են (ձեռքը աջ ու ձախ շարժելով) ե՛ւ սա, ե՛ւ նա, ե՛ւ երրորդը ե՛ւ չորրորդը...

Սուֆիաս.

Ի՞նչ. ի՞նչ ես ասում...

Մարիամ.

Սիրուհիներդ եմ թւում, որոց գոյութիւնը, դժբաղդաբար, հիմայ հետզհետէ եմ լսում։

Սուֆիաս.

Շառեր, զրպարտութիւններ...

Մարիամ.

Ամենազուտ ճշմարտութիւններ—Զազիր եւ պիղծ դու, գեռ զրանցմով էլ չբաւականանալով դու յանդգնեցար, քո անարգ հացթուխի միջոցաւ, քո անմաքուր ձեռքը մեկնել, մինչեւ անգամ, մի հրեշտականման ընտանիքի անարատ զաւակի վրայ։

Սուֆիաս.

Այդ կէտում միայն իրաւունք ունիս։ Սխալուեցայ։ Մեղայ Աստծոյ։

Մարիամ.

Եթէ Աստուած ուզում է, թող ներէ քեզ։ Իսկ ես՝ երբէք։

Սուֆիաս.

Անգութ դու, անգութ...

Մարիամ.

Գո՜ւթ... (սիրտը թակելով) չկա՛յ... եղածն էլ թռա՛ւ... պրծաւ...

Սուֆիաս.

Եթէ ինձ չես խնայում, գոնէ քո օջախին խնայէ։

Մարիամ.

Թքա՛ծ այն օջախի վրայ, որոյ ներկայացուցիչը քեզ նմաններն են։ Այդ օջախի տիրուհի լինելը՝ ինձ համար ամենամեծ անարգանք է այսուհետեւ։

Սուֆիաս.

Բայց դու մտածիր, որ դու միայնակ չես կարող ապրիլ...

Մարիամ.

Ինչո՞ւ չեմ կարող։ Ի՞նչ ես ուզում դրանով ասել։

Սուֆիաս.

Մի սրդողիլ։ Ես այն եմ ուզում ասել, որ հայի խնդիրը հանաք բան չ'կարծես...

Մարիամ.

Ա՜յ, տեսնո՞ւմ ես այս առողջ ձեռքերը։ Սրանք ինձ միշտ կարող են պահել։ Բայց եթէ ես քաղցած անգամ մնայի՝ քո օգնութեանը չեմ դիմել երբէք։ Այժմեանից այդ մասին՝ կարող ես միամիտ լինել։

Սուֆիաս.

Իսկ հասարակութիւնը ի՞նչ կասէ։

Մարիամ.

Եթէ մեզանում կայ հասարակութիւն, հասարակաց կարծիք,—նա ինձ չի մեղադրիլ։

Սուֆիաս.

Ուրեմն դու ուզում ես ինձ ողջ ողջ սպանե՞լ։

Մարիամ.

Ո՞չ թէ ես քեզ, այլ հէնց դու ինքդ վաղուց ինձ սպանել, պրծել ես արդէն...

Սուֆիաս.

(Զմեղուրեամբ) Փառք քեզ Աստուած...

Մարիամ.

(Ցասմամբ) Աստուածը խառով մնայ գլխիդ, պիղծ դու։ Դու քո զաղրալից կեանքով ո՞չ միայն իմ կեանքն ինձնից խլեցիր, այլ, վերջ 'ի վերջոյ, իմ ամենասուրբ զգացմունքներն եւս՝ քո ստոր, անասնական կրքերին ծառայեցրիր։ Իմ անմեղ առաքինութիւնը՝ ապականութեան, չարագործութեան վերածեցիր։ Իմ բարի անունը՝ ամբոխի բերանի ծամոնը դարձրիր։ Մարդկանց վրայ իմ ունեցած կենդանի հաւատը՝ ապականեցիր եւ փչացրիր դու,

ապականուած եւ փչացած դու։ Եւ այժմ դեռ համարձակւում էլ ես խնդրել, որ ես նորից կենակցիմ քեզ։—Հեռո՛ւ, հեռո՛ւ ցեխից, ապականութիւնից. (յուզուած գնում է հապճեպով):

Սուրիաս.

(Խեղդուկ եւ խուլ ձայնով) Եթէ ե՛ս... յետին դրագրից սկսած մինչեւ կաթողիկոսը, կաշառկով իմ պսակը Մարիամի հետ լուծել չտուի՞։ Եթէ ե՛ս, թէկուզ կէս կարողութիւնս փչացնելով... Քերոբի ողջ օջախը... քարուքանդ չարի,—թո՛ղ էլ ո՛չ Սուքիաս լինիմ, ոչ էլ Սուքիաս ազգ։ (Ժամացոյցին նայելով): Ո՛ւհ. ուշանում եմ։ (Զայրալից դուրս է գնում: Տեսարանը փոխւում է քաղաքային պարտեզը, լի սաղարթալից, եւ խիտ ան խիտ, շարուած ծառերով: Երկու պրիսաւ հաւազգեստները հագած մնան են գալիս դռան առաջ: Պարտեզի շուրջը փայտեայ ցանկեր, որոց շուրջը, դրսի կողմից, հեսաֆրֆիր ամբոխի մեծ բազմութիւն կայ: Պարտեզի մէջտեղում մի ընդարձակ նոսօնդայ, հիւրերի մեծ բազմութիւն, դասաւսանական եւ միւս հիմնարկութեանց ծառայողներ, նոյնպէս եւ քաղաքացիներ,—սեղանի շուրջը նստած ճաշում են: Զիլնուորական երաժշտական խումբը նուագում է: Հեսաֆրֆիրների խիտ բազմութիւն հաւաքուած է պարտեզի շուրջը: Դրանց մէջն է եւ Քերոբը: Ճաշողները շտապնիայի բաժակները բարձրացրած կանչում են, „ուռռայ“: Նուագածուները „տուշ“ են ածում: Քիչ յետոյ Սուրիասի արագընթաց կառքը կանգնում է դռան առաջ: Սուրիաս շտապով իջնում է կառքից:

Եւ բակը հանած ուզում է կառապանին վարձը տալ: Քերոբ ատրճանակով խփում է նրան: Եւ կանչում „ուռռայ“: Սուրիաս վայր է ընկնում: Ոստիկանները սաստիկ սուլում են: Արհաւիրք, հծծիւն. պրիսաւները վազում են դէպի դուռը: Ճաշողները ոտքի են կանգնում տագնապալից):

Վարագոյր:

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Սխալ տող		Ուղիղ
11.	21.	*Բայց է թողած բառս՝*	*Հոռոմսիմ.*
13.	8.	*Հոռոմսիմն*	*Հոռոմսիմին.*
13.	25.	*Գցում է*	*Գնում է.*
86.	17.	*Ում եմ*	*Ասում եմ.*
91.	2.	*Ի՞նչ կալ*	*Ի՞նչ կայ.*
164.	6.	*Սուքիաս*	*Մարիամ.*
170.	7.	*առա*	*Ասա.*
209.	8.	*Ձոին ...*	*Ձոիկ.*
213.	22.	*Հերթ*	*Հերթը.*
217.	2.	*Օը՞մ*	*Ցը՞մ.*

ՀՀ Ազգային գրադարան
NL0341709

37924

29199
2.26